

ԺԱՆՆԱ ՀԱԿՈՒՅԱՆ

Ո՞ՒՐ Է ՍԻՐՈ ՀՐԵՇՏԱԿԱ

Վեպ

Նա, ով հավատում է սիրո կախարդանքին, հրաշքն անպայման կատարվում է, քանզի սերն ինքը հաճելի խելացնորք է: Սիրած անձնավորությունն իրականում սիրող մարդու համար հավասար է ամբողջ մարդկությանը: Սերը նրա համար անգնահատելի արժեք է, որը ոչնչի հետ չի համեմատվում: Այն կարևոր է կարևորագույններից, բարձր է բոլոր տեսակի չափերից ու չափանիշներից: Սերը նույնպես ծարավ է մարդու հանդեպ, հոգեբանական պահանջ նրան ունենալու քո կողքին: Ընդունված է ասել, որ սովորաբար սիրող զույգերի մեջ մեկը սիրում է, իսկ մյուսը թույլ է տալիս, որպեսզի իրեն սիրեն: Եվ միայն բացառիկ դեպքերում է, երբ սերը լինում է փոխադարձ:

Այդպես եղավ Հրաչի և Շուշանի հետ, ովքեր հանդիպեցին իրար յոթ տարի առաջ: Սիրո Աստվածուհու հովանու ներքո կազմվեց նրանց ընտանիքը, իսկ մեկ տարի անց ունեցան որդի: Այդ տարիների ընթացքում նրանք համարյա ամեն օր չէին հոգնում միմյանց սիրո խոստովանություններ անելուց ու միմյանց երջանիկ պահեր պարգևելուց: Ամուսինը միշտ մտածում էր, որ առանց կնոջ սիրո միանգամից կկորցնի սրտի զարկերակը և կկանգնի շնչառությունը: Նա չափազանց խանդում էր Շուշանին, թեև կինն ամեն կերպ փորձում էր ոչ մի առիթ չտալ և պայքարում էր անհիմն խանդի դեմ: Հմայիչ էր Շուշանը: Մասնագիտությամբ դաշնակահար էր, ընդամենը երեսուն տարեկան: Աշխատում էր երաժշտական ուսումնարանում: Ուներ խոշոր սև աչքեր, սպիտակ մաշկ և սև սաթի պես ալիքածև մազեր, որ մերթ Թափված էր ուսերին, մերթ էլ հավաքում էր գլխի վերևում՝ նմանվելով հունական նուրբ քանդակի: Հրաչը նրանից տարիքով մեծ էր հինգ տարով: Նա մասնագիտությամբ ռեժիսոր էր: Բարձրահասակ էր, ուներ խոշոր շագանակագույն աչքեր, հաստ ունքեր, որն առանձին առնականություն էր հաղորդում դեմքին: Խենթության աստիճանի էր հասնում նրա սերը: Եթե այնպես էր պատահում, որ ստեղծագործական մտահղացումներով տարված՝ գիշերները քունը չէր տանում, ապա ծխելու նպատակով դուրս գալով պատշգամբ, կիսաբաց դռնից կարոտով էր նայում քնած կնոջ խաղաղ դեմքին, ներքուստ գոտեպնդվելով, որ այդ ամենը երազ չէ: Հրաչը համոզված էր, որ անգամ Շուշանը եթե իրեն քիչ սիրեր, իր անսահման սերը երկուսին կբավականացներ: Պահերով կարծես ցնդվում էր երջանիկ ակնթարթներից, քանզի Շուշանից լուսարձակվում էր միայն ներդաշնակություն ու բարություն:

Ամառային այդ լուսաբացին Շուշանին անակնկալ էր սպասվում: Երբ արթնացավ, Հրաչն արդեն չկար: Սակայն կողապահարանին մեծ տուփ էր դրված, իսկ անկողնու մոտ հսկայական ծաղկեփունջ, որի մեջ երկտող կար: Նստելով անկողնում՝ նա ամենից առաջ բացեց փոքրիկ ծրարը: Ամուսինը նրան սիրո խոստովանությունից բացի երեկոյան հրավիրում էր ռեստորան՝ ընթրելու: Այդ օրը լրանում էր նրանց համատեղ կյանքի յոթ տարին: Տուփի մեջ երեկոյան նոր զգեստն էր՝ ծիրանագույն՝ երկար փեշով: Շուշանն իսկույն ևեթ փորձեց շորը և կանգնելով հայելու առջև, նկատեց, որ ննջասենյակի հատակին թարմ վարդերի թերթեր էին թափված: Խանդավառությունից նա ինքն իրեն ժպտաց հայելու մեջ, հիշելով, որ այդ օրվան երկուսով ամիսներ առաջ էին նախապատրաստվել: Նայեց պատի ժամացույցին: Հետո զգուշությամբ հանելով շորը, հագավ երկար թևերով կապույտ ատլասից խալաթը և մտավ որդու՝ Կարոյի սենյակը՝ արթնացնելու: Մանկապարտեզ պիտի տաներ նրան, ով սեպտեմբերից դպրոց պիտի հաճախեր: Որդու համար արագ նախաձառյալ պատրաստեց: Կարոն նույնպես լվացվելուց հետո մտավ խոհանոց:

-Արագացրու՛, սիրելիս, այսօր մի քիչ ուշ եմ աթնացել:

-Ոչինչ, մայրիկ: Ես հաճախ չեմ ուշանում: Մեր դաստիարակը ինձ դիտողություն չի անի, - համբուրելով մորը՝ նա նստեց սեղանի մի անկյունում:

-Տղան, մանկապարտեզից հետո քեզ կտանեն տատիկի տուն: Հորդ հետ երեկոյան տեղ պիտի գնանք:

-Ո՛ւշ կվերադառնաք,- հարցրեց փոքրիկ Կարոն:

-Երևի: Բայց մենք կգանք քո ետևից:

Հնչեց հեռախոսի զանգը: Շուշանը մոտեցավ հեռախոսին: Ամուսինն էր:

-Թանկագինս, արդեն արթնացե՞լ ես: Հավանեցի՞ր նվերս:

-Շա՛տ... Շնորհակալ եմ:

-Իսկ ծաղիկներ՞ը: Դրանք «Բրաբիոն» ծաղկի սրահից եմ պատվիրել: Նաև խնդրել եմ, որ յոթ օր շարունակ ծաղիկներ բերեն քեզ համար:

-Էլ ի՞նչ ես մտածել ողջ գիշեր:

-Մնացածը՝ երեկոյան: Դու Կարոյին մերոնց մոտ կթողնես: Երեկոյան նրան մեզ հետ տուն կբերենք:

-Նա արդեն գիտի այդ մասին:

-Ապրենս, թանկագինս: Ես սիրում եմ քեզ:

-Ես՝ նույնպես:

Երեկոյան, երբ Հրաչը մեքենայով եկավ կնոջ ետևից, շլացուցիչ հայացք ձգեց նրա վրա:

-Աստվա՛ծ իմ, դու աշխարհի ամենագեղեցիկ կինն ես ինձ համար: Այնպիսի զգացողություն է ինձ մոտ, ասես հենց նոր սիրահարվեցի քեզ:

-Ուրեմն ուրախ եմ ծանոթության համար: Ո՞ւր ես ուզում հրավիրել ինձ,- կես-կատակ, կես-լուրջ հարցրեց Շուշանը:

-Շուտով կիմանաս:

Իսկապես շուտով հասան եվրոպական ոճով կառուցված մի ռեստորան, ուր նաև կենդանի նվագախումբ կար: Եվ քանի որ Հրաչն արդեն նախապես տեղեր էր պատվիրել, մենեջերը առաջնորդեց նրանց: Սպիտակ սփռոցով ծածկված սեղանին վարդագույն հաստ մոմեր էին վառվում: Վարդագույն անձեռոցիկներ էին դրված ափսեների տակ: Մոտեցավ մատուցողը: Հրաչը նախ խնդրեց իրենց վարդագույն գինի մատուցել՝ մինչև ուտելիք կպատվիրեին: Գինին չուշացավ: Այն վարդագույն վզկապով էր: Մատուցողը հաճույքով գինի լցրեց նրանց բաժակների մեջ:

-Դե՛, ինչ, խմենք մեր կենացը: Միշտ հիշի՛ր, որ դու ես իմ միակ սիրո հրեշտակը: Քո սիրո շնորհիվ ես այնպիսի թևեր եմ առնում, որ թվում է, առանց պարաշյուտի ամենաբարձր լեռան կատարից կարող եմ ցատկել և անվնաս վայրէջք կատարել,- խոստովանեց Հրաչը ու հուզմունքից նրա սիրտն անհանգիստ բաբախեց:

Շուշանը մի կուն արեց գինուց՝ խոնարհելով աչքերը:

-Եթե ինձ չսիրեիր, ես կլինեի այս կյանքում ամենադժբախտ տղամարդը,- իր խոսքը շարունակեց Հրաչը:

-Բայց ես քեզ շա՛տ եմ սիրում:

-Եթե, Աստված չարասցե, քեզ հետ վատ բան պատահի, ինքնասպան կլինեմ: Չե՞ս հավատում:

-Ինչո՞ւ ես տխուր նոտա մտցնում մեր լուսավոր երեկոյին: Ամեն ինչ լավ կլինի: Մենք հասցրել ենք յոթ տարի միասին լինել: Այդպես կշարունակվի ցմահ:

-Գիտեմ, սակայն հաճախ դողում եմ քեզ կորցնելու տագնապից:

-Բաժակդ մինչև վերջ դատարկի՛ր: Այս երեկո մենք երկուսով միայն կխոսենք համատեղ կյանքում եղած հետաքրքիր դեպքերի ու ակնթարթների մասին,- Շուշանը նույնպես դատարկեց բաժակը:

Մոտեցավ մատուցողը:

-Դուք արդեն որոշեցի՞ք, թե ինչ եք պատվիրելու:

-Հիմա,- Հրաչն ակնթարթորեն բացեց մենյուն և կնոջ հետ ուտելիքներ պատվիրեցին:

Մատուցողի հեռանալուց հետո նա ծոցագրպանից մի փոքրիկ տուփ հանեց ու մեկնեց կնոջը: Այնտեղ դեղին սաթե քարով ոսկյա մատանի էր:

-Անգուզական մատանի է,- շշմոջաց Շուշանը՝ դնելով մատին:

-Մատանու համար այդ քարն ընտրեցի, որովհետև ասում են, որ այն ոչ միայն չար ոգիներին է քշում, այլև բուժում է հիվանդություններ: Նման մատանին, իմ կարծիքով, կարող է դառնալ թալիսման երկուսիս համար:

-Շնորհակալ եմ,- երիտասարդ կինն այս անգամ ձեռքի պայուսակից համեստ մի փաթեթ հանեց և տվեց ամուսնուն: -Սա իմ նվերն է քեզ:

Հրաչը հիացած հայացքով արագ բացեց փաթեթը: Այնտեղ լուսանկարչական ընտանեկան ալբոմ էր՝ որդու և երկուսի լուսանկարներով: Կար նաև մեկ ձայնասկավառակ:

-Ի՞նչ յուրօրինակ հրաշալի նվեր ես ինձ համար պատրաստել, Շուշան: Իսկ այս ձայնասկավառակի մեջ ի՞նչ կա:

-Այդտեղ ձայնագրված է քո ձայնը, սիրո խոստովանությունները:

-Ահա թե ի՞նչ...Քո ձայնը չկա՞:

-Մեկ-մեկ իմ ձայնն էլ է հնչում, բայց ավելի շատ քոնն եմ ձայնագրել:

-Ո՞նց էլ հասցրել ես: Պարզվում է, որ իմ խոսքերը պարբերաբար ձայնագրում էիր:

-Ճիշտ այդպես: Ես վաղուց էի նախապատրաստվում այս օրվան:

-Կեցցե՛ս: Սա քեզնից ստացած ամենաչքնաղ նվերն է, -ասաց Հրաչը՝ կրկին լցնելով բաժակները:

Մատուցողը սեղանին արդեն շարել էր որոշ ուտելիքներ: Նվագախմբի մարդիկ դանդաղ ինչ-որ երաժշտություն էին նվագում: Հանկարծ Հրաչը կանգնեց և մոտենալով նրանց՝ մի երգ պատվիրեց: Հետո վերադառնալով կնոջ մոտ և համբուրելով նրան՝ խնդրեց խմել իրենց սիրո համար: Իսկ վայրկյաններ անց հնչեց Հրաչի պատվիրած երգը «Я люблю тебя до слез» վերնագրով: Այն ռուս հայտնի երգիչ Ա.Սերովի երգացանկից էր: Շուշանը թեթևակի գինովցել էր: Հրաչը կնոջը հրավիրեց պարի: Դահլիճում նստած առանձին զույգեր հետևեցին նրանց: Հրաչի տրամադրությունը չափազանց բարձր էր: Այդ երեկո նրանք հիշեցին իրենց համատեղ կյանքից ամենագեղեցիկ, ամենաարկածային պահերը: Իսկ երեկոյի վերջում Հրաչը կնոջն ամենավերջին անակնկալը մատուցեց՝ նրան հանձնելով դեպի Իտալիա ուղևորության երկու տոմս: Երկուսն էլ վաղուց էին երազում միասին լինել Վենետիկում:

Շուշանը խոհանոցում ընթրիքի համար ճաշ էր պատրաստում, երբ հնչեց ձեռքի հեռախոսի զանգը: Իր համակուրսեցիներից էր՝ Մանվելը: Նա հայտնեց, որ համադասարանցիներով ուզում են հավաքվել, երեկույթ կազմակերպել որևէ ռեստորանում:

-Իսկ ե՞րբ է նախատեսված միջոցառումը,- հարցրեց Շուշանը:- Ամուսնուս հետ շաբաթվա վերջում Իտալիա պիտի մեկնենք: Տոմսերն արդեն մեզ մոտ են:

-Հավանաբար երեք օրից:

-Այդքան շո՞ւտ: Դուք արդեն բոլորին զգուշացրե՞լ եք այդ մասին:

-Շատերին ես ու Վարուժանը տեղյակ ենք պահել:

-Ուրեմն ինձ լրացուցիչ կզանգես,- ասաց Շուշանը՝ զազօջախի կողքին ճաշը խառնելով:

Այդ ընթացքում նրան մոտեցավ որդին և ջուր խնդրեց:

-Շուշան, հեռախոսը չանջատես: Մենք այսօր օրվա վերջին պիտի հանդիպենք,- ասաց Մանվելը:

-Ի՞նչ նպատակով: Չէ՞ որ պայմանավորվեցինք:

-Ուզում եմ մանրամասն քննարկենք այդ տոնական օրվա հետ կապված մեր ծրագրերը, նյութական ծախսերը և այլն:

-Վարուժանի հետ այդ ամենի մասին քննարկիր: Ես երեխայի հետ մենակ եմ: Ամուսինս մեկնել է նկարահանումների: Չգիտեմ, թե երբ կվերադառնա:

-Բայց դու մենակ չես լինի: Ես մեր դասարանից Կարինեին էլ խնդրեցի, որ մեզ միանա: Նա համաձայնվեց: Այնպես որ, չորսով կլինենք: Իսկ որդուդ, կարծում եմ, մեկ ժամով կարող ես հարևանի կամ սկեսրոջդ մոտ թողնել:

Շուշանը մի պահ երկմտեց: Այլևս ուրիշ պատճառ չկար մերժելու: Ի վերջո, մի ժամ Կարոն տանը մենակ կմնար, քանի որ ինքնուրույն և՛ հեռուստացույց էր դիտում, և՛ օգտվում էր համակարգչից: Տալով իր համաձայնությունը՝ Շուշանն իսկույն ևեթ զանգեց Կարինեին: Պարզվեց, որ իսկապես նա էլ տեղյակ էր: Որոշեցին հանդիպել Մանվելենց տանը:

Պայմանավորված ժամին Շուշանն այնտեղ էր: Սակայն մեծ եղավ զարմանքը, երբ տեսավ, որ Մանվելը տանը բոլորովին մենակ էր: Միանգամից վախի սարսուռ անցավ նրա մարմնով, բայց ցույց չտվեց:

-Ո՞ր եմ մեր ընկերները և քո տնեցիները:

-Ծնողներս կնոջս և երեխաների հետ Սևանում եմ՝ մեր ամառանոցում: Իսկ մեր ընկերները շուտով տեղ կհասնեն: Դու նստիր: Մենք մի բաժակ սուրճ կխմենք մինչև նրանց գալը:

-Գուցե նրանց սպասե՞նք:

-Այդ դեպքում քեզ համար հյուր կամ կոնյակ կբերեմ: Հետո էլ վաղուց քեզ չեմ տեսել, մի քիչ կարոտս կառնեմ քեզնից:

Մանվելը դպրոցական տարիներից սիրահարված էր Շուշանին: Մի քանի անգամ նրան սեր էր խոստովանել, սակայն նրա սերն անպատասխան էր մնացել: Մանվելն ավարտելով դպրոցը, այնուհետև բարձրագույն կրթություն էր ստացել: Ավարտել էր համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը և այժմ աշխատում էր Երևանի շրջաններից մեկում՝ հարկային բաժանմունքում: Նա տարբեր կանանց հետ էր փորձել կապվել, բայց ոչ մեկին այդպես էլ չէր սիրահարվել: Գուցե ի սկզբանե նրա սերը դատապարտված էր: Միայն հետագայում մոր ցանկությամբ ամուսնացավ և ընտանիք կազմեց:

-Մանվել, դու հո՞ չես ցնդել, թե՞ կատակում ես: Մի՛ մոռացիր, որ ես ժամանակին ոչ միայն քեզ չեմ սիրել, այլև հիմա ամուսնացած կին եմ:

- Միևնույն է, քեզ մոռանալ չեմ կարող: Առաջվա պես շարունակում եմ սիրել քեզ:

Շուշանն անհանգիստ շուռումուռ եկավ բազկաթռռին: Նա զգաց, որ Մանվելին հանդիպելը սխալ էր, մանավանդ նրանց բնակարանում: Եվ ուզում էր իր հավասարակշռությունը չկորցնելու համար ո՛չ կոպտել նրան, ո՛չ առավել ևս սիրալիր լինել որպես դասընկերոջ:

-Ինձ կանչել ես այստեղ սիրո խոստովանություն անելու:

-Իհարկե, ո՛չ: Պարզապես հիշեցի դպրոցական տարիների իմ խենթ սիրո զգացումը քո հանդեպ: Ես այլևս չեմ շարունակի այս գրույցը, որպեսզի դու քեզ վատ չզգաս: Հիմա երկուսիս համար հյուր կբերեմ:

Մանվելն արագ շրջվեց ու գնաց խոհանոց: Նա չուզեց ավելորդ անգամ ցույց տալ իր ներքին հուզմունքը: Սակայն նարնջի հյուր լցնելով բաժակների մեջ՝ նա նաև դարակից հանեց քնաբեր դեղի լուծույթ և խառնեց մի բաժակի մեջ ու ջանասիրաբար խառնեց այն: Հետո լայն ժպտալով՝ խաղաղ ներս մտնելով ճաշասենյակ՝ հյուրի բաժակը մեկնեց Շուշանին:

-Խնդրում եմ, իմ դեմ քինախնդիր մի՛ եղիր: Անցածը ետ չես բերի: Ուրախ եմ քեզ տեսնելու համար: Վերցրու՛ բաժակդ և սիմվոլիկ խփիր ինձ, որպեսզի հավատամ, որ զայրացած չես իմ դեմ:

Շուշանը տեղի տվեց: Նա խոր հոգոց հանեց և իր վերցրած բաժակից մի քիչ հյուր ըմպեց:

-Քեզ դուր չեկա՞վ:

-Չէ՛, բավականին համեղ է:

-Մինչև քո գալը ես եմ իմ ձեռքով նարինջը քամել: Այն գնահատելու համար լրիվությամբ խմիր:

Շուշանը քաղաքավարությամբ կատարեց նրա ցանկությունը, երբեք չկասկածելով, որ դիմացինը դավ է նյութում իր դեմ:

-Շնորհակալ եմ, որ չընդդիմացար: Յուրաքանչյուր տղամարդու համար ցանկալի է, երբ կինը չի դիմադրում,- խորամանկ ժպիտ թրթռաց Մանվելի աչքերում:

-Ընդհակառակը, տղամարդիկ ավելի են սիրում այն կանանց, ովքեր դիմադրում են ու անհասանելի են թվում: Բայց ինչո՞ւ կրկին ուզում ես կնոջ ու տղամարդու հարաբերությունները պարզել, թե՞ որոշել ես հոգեբանությամբ ևս զբաղվել:

-Ո՛չ: Թերևս ուշացել եմ այդ հարցում:

-Ես ավելի լավ է Կարինեին զանգեմ, իմանալու համար, թե նա երբ կհասնի,- Շուշանը ձեռքի պայուսակից ուզեց հանել բջջային հեռախոսը:

-Պետք չէ զանգել,- Մանվելը կատվի ձկունությամբ նրա ձեռքից վերցրեց հեռախոսը և անջատեց:

-Ի՞նչ է այս ամենը նշանակում,- Շուշանը փորձեց ոտքի կանգնել, բայց թեթևակի գլխապտույտից կրկին փռվեց բազկաթռիչ:

-Կարինեն չի գալու: Եվ ոչ մեկն էլ չի գալու: Մենք միասին կլինենք, ու ես հնարավորություն կունենամ քեզ ասելու այն ամենը, ինչ տարիներ ի վեր կուտակվել է իմ սրտում` այստեղ,- Մանվելը ձեռքի ափով ծանր խփեց կրծքավանդակին:

Շուշանը նրա հայացքում հիվանդագին տենդ որսաց և խիստ վախեցավ:

-Ես ուզում եմ տուն գնալ: Տաքսի կանչիր: Որդուս տանը մենակ եմ թողել: Նա կվախենա, եթե ուշանամ: Առանց այն էլ ես մի քիչ ինձ վատ եմ զգում:

Սակայն աղերսագին հնչած Շուշանի խոսքերը Մանվելի վրա ոչ մի ազդեցություն չունեցան: Նա անպայման ցանկանում էր իրագործել իր պլանը: Շուշանին հասնելու համար այնպես էր մթազնել նրա ուղեղը, որ մնացած զգացումները բթացել էին:

-Դու ոչ մի տեղ էլ չես գնա:

-Թող ցնդաբանություններդ և ինձ տուր հեռախոսս: Ես կմոռանամ այս տհաճ հանդիպումը և ոչ ոքի ոչինչ չեմ ասի,- վերջին ձիգերը գործադրելով` Շուշանը կանգնեց, վերցրեց ձեռքի պայուսակը:

Սակայն Մանվելը նրա ճամփան փակեց: Հեռախոսից բացի, հափշտակեց նաև նրա պայուսակը, թեթևակի հրելով Շուշանին, որն էլ երերալով ընկավ և գլուխը հարվածեց բազկաթռի փայտե բազրիքին: Նա ուշաթափվեց` ընկնելով գետնին: Մանվելը սարսափահար խոհանոցից ջուր բերեց:

Երեկոյան փոքրիկ Կարոն մնալով մենակ` վախեցավ մենությունից: Մայրը, որը խոստացել էր շուտ վերադառնալ, վաղուց չկար: Նա հոգնել էր մեքենաների հետ խաղալուց, հեռուստացույց դիտելուց: Ժամերով նստած էր մնացել լուսամուտի մոտ, որտեղից երևում էր փողոցը: Փորձեց զանգել մորը, բայց նա անհասանելի էր: Եվ քանի որ բնակարանի դուռը փակ էր, հնարավոր չէր կանչել հարևանուհուն: Վախից նա կուչ եկավ բազմոցի մի անկյունում և սկսեց հեծկլտալ: Հնչեց տան հեռախոսի զանգը: Հայրն էր: Խեղճ երեխան բարձրաձայն լացելով բողոքեց հորը, որ իրեն մենակ են թողել, որ նույնիսկ բոլոր չի հասնում բնակարանի լույսը վառելու համար: Հրաչը, որ ավարտել էր նկարահանումները, կայծակնային արագությամբ հասավ տուն: Արդեն երեկոյան ժամը տասնմեկն էր: Նա պինդ գրկելով որդուն` ջուր տվեց նրան, որ հանգստանար, իսկ ինքը որդուց ոչ պակաս շփոթահար մեկը մյուսի ետևից գլանակն էր հանգցնում մոխրամանի մեջ: Յոթ

տարիների ընթացքում նման դեպք չէր պատահել: Որդուց փորձելով թաքցնել անհանգստությունը, նրան ննջասենյակ տարավ և օգնեց շորերը հանելու:

-Հայրի՛կ, մայրիկը կվերադառնա՞,- աղերսագին հայացքով որդին նայեց հորը:

-Իհարկե, սիրելի՛ս: Դու հանգիստ քնի՛ր:

Հրաչն ուզեց լույսը հագցնել, երբ որդին խնդրեց լուսամփոփը վառած թողնել: Հոր սիրտը մղկտաց: Հասկացավ, որ նա ժամեր շարունակ մնալով մթության մեջ, շատ էր վախեցել:

Մտնելով ճաշասենյակ, այս անգամ նա փորձեց զանգել հիվանդանոցները: Հերթապահ մասերից ուզում էր տեղեկություններ իմանալ օրվա դժբախտ պատահարների մասին: Ո՞վ գիտե: Գուցե կինն անզգուշությամբ ավտովթարի էր ենթարկվել: Ախր հնարավոր բան չէր, որ Շուշանը երեխային փակի տակ թողներ և ժամերով անհետանար: Ամբողջ գիշեր նա խելակորույս մտքերով տարված շրջում էր սենյակներում և ծխում:

Արդեն առավոտյան Հրաչը ստիպված եղավ որդուն թողնել իր ծնողների մոտ, իսկ ինքը գնաց ոստիկանության բաժանմունք՝ կնոջը գտնելու համար: Երկու-երեք օրվա ընթացքում Հրաչը հասցրել էր լինել մայրաքաղաքի բոլոր դիահերժարաններում: Ոչ մի տեղ չկար: Որդուն մենակ չթողնելու համար ստիպված գիշերում էր ծնողների մոտ:

-Էլի՞ ոչ մի նորություն չկա,- հերթական անգամ հարցրեց հայրը՝ հիսունութամյա Ռուբեն Առաքելյանը, որը երեսուն տարուց ի վեր որպես տպագրիչ աշխատում էր Երևանի առաջատար տպարաններից մեկում: Մայրը՝ տիկին Նունեն, որպես հաշվապահ էր աշխատում նույն տպարանում:

-Ո՛չ, հայրի՛կ: Զգիտեմ նույնիսկ մարդուն ինչքան համբերություն է պետք այս ամենը հաղթահարելու համար:

-Դու երբեք իրավունք չունես ընկճվելու: Մի՛ մոռացիր, որ պատասխանատվություն ես կրում քո որդու հանդեպ:

-Հեշտ է խորհուրդներ տալը, իսկ դիմանալու համար մարդու արյան շրջանառությունը կարծես միանգամից խախտվում է: Դու էն ասա, հայրի՛կ, Շուշանն այս օրերի ընթացքում ողջ մնացած կլինի՞, թե՞...:

-Դժվարանում եմ պատասխանել, տղա՛ս: Պիտի սպասենք,- հայրը որդուն հակառակվել չէր ուզում ու չէր կարող: Հրաչի նյարդերն օրեցօր ջլատվում էին:

-Արդեն մի շաբաթ է անցել: Ի՞նչ եղավ այդ աղջկա հետ: Ոչ ոք նրան չի տեսել: Ասես հօդս է ցնդել: Հայրի՛կ, վախենում եմ՝ ուժերս չհերիքեն: Ինչու՞ դժբախտությունը թակեց դուռս: Մենք միասին այնքան երջանիկ էինք,- Հրաչի աչքերից արցունքներ գլորվեցին:

Հայրը ձեռքը զգելով որդու թիկունքին, դեպի իրեն սեղմեց նրա մարմինը: Խոհանոցից եկավ մայրը:

-Ընթրիքը պատրաստ է, գնանք միասին ճաշելու:

-Զեմ ուզում, դուք գնացե՛ք: Ո՞ւր է Կարոս:

-Նա հարևանի տանն է: Նրանց երեխաների հետ է խաղում,- պատասխանեց մայրը: -Կուզե՞ս կանչեմ, բայց ավելի լավ է ճաշից հետո: Թոռս արդեն ճաշել է:

-Վե՛ր կաց, տղաս, մի-մի բաժակ էլ կխմենք: Մի քիչ կլիցքաթափվես,- առաջարկեց հայրը՝ բռնելով որդու թևից:

-Կարելի է...Բայց ինչքան խմեմ, որ ներսիս ցավը բթանա...

Երկու շաբաթ անց օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում վերջապես գտան Շուշանին: Հարցաքննության ենթարկվեցին կնոջ բարեկամները, կոլեգաները, ընկերները: Ի վերջո ընկերուհուց՝ Կարինեից իմացան, որ իրենց համադասարանցի Մանվելը զանգել էր իրենց և խնդրել հանդիպել իր բնակարանում: Հետո Կարինեին նորից էր զանգել և ասել, որ հանդիպումը հետաձգվում է: Ստուգեցին Շուշանի ձեռքի հեռախոսահամարները: Նա Մանվելին հանդիպել էր: Հենց նա էլ սպանել էր Շուշանին: Սպանության հետքերը թաքցնելու նպատակով նա կնոջ մարմինը բաժանել էր մասերի և մեքենայով տարել էր քաղաքից դուրս՝ մի մեծ ծառի

տակ թաղել: Նրա բնակարանում՝ բազկաթռչի անկյունում գտան Շուշանի ականջօղերից մեկը: Նաև հատակին վաղուց չորացած արյան հետքեր կային: Քրեական- հետախուզության աշխատակիցներին հաջողվեց բռնել մարդասպանին և հայտնաբերեցին Շուշանի դին: Վերջինիս մարմինը կացնահարել էր միջնադարյան ձևով և թաղել: Այդպես վերաբերվում են արյունարբու թշնամու հետ: Բայց ի՞նչ էր արել երիտասարդ կինը: Մարդասպանի դեմ քրեական գործ հարուցվեց ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով: Հոդվածը նախատեսում էր 12 տարի ազատազրկում:

Հրաչն այնպիսի հոգեկան ճգնաժամի մեջ էր, որ թվում էր, թե ուր որ է կխելագարվի և աշխարհում չի ձանաչի ոչ ոքի: Կնոջ մահն այնպես ցնցեց նրան, որ ատելությամբ լցվեց ամեն ինչի և ամենքի հանդեպ: Նա չէր հավատում, որ Շուշանը կարող էր որևէ մեկին ցավ պատճառել, առավել ևս դավաճանել իրեն: Հետաքննության արդյունքում պարզվեց, որ մարդասպանը սուտ պատրվակով կանչել էր իր գոհին, քնաբեր էր լցրել նարնջի հյութի մեջ, հետո բռնաբարել էր նրան: Իսկ երբ Շուշանն արթնացել էր, վիճել էին, նա սպառնացել էր, որ անպայման ոստիկանության կղիմի, կբողոքի: Մանվելը նրան դանակով հարվածել էր վախից ու սպանել: Այնուհետև հետքերը թաքցնելու համար նրա մարմինը գիշերով թաղել էր պատահական մի վայրում՝ մայրաքաղաքից դուրս: Թեև մարդասպանը ձերբակալված էր, և, բնականաբար, օրենքի առջև արժանի պատիժը կստանար, բայց դրանով Հրաչի վիշտը չմեղմացավ: Նա որդու հետ իրեն միանգամից որբացած զգաց: Փշրվեցին բոլոր երազանքներն ու ծրագրերը: Կյանքի գույները խունացան:

Ռուբեն Առաքելյանը որդու հետ պատշգամբում ծխում էր, երբ ներս բերեցին նրա կնոջ դագաղը: -Որդի՛ս, պինդ պահիր քեզ, խնդրում եմ,- փորձեց գետեպնդել նա իր տղային:- Դժբախտությունն էլ մարդու համար է: Ճակատագրի հարվածներից ոչ մեկին չի հաջողվել խուսափել:

-Բայց ինչո՞ւ, հայրի՛կ, ինչո՞ւ...,- արցունքները չէր կարողանում թաքցնել Հրաչը: -Երանի՛ր նրա փոխարեն ես մեռած լինեի...

Հոր սիրտը կտոր-կտոր եղավ որդու սրտաճնլիկ խոսքերից: Նա կանչեց իր կնոջը, որը հարևանների հետ նստել էր սենյակի բազմոցին: Տիկին Նունեն արագ ապակե սափորով ջուր և բաժակներ բերեց սկուտեղի վրա: Նա որդուն կամաց շշնջաց.

-Հրաչ ջան, գուցե Կարոյին չհայտնե՞՞նք, որ մայրը մահացել է:
-Ոչ մի դեպքում: Որդիս պիտի իմանա, որ իր մայրը չկա: Չպետք է խաբել երեխային ամեն անգամ ասելով, որ շուտով մայրիկը տուն կգա...

-Բայց նա ծանր կտանի մոր կորուստը:
-Գիտե՞մ: Մենք նրա կողքին ենք, մայրի՛կ: Ո՞ւր է Կարոս:
-Անդրանիկը նրան հանել է տնից:
-Հաղորդի՛ր եղբորս, որ որդուս բերի տուն:

Իսկապես երբ խեղճ երեխան տեսավ սենյակում դրված մոր դագաղը, բարձրաձայն ծղրտաց՝ մայրի՛կ կանչելով: Այնքան լացեց, մինչև որ ձայնը խզվեց: Ամբողջ դեմքը կարմրել էր, աչքերը քիչ էր մնում դուրս թռնեին ականախորշերից: Տղան հավատում էր և հուսով էր, որ մայրն անպայման կվերադառնա: Հրաչի եղբայրը հազիվհազ մխիթարեց նրան, ասելով, որ մայրը երկնքից իրեն կհետևի, բարի խորհուրդներ կտա...

Սակայն ավելի ցնցող էր Հրաչի վիճակը: Երբ գերեզմանատանը նախապես փորած գերեզմանափոսի մեջ իջեցրին դագաղը, նա խելացնոր կերպով ուզեց ցատկել այնտեղ, որ իրեն էլ ողջ-ողջ կնոջ հետ թաղեին: Բարեբախտաբար, նրա եղբայրն ու ընկերները ժամանակին բռնեցին Հրաչի ձեռքերից և ետ տարան: Նա ուշագնաց ընկավ գետնին: Նրան ուշքի բերելուց հետո օգնեցին նստելու ավտոմեքենա ու տուն տարան:

Հրաչը խռովվեց աշխարհից, Աստծուց, մարդկանցից:

Շատերին թվում է, թե մարդասպանները հատուկ մարդիկ են՝ սարսափելի դեմքերով, կոպիտ դաջվածքներով, որ նրանց կարելի է ճանաչել նույնիսկ հեռվից: Դա, իհարկե, մոլորություն է: Մարդուն կարող է սպանել անգամ դեռահասը, դպրոցականը: Հայտնի է, որ յուրաքանչյուր մարդասպան սադրանքի է ենթարկվում զոհի կողմից: Մարդը թուլացել է, իր զգացմունքներին տեղ է տվել, կոպիտ պատասխանել է դիմացինին և ամեն ինչ վերջացած է: Նա զրկվում է կյանքից: Հետաքրքիր է, որ մարդասպանների մի մասը մտավորականներ են, կիրթ մարդիկ, ովքեր ինչ-ինչ պատճառներով հանկարծ ի վիճակի չեն ինքնուրույն լուծել իրենց խնդիրները: Նմանատիպ մարդկանց բնավորության հիմնական հատկանիշը եսակենտրոն լինելն է: Նրանք միշտ կոնֆլիկտային վիճակի մեջ են շրջապատի հետ և ամեն կերպ փորձում են արդարացնել իրենց: Իսկ թե ինչպես կարելի է հեռու մնալ մարդկային դաժանությունից, դժվար է այն տարբերակել մի դարաշրջանում, երբ անվերջ ագրեսիա ու բռնություն է պրոպագանդվում հեռուստատեսություններից, համացանցերից, համակարգչային խաղերից, երբ ամեն թույլ սպանություն է կատարվում: Գուցե դա է պատճառը, որ մարդուն դժվար չէ ցավ պատճառել դիմացինին և նույնիսկ սպանել նրան:

Հրաչն անպայման ուզում էր հանդիպել իր կնոջը սպանողի հետ: Նա անգամ չէր պատկերացնում, որ մարդասպանը սիրած էակի համադասարանցին է: Մի մարդ, որի հետ սովորել է տասը տարի դպրոցում և հիմա տարիներ անց որոշել է հանցանք գործել, պատժել այդ կնոջը՝ իրեն չսիրելու համար: Հրաչը թույլտվություն ստանալով, այնուհանդերձ, չգիտեր, թե ինչպես պիտի զսպեր իր կրքերը՝ նրան տեղում չխեղդելու: Երբ ոստիկանի ուղեկցությամբ ներս բերեցին Մանվելին, վերջինս գլխիկոր կանգնեց Հրաչի առջև: Նա մտածեց, որ նայելով դիմացինի բարեկիրթ արտաքինն ու հագուկապին, երբևէ չես գուշակի, որ պոտենցիալ հանցագործի հետ գործ ունես: Ի տարբերություն Հրաչի, Մանվելը նրան ճանաչում էր հեռվից:

-Գիտե՞ս, որ դու մարդ կոչվելու իրավունք չունես: Դու պարզապես հրե՛շ ես,- զայրույթից Հրաչի աչքերը ավելի դուրս ցցվեցին:

Մանվելը լռեց: Նա քաջ գիտակցում էր իր գործած ծանր մեղքը:

-Մի՞թե տղամարդկային էր քո վերաբերմունքը, որ խաբեությամբ՝ համադասարանցիներով հանդիպում կազմակերպելու պատրվակով կնոջս կանչել էիր քո տուն: Ի՞նչ ես լլկվել, պատասխանիր:

-Եթե չխաբեի, նա չէր ուզե՞նա հանդիպել ինձ հետ:

-Ուստի որոշեցիր նենգ արարքի օգնությամբ բռնաբարել նրան: Դա՞ է քո տղամարդկությունը: Ասենք, թե ժամանակին սիրել ես նրան անպատասխան սիրով: Բայց չէ՞ որ հիմա դու ուրիշ կին ունես, ընտանիք, երեխաներ: Շուշանն էլ ազատ չէր: Նա ամուսնացած կին էր: Չէի՞ր մտածում քո հանցանքի հետևանքների մասին:

-Ես ամենևին մտադրություն չունեի սպանել նրան,- փորձեց արդարանալ Մանվելը:

-Բայց սպանեցիր, այն էլ միջնադարյան դաժանությամբ: Ինչի՞ համար:

-Նա սպառնում էր ինձ, որ կբողոքի ոստիկանությանը, որ...

-Իսկական անասուն ես: Կարծում էիր, որ կլռե՞ր: Բժիշկը հոգեկան վիճակդ ստուգե՞լ է:

-Ասել են, որ ոչ մեծ շեղվածություն կա,- հանգիստ պատասխանեց մարդասպանը:

-Հասկանալի է, որ նորմալ մարդն այդ քայլին չէր դիմի:

Հրաչն զգաց, որ սրտի աշխատանքն այնքան էր արագացել, որ քիչ էր մնում շնչասպառ լինել: Եվ նա նվաղած ծայրով ասաց.

-Դու ոչ միայն ավերեցիր մեր երջանիկ կյանքը, այլև՝ քո ընտանիքը խորտակեցիր: Կինդ և երեխաներդ այս ամենից հետո ինչպե՞ս պիտի նայեն քո աչքերին:

Մանվելը դարձյալ լռեց: Նա այնպիսի խղճուկ ու անհաշտ դեմք ուներ, կարծես այս ամենի հեղինակը ինքը չէր: Նա չասաց, որ կինը սպառնացել է իրեն, որ կբաժանվի և նրա անունը լսել չի ուզում: Այսինքն՝ հրաժարվել է իրենից:

-Զգիտեմ:

- Բայց ինչո՞ւ, ասա, ինչո՞ւ խլեցիր կնոջս կյանքը: Հիմա ինչպե՞ս պիտի ապրեմ առանց նրան:

Մանվելը պապանձվեց:

- Քե՞զ եմ հարցնում: Դու չե՞ս ավստում արարքներիդ համար:

- Ավստում եմ:

- Չեմ հավատում: Ախր մի՞թե կարելի է բռնանալ կնոջ կամքի դեմ, այն էլ սիրելու դեպքում: Աստված քեզ չի ների:

-Գիտեմ,- սառը պատասխանեց նա:

-Ոչինչ էլ չգիտես: Դու խաչ քաշեցիր քո կյանքի վրա: Քեզպեսները պիտի փտեն բանտերում: Ավստ՞ս, որ մահապատիժը հանեցին օրենքով: Քեզ համար կախաղանն էլ քիչ էր:

Մարդասպանին մեկուսարանում թողնելուց հետո Հրաչը դարձյալ քայլերն ուղղեց դեպի գերեզմանատուն: Նա կրկին փարվեց կնոջ գերեզմանաթմբին ու սկսեց արտասվել: Ո՛չ, նա ոչ մի կերպ չի համակերպվի իր վշտի՝ սիրած կնոջ կորստի հետ: Հիշում էր նրա գեղեցիկ դեմքը, ժպիտը, ձայնը, մարմնի բույրը... Հիմա կյանքում կարոտի վայրն այդ չոր հողաթումբն էր, որի տակ հանգչում էր սիրելի էակը: Ինչպե՞ս պիտի ապրեր առանց նրա սիրո, կարոտի, ջերմ համբույրների: Ինչպե՞ս պիտի երազեր...Ու՞մ հետ երազեր...

Ուշ երեկոյան Հրաչի ծնողները դարձյալ անհանգստացան, որովհետև որդին չկար: Ռուբեն Առաքելյանն իր կրտսեր որդուն՝ Անդրանիկին ուղարկեց նրան փնտրելու: Քանի որ վշտի մեջ իրեն կորցրած ավագ որդին չէր պատասխանում հեռախոսազանգերին, ենթադրեցին, որ նա ամենայն հավանականությամբ գնացել էր գերեզմանատուն: Ահա ինչու Անդրանիկը մի տաքսի վերցրեց և հասավ այնտեղ: Հրաչին գտավ կնոջ հողաթմբի մոտ: Նրա ձեռքին օղու շիշ կար: Եղբայրը միայնակ հենվել էր հողաթմբին ու ծխում էր: Տեսնելով իրեն մոտեցող Անդրանիկին՝ նա մի պահ ուղղվեց տեղում՝ տխուր հայացքը հառելով հեռուները:

-Գնա՛նք տուն, Հրա՛չ ջան,- նրան դիմեց եղբայրը:

-Ինձ թվում է, թե այլևս տուն չունեմ:

-Դու ամեն ինչ էլ ունես՝ և՛ տուն, և՛ ծնողներ, և՛ հարազատներ, և՛ որդի: Միայն զրկվեցիր սիրածդ կնոջից,- կրտսեր եղբայրը կարծես ցանկացավ նրա հայացքն ուղղել դեպի իրականությունը:

-Լավ ասացիր՝ սիրած կնոջիցդ: Իսկ նա ինձ համար մի ամբողջ աշխարհ էր: Դու դեռ չգիտես, թե ինչ է նշանակում սիրել, շա՛տ սիրել կնոջը...Գուցե դա էլ իմ թերությունն է, որ այսքան տառապում եմ, - Հրաչը նորից լցրեց բաժակը:

-Եղբայրս, հերիք է խմես: Գնա՛նք տուն: Տաքսին մեզ է սպասում:

-Կգամ քեզ հետ, մի՛ անհանգստացիր: Դու տեսե՞լ ես, թե այս կարճ ժամանակաընթացքում գերեզմանատանն ինչքան հողաթմբեր են ավելացել:

-Այո՛, նկատել եմ:

-Մարդիկ հեռանում են այս կյանքից, որովհետև չեն դիմանում ստի՛ն, անարդարություններին, կյանքի դաժանություններին...

-Ո՞վ գիտե, գուցե բնական մահով են մահացել կամ էլ դժբախտ պատահարներից,- լրացրեց Անդրանիկը:

-Ճիշտ կբահեցիր: Մարդկանց մի մասն իր մահով չի մահանում: Հաճախ այստեղ գտնվելիս մտածում եմ, որ մեր ապրած կյանքն ընդամենը մի ակնթարթ է, որ մահը հզոր է կյանքից: Թեկուզ մեզանից յուրաքանչյուրը մահից այնքան ժամանակ չի վախենում, մինչև կորցնում է իր համար ամենահարազատ մարդուն:

-Հասկանում եմ, եղբայրս, բայց ի՞նչ անենք:

-Ո՛չ, դու ինձ չես հասկանում, որովհետև դեռ ջահել ես, կյանքի դառնության փորձ չունես: Դու միայն կողքից ես ֆիքսում ցավը, արցունքները, հառաչանքը, բայց...,- ու Հրաչի մոտ խեղդող հազ սկսվեց:

-Խնդրում եմ, Հրաչ ջան, գնանք տուն: Մնացածի մասին տանը կգրուցենք: Դու կարգին մրսել ես: Հնարավոր է, որ տաքություն էլ ունենաս, -անհանգիստ ասաց Անդրանիկը:

-Հնարավոր է...,- Հրաչն իր մեջ ուժ գտավ ինքնուրույն ոտքի կանգնելու:

Տաքսին, որով կրտսեր եղբայրը հասել էր գերեզմանատուն, մուտքի առաջ սպասում էր նրանց:

Ճանապարհին մտքերի մեջ խորասուզված Անդրանիկն զգաց, որ եղբայրը դողում է: Չափազանց խղճաց նրան: Նա շատ էր կապված Հրաչի հետ և մտածում էր, որ առաջվա կենսախիսնդ եղբորից գրեթե ոչինչ չի մնացել և կարծես դարձել էր իր նախկին կերպարի հակապատկերը: Մռայլ էր, քչախոս, անհաղորդ: Վշտի մամլիչի ներքո հոդս էին ցնդել նրա բոլոր իղձերը՝ իրենց տեղը զիջելով օղու շշին, ծխախոտին, լուսանկարներին: Ինքը հոր հետ ստիպված էին անվերջ հսկել նրան, որպեսզի ետ պահեն անմիտ քայլերից:

Օրերից մի օր էլ Հրաչը խիստ մրսեց ու ընկավ անկողին: Մի քանի օր շարունակ ջերմաստիճանը չէր իջնում: Բժիշկ կանչեցին: Զննությունից պարզվեց, որ բրոնխների բորբոքում ունի: Սրսկումներ նշանակեց և անկողնային ռեժիմ սահմանեց: Ծնողները, որ խնամում էին նրան, փորձում էին կարելվույն չափ խոսքի մեջ լինել զգույշ, վերաբերմունքի մեջ՝ ջերմ ու հոգատար: Ամիսների ընթացքում Հրաչը փոխվել էր նաև արտաքինով: Նիհարել էր, դեմքը ջղաձիգ տեսք էր ստացել ներքին լարվածության պատճառով:

-Նյարդերդ բոլորովին թուլացել են, որդիս,- հերթական անգամ հայրն ուզեց գրուցել տղայի հետ:- Դու աստիճանաբար պետք է վշտից դուրս գաս: Հասկանում եմ, հեշտությամբ չի հաջողվի, բայց հոգեկան ճգնաժամն ի վերջո պիտի հաղթահարվի:

-Հայրիկ, ես երևի դարձել եմ անցյալի ստրուկը: Ինձ չի հաջողվում ապրել իրական կյանքով: Միշտ կառչած եմ մնում իմ հիշողություններից,- դարձյալ թացացան Հրաչի աչքերը:

-Մենք նույնպես սիրում ենք Շուշանին: Կինդ շատ բարի էր, կիրթ, բոլորի հանդեպ ուշադիր: Նրան հնարավոր չէ մոռանալ: Դու էլ մի՛ մոռացիր նրան, սակայն այդքան քեզ մի՛ տանջիր: Մեզանից յուրաքանչյուրն իր ճակատագիրն ունի: Ոչ ոք նախապես չգիտի, թե իրեն ինչ է սպասվում:

-Ախր երեսուն տարին մի՞թե մարդու համար ապրված կյանք է...Մենք նոր էինք նշել մեր համատեղ կյանքի յոթնամյակը: Ծրագրել էինք տասն օրով Իտալիայում ճամփորդել և...:

Հուզմունքից սեղմվեց Հրաչի կոկորդը, ու խոսքը կիսատ թողեց:

- Մեր ծրագրերի իրականացումը միայն մեզնից չի կախված: Բայց դա չի նշանակում, որ պիտի հուսահատվել: Մենք միասին քեզ կօգնենք ինչ-որ բան փոխել և առաջ նայել: Հին իմաստուններն ու փիլիսոփաները մարդուն կոչ էին անում միշտ գնահատել ներկա ակնթարթը և երախտապարտ լինել այն ամենի համար, ինչ ունես:

-Հայրիկ, ուզում ես ասել, որ մենք պիտի մոռանա՞նք մեզ համար թանկ մարդկանց՝ բավարարվելով գեղեցիկ ակնթարթներով:

-Իհարկե, ո՛չ: Ասելս այն է, որ հիշես անցյալը, բայց ապրես ներկայով: Մենք գնահատում ենք այն լավը, ինչ եղել է, սակայն անցյալից կախվածությունը չպիտի դառնա վնասակար սովորություն:

Հրաչը խոր հոգոց հանեց: Նա խնդրեց հորը կանչել մայրիկին՝ մի բաժակ թեյ բերելու:

-Ու՞ր է մայրիկը: Կանչի՞ր նրան, -հորը թվաց, թե որդին անօգնական երեխայի պես այս ու այն կողմ նայեց, ու խղճաց նրան:

-Մայրդ հարևանուհու հետ մեր տանը գրուցում է: Հիմա կկանչեմ:

-Ո՞ր հարևանուհու՝ Նազիկի՞,- նկատելիորեն բորբոքվեց Հրաչը:- Այդ կինն ամոթ չունի՞: Ամբողջ օրերով մեր տանն է մնում, մեր բոլոր գործողություններին հետևում, այստեղ ուտում-խմում, և միայն քնելու ժամանակ է իր բնակարանը հիշում:

-Հանգստացի՞ր, տղա՛ս: Նա թոշակառու է և միայնակ է ապրում:

-Հասկանում եմ: Նա երեք զավակ ունի, թող նրանց տներն այցելի: Թե՞ մեր հաշվին փողերն է տնտեսում: Եթե իր տանը լույսը չի վառում, գազօջախին չի մոտենում, նշանակում է, մեր բարությունն է շահագործում: Նման ցինիզմն ինձ զայրացնում է:

Հրաչը չափազանց դյուրագրգիռ էր դարձել: Նա այդ ամենը չէր նկատի, եթե իր խաղաղ կյանքով ապրեր: Այնինչ շուրջը տիրող ամեն բացասական երևույթ նա անմիջապես նկատում էր: Երիտասարդ ռեժիսորը դարձել էր չափազանց խոցելի:

Որդու ծայնի բարձր տոնից ներս մտավ մայրը՝ տիկին Նունեն, ու շվարած կանգնած մնաց դռան մոտ:

-Նորից զայրացե՞լ ես, թե՞ ինձ թվաց, -անհանգիստ հարցրեց նա:

-Հարևանուհուդ վրա է զայրացել, որ առավոտից մինչև հիմա մեր տանը նստած է,- միջամտեց ամուսինը:

-Ի՞նչ անեմ: Եթե անգամ գնում եմ խոհանոց ճաշ սարքելու, նա տեղից չի շարժվում, իր համար հեռուստացույց է դիտում:

-Մեր տունն իր համար սանատորիա է դարձրել, քեզ էլ՝ իր ծառաներից մեկը: Ես կխոսեմ նրա հետ, մայրիկ: Մարդու համբերությունն էլ չափ ու սահման ունի,- ասաց Հրաչը:

Ներս մտավ Կարոն՝ մեքենա խաղալիքը ձեռքին, հետևելով մեծերի վեճին:

-Տղաս, մոտեցի՞ր ինձ,- Հրաչի ծայնը մեղմացավ որդու ներկայությունից: Նա մորը խնդրեց թեյ բերել իր համար:

Մոր հեռանալուց հետո մնացին երեքով: Տան ավագը լուռ նստել էր որդու ննջասենյակի մի անկյունում և նայում էր նրան:

-Հայրիկ, ե՞րբ ես ոտքի կանգնելու, ուզում եմ միասին գնանք զբոսնելու,- ասաց փոքրիկ Կարոն:

-Կգնանք, որդի՛ս: Միայն խելոք պահիր քեզ: Լսի՞ր տատիկին ու պապիկին, երբ տանը չեմ լինում: Դու չե՞ս մոռացել, որ սեպտեմբերին դպրոց պիտի հաճախես:

-Գիտեմ, հայրիկ: Պապիկն արդեն գնել է իմ տետրերը և գրիչները:

-Նա խելոք է, Հրա՛չ ջան: Երբեք կամակորություն չի անում,- իր գոհունակությունն արտահայտեց հայրը:

Կարոն դուրս եկավ հոր սենյակից: Հրաչը նորից հիշեց Շուշանին: Հիմնականում նա էր զբաղվում որդու դաստիարակությամբ:

-Դու ինձ չե՞ս լսում, որդի՛ս,- հայրը նկատեց, որ որդին կրկին ընկավ ծանր մտքերի մեջ:

-Լսում եմ, հայրի՛կ: Դու իրավացի ես:

Մայրը սկուտեղի վրա ներս բերեց թեյը՝ լիմոնով ու ելակի մուրաբայով և հեռացավ:

Հնչեց Հրաչի ձեռքի հեռախոսի զանգը: Ընկերն էր՝ Սևակը: Նրա համակուրսեցին էր, որ հիմա ապրում էր Լոս-Անջելեսում: Նա մասնագիտությամբ չէր աշխատում, զբաղվում էր բեզմետով: Մինչ այդ նա ոչ միայն հեռախոսով զանգել էր Հրաչին, իր խորին ցավակցությունը հայտնել նրա սիրելի կնոջ մահվան առթիվ, այլև մի կլորիկ գումար էր ուղարկել:

-Ինչպե՞ս ես, ընկե՛րս,- հեռվից լսվեց Սևակի ձայնը:

-Մի քիչ վատառողջ եմ: Բրոնխներս բորբոքվել են, բուժումներ եմ ստանում: Լուրջ բան չկա, մի՛ անհանգստացիր,- պատասխանեց Հրաչը:

Այնինչ Սևակը Երևանում բնակվող ընկերներից տեղեկացել էր, որ Հրաչը նույնիսկ առանձին օրեր գիշերել էր գերեզմանոցում՝ կնոջ հողաթմբի վրա: Բարեբախտաբար, եղանակները տաք էին, հակառակ դեպքում հետևանքները շատ տխուր կլինեին:

-Քեզ լավ հետևիր: Շուտով ամենայն հավանականությամբ գործերով կժամանեմ Երևան: Կարող եմ բոլորիդ:

-Չափազանց ուրախ կլինենք հանդիպելու քեզ հետ: Ընտանիքիդ անդամներին մեր կողմից ջերմ բարևներ,- թախծոտ ժպիտ անցավ Հրաչի դեմքով:

-Անպայման, ընկերս: Նաև ուզում եմ հաղորդել, որ մի քիչ գումար եմ ուղարկել քեզ, կստանաս:

-Է՛հ, չեղավ, Սևակ ջան: Դու արդեն ուղարկել ես, որի համար շնորհակալ եմ: Հիմա ինչու՞ ես նեղություն քաշել,- Հրաչի դեմքը վայրկենապես կնճռուվեց:

-Հիշիր, որ ընկերոջն օգնության ծեռք մեկնելը նեղություն չի նշանակում, մանավանդ գիտեմ, որ գործերդ այնքան էլ հաջող չեն:

-Այդպես չի մնա: Կամաց-կամաց կհարթվեն: Տեսահոլովակներ նկարահանելու մի քանի պատվերներից հրաժարվեցի քեզ հասկանալի պատճառներով: Այժմ էլ վատառողջ եմ, բայց էլի առաջարկներ կլինեն:

-Մի՛ արդարացիր: Ու՞մ չէ հայտնի, թե Հայաստանում ինչպիսին է արվեստագետի վիճակը: Այս անգամ քեզ համար ավելի խոշոր գումար եմ ուղարկել, որ Շուշանի գերեզմանը սարքես:

Մի պահ քար լռություն տիրեց: Հուզմունքից Հրաչի կոկորդը սեղմվեց: Նա մտածեց, որ պատրաստ էր իր սիրած կնոջ հետ հաղթահարել բոլոր դժվարությունները, միայն թե նա կողքին լիներ:

-Դու ինձ լսու՞մ ես, ընկեր:

-Այո՛, շնորհակալ եմ, Սևակ: Բառեր չեմ գտնում երախտագիտությունս հայտնելու:

-Արդեն հայտնեցիր: Ամեն բան իր տեղը կընկնի, միայն դու շուտ առողջացիր:

Հայրն ուշի- ուշով հետևում էր որդու դեմքի միմիկային, շարժումներին: Երբ նա հեռախոսն անջատեց, հայրը դիմեց Հրաչին.

-Ինչպես հասկացա, նորից գումար է քեզ ուղարկել:

-Ճիշտ հասկացար, հայրիկ: Նա ցանկանում է, որ գերեզմանն իմ ուզած ձևով սարքեմ:

-Կեցցես, Սևակ: Նա իսկապես անփոխարինելի ընկեր է,- ոտքի կանգնեց հայրը:- Ես էլ գնամ հիվանդ եղբորս տեսնելու: Իսկ դու թեյդ խմիր և քեզ հանգիստ պահիր:

-Չմոռանաս ինձ համար քնաբեր դեղ բերել:

Ռուբեն Առաքելյանը կնոջը խնդրեց մեկ լիտրանոց տարայի մեջ բորչչ լցնել իր հիվանդ եղբոր համար և տնից դուրս եկավ: Ամբողջ ճանապարհին տարաբնույթ մտքերով տարված՝ նույնիսկ չնկատեց, թե ինչպես արագ տեղ հասավ: Ավագ եղբայրը՝ յոթանասունամյա Գեղամը, պառկած էր իր առանձնասենյակում, որտեղ կար ընդամենը մի մահճակալ, մի աթոռ, մի փոքր սեղան, զգեստապահարան և ռադիոընդունիչ: Չորս սենյականոց բնակարանում՝ հարազատներով շրջապատված, նա իրեն բոլորովին միայնակ ու լքված էր զգում: Կինն իրենից փոքր էր քսանհինգ տարով: Երբ Ռուբենն իր ժամանակին ակնարկում էր, որ նրա ընտրությունը ճիշտ չէր, եղբայրը չէր արձագանքում: Այն ժամանակ նա քառասունհինգ տարեկան էր, իսկ կինը՝ ընդամենը՝ քսան: Անշուշտ, ավելի շատ աղջիկն էր սիրահարված իր հմայիչ արտաքին ունեցող եղբորը: Սակայն փաստ է, որ ինչքան մեծ է ամուսինների միջև եղած տարիքային տարբերությունը, այնքան անխուսափելի են վեճերը, քանի որ հաճախ իրար չեն հասկանում: Այդպիսի ընտանիքներում տղամարդը որպես կանոն դառնում է բռնակալ: Կինն իրեն զգում է ինչպես վանդակում, որովհետև բոլոր որոշումները տղամարդը կատարում է կնոջ փոխարեն:

Սակայն որոշ ժամանակ անց կնոջը ծանծրացնում է միօրինակ կյանքն՝ իրենից տարիքով մեծ տղամարդու հետ, և նա գտնում է շրջապատում երիտասարդ երկրպագուի:

Այդպես եղավ և նրանց հետ: Նրա կինը վաղուց սիրած տղամարդ ուներ: Քեղամն իր կնոջ հետ համատեղ կյանքի ընթացքում ունեցել են երեք զավակ, երկու աղջիկ և մի որդի: Նրանք ամուսնացած էին և երեխաներ ունեին: Ավագ դուստրը և որդին ընտանիքներով ապրում էին ծնողների հետ: Եվ այդքան մարդաշատ բնակարանում Քեղամը միայնակ էր: Պատճառը ոչ միայն իր կնոջ հետ ունեցած վատ հարաբերությունն էր, այլև այն, որ նա տարիներ շարունակ հարբեցողի անուն էր ձեռք բերել: Ընկերների հետ հաճախ էին օրվա վերջում հավաքվում իր խանութում ու խմում ժամերով: Իսկ երբ անցավ թոշակի, Ռուբենը եղբոր համար գիշերային պահակի տեղ արեց իրեն ծանոթ հիմնարկներից մեկում: Այնտեղ սովորականի պես ընկերներով հավաքվում ու խմում էին: Այնպես պատահեց, որ ձմռանը օրերից մի օր երբ հարբած քնել էր, էլեկտրական վառվող սալիկի վրա ընկել էր գլխարկը և հրդեհ էր բռնկվել: Ձեռնարկի տերն իմանալով այդ մասին, նրան ազատեց աշխատանքից: Դրանից հետո ավելի տխուր դարձավ Քեղամի առօրյան, քանի որ ապրում էր միայն իրեն հասանելիք թոշակի փողով և սեփական այգում՝ քաղաքից դուրս զբաղվում էր այգեգործությամբ: Գուցե այդպես էլ խաղաղ հունով ամեն ինչ ընթանար, եթե չհիվանդանար ու անկողին չընկներ: Նա բողոքում էր լյարդի հատվածում սուր ցավերից: Պատճառներից մեկն էլ ալկոհոլն էր, մյուսը՝ մրսածությունն ու վատ սնունդը:

Քեղամը շատ ուրախացավ եղբոր այցով:

-Ի՞նչ լավ արեցիր, որ եկար: Ինչպե՞ս եք: Ո՞նց է Հրաչի վիճակը,- հարցերի տեղատարակ թափվեց կրտսեր եղբոր գլխին:

-Մենք՝ ոչինչ: Բայց Հրաչը հիվանդ պառկած է: Օրերով գիշերները գերեզմանատանն էր լուսացնում: Արդյունքում բրոնխները բորբոքվեցին, հիմա էլ դեղեր է ընդունում:

-Ափսո՛ս, նրանք երջանիկ զույգ էին,- ու նա ծխախոտ հանեց գրպանից ծխելու:

-Էդ ի՞նչ ես անում: Դու էլ կարգին վիճակում չես: Քեզ համար ճաշ եմ բերել: Այն դեռ տաք է: Լցնեմ, կեր,- սրտացավ հայացքով ձեռքի պայուսակը դնելով սեղանին՝ ասաց Ռուբենը:

-Հետո կուտեմ: Շնորհակալ եմ: Իսկ ինչ մնում է իմ ծխել-չծխելուն, այժմ դա էական նշանակություն չունի, քանի որ ես շատ չեմ ապրի:

Թեև եղբոր խոսքերից Ռուբենի սիրտն ասես կեղեքվեց ցավից, բայց նա փորձեց կատակել.

-Այդ որտեղի՞ց եզրակացրիր: Չլինի գլխիս Նոստրադամունս ես դարձել:

-Եղբայրս, դրա համար Նոստրադամունս պետք չէ ծնվել: Ես ո՛չ կարգին սնվում եմ, ո՛չ էլ կարգին առողջություն ունեմ: Պատկերացնու՞մ ես, այս տանը ոչ մեկին չի հետաքրքրում իմ հիվանդ լինելը: Ես ինձ ավելորդ մարդ եմ զգում: Դա սարսափելի վիճակ է, երբ գիտակցում ես, որ դու արտահաստիքային մարդ ես հարազատներիդ համար:

-Քեղամ, շա՞տ չես չափազանցնում ամեն բան:

-Երանի՛ այդպես լինե՞ր... Իսկ հիմա լսիր, թե ինչ եմ ասում: Օրումեջ հարևանի երեխաներից մեկին կանչում եմ, փող տալիս, ուղարկում խանութ՝ հացի կամ որևէ ուտելիքի: Այս հիվանդ վիճակիս էլ ճաշ եմ պատրաստում: Կերածս էլ ինչ է՝ հիմնականում կարտոֆիլ ու հաց, երբեմն էլ՝ բանջարեղեն: Լավ է, որ քեզնից բացի մեկ-մեկ էլ ընկերներս են այցի գալիս, ինձ համար նաև որևէ ուտելիք են բերում:

-Իսկ կի՞նդ, երեխանե՞րդ...

-Նրանց համար հավանաբար վաղուց մեռած եմ: Նայիր իմ սենյակի առաստաղին: Տեսնու՞մ ես, որ վերևում լամպ չկա: Այսինքն՝ երեկոյան լույսը վառել չեմ կարող: Երբ բողոքեցի, թե ինչու են այդպես վարվում ինձ հետ, որդիս կոպտորեն սպառնաց, որ իրավունք չունեմ բողոքելու, քանի որ լույսի վարձը չեմ մուծում, հակառակ դեպքում նա պատրաստ է ինձ շարտել ներքև...

-Մեղա՛ քեզ, Տե՛ր... Ինչպե՞ս կարելի է այդպես վարվել հարազատ հոր հետ: Ինձ թվում է, թե դաժան երազ եմ տեսնում:

-Դժբախտաբար, իմ պատմածն իրականություն է: Նրանց թվում է, թե միանգամից մեծ են ծնվել: Ո՞վ է աշխատել, պահել իրենց: Ես ոչ մի գործ չեմ ունեցել երեխաներիս հետ: - Գեղամը մի պահ խոր հառաչեց: - Ժամը յոթից հետո ինձ համար աշխարհը դառնում է մութ ու անտեսանելի: Լավ է, այս ռադիոն էլ ձեռքիցս չեն վերցնում:

-Իսկ աղջիկներդ... Նրանք գոնե ավելի փափկասիրտ են,- նկատեց Ռուբենը:

-Նրանք տղայիս նման ինձ չեն կոպտում, բայց ուշադրություն էլ չեն դարձնում: Եթե տաք ճաշ են պատրաստում կողքիս՝ խոհանոցում, ես էլ ինձ համար կարտոֆիլ եմ եփում, օտարի պես են կանգնում գազօջախի մոտ... Իսկ երբ առողջ էի, չէին թողնում անգամ նստել իրենց գնած կաշվից բազկաթոռին կամ բազմոցին: Ես միայն աթոռին պիտի նստեի: Հեռուստացույցով էլ երբեք իմ նախընտրած ծրագիրը չէի նայում: Պետք է միշտ հարմարվեի նրանց ճաշակին: Թշնամուս անգամ չէի կամենա իմ վիճակում տեսնել: Էհ, Ռուբեն, ծերությունն ամենասուկալի տարիքն է մարդու համար: Դառնում ես անզոր, անօգնական, անպետք մի բան, մանավանդ երբ հիվանդ ես...

-Էլ մի՛ շարունակիր: Ես կխոսեմ կնոջդ հետ: Անհարմար է, ինչպե՞ս կարելի է... Չէ՞ որ միասին տասնյակ տարիներ ապրել եք մի հարկի տակ... Ասենք, նա դեռ ջահել է, հետո ի՞նչ...

-Ականջիս վաղուց հասել է, որ ինձ փոխարինող է գտել: Ես տարիքն առած տղամարդ եմ, այն էլ՝ հիվանդ: Ծերանոցում երևի ինձ համար ավելի լավ կլիներ, քան իմ տանը: Դեռ միայնակ մարդիկ երազում են զավակներ ունենալ: Չէ՛, եղբայր, ամեն ինչ բախտի բան է: Քանի պինդ էի, առողջ, աշխատում էի, ինչ-որ օգուտ ունեին ինձնից, հիմա առաջվա Գեղամից ոչինչ չի մնացել հաջելուց բացի:

Ծայրահեղ հուզմունքից Ռուբենը ձեռքը տարավ դեպի գրպանը և, հանելով բջջային հեռախոսը, տվեց եղբորը:

-Վերցրու՛ հեռախոսը: Ցանկացած ժամին զանգիր ինձ, քո ընկերներին կամ բարեկամներին: Եվ այս գումարը դի՛ր բարձիդ տակ,- կրտսեր եղբայրը նաև ծալած թղթադրամներ տվեց հիվանդ եղբորը:

-Չէ՛, պետք չէ: Ես սովորել եմ առանց հեռախոսային կապի ապրել,- փորձեց հրաժարվել Գեղամը:

-Ինձ մի՛ նեղացրու: Դու մենակ չես: Ոչ էլ մենք էնք ջունգլիներում ապրում: Ես ինձ համար նորը կգնեմ: Մի՛ մոռացիր, որ աշխատանք ունեմ:

-Շնորհակալ եմ, եղբայրս,- թախծոտ ժպտաց Գեղամը:

Ռուբենը մինչև հոգու խորքը հուզված՝ ոտքի կանգնեց: Գեղամի կնոջը հանդիպելով միջանցքում՝ ոչինչ չասաց: Դրանից էլ սրտնեղեց: Ի՞նչ աներ: Եղբոր խնդրանքը չդրժեց: Ի վերջո յուրաքանչյուր ընտանիքում ամուսիններն իրենց հաշիվներն ունեն: Ռուբենը ցավով մտածեց, որ եղբայրը տարիներ ի վեր աստիճանաբար կորցրել էր իր հանդեպ ունեցած հարգանքը երեխաների մոտ: Ահա ո՞րն էր ողբերգությունը...

Հրաչը շաբաթներով տարված լինելով կնոջ մասին ունեցած մտքերով, զգում էր, որ անտեսել էր որդուն: Հիշեց, թե ինչպես էին նախկինում իրենք Կարոյին շրջապատել ջերմությամբ, հաճախ տանելով նրան կարուսել, այգի, խաղահրապարակ՝ գնելով որդու նախընտրած քաղցրավենիքն ու խաղալիքները: Սակայն քանի որ տղան սեպտեմբերին դպրոց պիտի հաճախեր, հայրը մտածում էր, որ նրա համար պակաս կարևոր չեն մաթեմատիկական աղյուսակին ծանոթացնելը, մտավոր բնույթի խաղերին մասնակից դարձնելը: Հրաչը Կարոյին կանչելով իր մոտ, որոշեց հերթական անգամ նրա հետ շախմատ խաղալ: Փոքրիկ տղան ուրախացավ, որ հայրն ուզում էր շփվել իր հետ:

-Հայրիկ, դու ե՞րբ կառողջանաս,- հարցրեց որդին:

-Շուտով, տղա՛ս: Դու քարերդ շարիր: Տեսնեմ, հո՞ չես մոռացել այն, ինչ գիտես:

Կարոն խաղատախտակին շարեց սպիտակ գույնի քարերը: Հայրը քթի տակ ժպտաց: Հասկացավ, որ որդին ուզում էր առաջինը քայլեր անել: Հրաչն ուշի- ուշով հետևում էր խաղին՝ հաճախ ուղղություն տալով նրան, որպեսզի հնարավորինս խուսափի սխալ մոտեցումներից: Եղավ այնպես, երբ Հրաչը տարվեց մտքերով և քարացած տխուր հայացքը մի կետի հարեց: Նկատելով այդ՝ տղան ասաց.

-Հայրիկ, ինչո՞ւ քարս չես վերցնում: Թե՞ նորից մայրիկի մասին ես մտածում:

Հրաչը միանգամից սթափվեց որդու հարցադրումներից, սակայն անկեղծ հնչեց նրա պատասխանը:

-Այո՛, մայրիկի մասին էի մտածում: Ես նրան կարոտում եմ:

-Ես էլ եմ ամեն օր կարոտում նրան, հայրիկ: Բայց տատիկն ասում է, որ նա երկնքից հետևում է մեզ:

-Իհարկե, որդիս: Նա քեզ շատ է սիրում, և դու պետք է լավ սովորես դպրոցում, որպեսզի չհիասթափեցնես ո՛չ ինձ, ո՛չ մայրիկին,- հազի պատճառով Հրաչի խոսքը կիսատ մնաց: Նա որդուն խնդրեց մի բաժակ ջուր բերել: Ծխելու մեծ պահանջ զգաց, բայց զսպեց ցանկությունը:

Քիչ անց Կարոյի հետ Հրաչի մոտ եկավ մորաքրոջ աղջիկը՝ Մանեն: Նա սովորական արտաքինով քառասուն տարեկան կին էր: Ամուսնալուծված էր, ուներ մի աղջիկ, որի հետ շուրջ քսան տարի էր, ինչ ապրում էր Հունաստանի Սալոնիկ քաղաքում: Արդեն մի քանի ամիս էր, ինչ գտնվում էր Երևանում: Ականատես էր եղել նաև Հրաչի ընտանեկան ողբերգությանը: Այժմ այցելել էր նրան՝ մեկնելուց առաջ հրաժեշտ տալու նպատակով: Ջարմիրիկի հետ ողջագուրվելուց հետո Մանեն նստեց նրա անկողնու մոտ ընկած աթոռին:

-Ինչպես տեսնում եմ, շախմատ էիր խաղում որդուդ հետ: Եկա ու խանգարեցի ձեզ:

Փոքրիկ Կարոն ջուրը տալով հորը՝ կանգնած էր մնացել նրա կողքին:

-Այս տոպրակն էլ քեզ համար է, մանչուկ: Վերցրու,- Մանեն ձեռքի տոպրակը տվեց Կարոյին:

-Գնա՛ տատիկի մոտ, տղաս: Կիսատ թողած խաղը հետո կշարունակենք,- Հրաչն այնուհետև դառնալով բարեկամուհուն՝ հարցրեց:- Ինչու՞ որոշեցիր մեկնել: Մի քիչ էլ Երևանում մնայիր:

-Չեմ կարող: Աղջիկս այնտեղ մենակ է: Հետո էլ պիտի գնամ ու նորից լծվեմ աշխատանքի:

-Մայրդ ինչպե՞ս է: Գոնե կարոտդ առա՞ր:

-Էհ,- ձեռքը թափ տվեց Մանեն:- Նա շատ է ծերացել ու ծերունական հիվանդությունն էլ մի կողմից է նեղում: Մոռանում է շատ բան: Ես ամեն ամիս նրան փող եմ ուղարկում:

-Չէ՞ որ նա քրոջդ խնամքի տակ է: Ինչու՞ ես անհանգստանում:

-Ամեն ինչ չեմ կարող ասել,- Մանեն չուզեց գանգատվել քրոջից, մանավանդ որ խռով է նրանից:- Դու քեզնից պատմիր: Ինչպե՞ս է առողջական վիճակդ: Տեսքդ կարծես տեղն է եկել:

-Երևի: Փորձում եմ լավանալ: Միայն թե ինձ համար ծանր շրջան է: Մինչև ամեն բան հաղթահարեմ, ժամանակ է պետք:

-Համոզված եմ, որ դու ուժեղ կամքի տեր ես: Կարոյին էլ կմեծացնես, քեզ պես հրաշալի տղամարդ կդարձնես: Նա է քո կյանքի իմաստը:

Հրաչը ոչինչ չպատասխանեց: Նա, անշուշտ, համամիտ էր Մանեի մտքերի հետ, միայն թե իր մեջ գերբնական ուժ պիտի գտներ՝ դիմակայելու համար կնոջ ծանր կորստին:

-Ինչ-որ բան ա՞յն չասացի,- Մանեն նայելով նրա մտախոհ դեմքին՝ տարակուսած հայացքը դարձրեց Հրաչին:

-Չէ՛, դու իրավացի ես:

-Կուզե՞ս ամառն արի Հունաստան: Մի քիչ կսթափվես, գեղատեսիլ վայրերով կշրջես ու կտեսնես, թե մենք ինչպես ենք ապրում:

-Կարելի է: Կմտածեմ:

Մանեն իր գարմիկին տխուր մտքերից հանելու համար իսկույն ևեթ հետադարձ հայացք ձգեց անցյալի վրա:

-Հիշու՞մ ես, թե պատանեկության տարիներին ինչպես էինք հաճույքով էքսկուրսիաներ կազմակերպում, լեռները մազլցում:

-Իհարկե, հիշում եմ...Երբեք լավ հիշողությունները չեն ջնջվում մարդու գիտակցությունից, ինչպես նաև չեն անհետանում դառնություն պատճառող հուշերը:

Մանեն մեղավոր հայացքով նայեց Հրաչին: Նաև հասկացավ, որ միևնույն է, կյանքում իրար կողք-կողքի քայլում են ուրախությունն ու տխրությունը և երբեմն իսկապես դժվար է նրանց միմյանցից տարանջատել:

-Ի՞նչ արած, կյանքը հետաքրքիր է իր գույներով: Իսկ այդ գույներից ներս կան թե՛ ցնծության, թե՛ տառապանքի արցունքներ: Արդյո՞ք պոետիկ են մտածում, թե՞ ինձ թվում է, -ժպտաց Մանեն:

-Առաջվա խենթուկն ես: Դրա համար էլ սիրում եմ քեզ:

-Ի դեպ, ո՞նց է Անդրանիկը: Ե՞րբ է ավարտելու բուհը:

-Այս տարի: Նա խելոք է: Դասերից հետո անգամ կես հատիքով աշխատում է: Գերազանց տիրապետում է համակարգչային վեբ-դիզայներական ծրագրին և երբեմն պատվերներ է կատարում:

Ներս մտավ Հրաչի մայրը՝ տիկին Նունեն, նրանց հրավիրելով ճաշի:

-Ո՛հ, ձեզ հետ ճաշել չեմ կարող: Դեռ պիտի ընկերուհուս այցելեմ, որոշ գնումներ անեմ, որ հասցնեմ: Վաղը մեկնելու եմ, մորաքույր,- ոտքի կանգնեց Մանեն:

-Գոնե սուրճ կխմեինք,- ավստասանք հայտնեց Հրաչը:

-Հաշվիր, որ խմել եմ: Կարևորն այն է, որ ձեզ այցելեցի...Լավ մնացե՛ք: Ես հեռախոսով կզանգեմ ձեզ,- համբուրելով բոլորին՝ նա շտապ հեռացավ:

Ակնհայտ է, որպեսզի մարդը լիարժեք ապրի, պետք է անպայման զգա և օգտագործի տրամադրությունը: Երբեմն մարդիկ սակայն զգացմունքներին տեղի են տալիս՝ պահելով դրանք հսկողության տակ: Ուրիշ իրավիճակներում, ընդհակառակը, զգացմունքներն ավելի մեծ դեր են խաղում մեր վարքագծի վրա, քան գիտակցությունը: Կարևորն այն է, որ թե՛ զգացմունքները, թե՛ տրամաբանելու ունակությունը պահեն մեկը մյուսի հավասարակշռվածությունը: Իսկ եթե այն կորչում է, զգացմունքները ղեկավարում են մեր կյանքը:

Ուրբեն Առաքելյանին չափազանց մտահոգում էր ավագ որդու առողջական վիճակը: Բրոնխների մրսածությունը ժամանակի ընթացքում կանցնի, այնինչ հոգեկան վիճակը դեռ շարունակում էր մնալ լարված: Հայրը նկատել էր, որ Հրաչը հաճախ ոչ միայն ժամերով տարված էր լուսանկարչական ընտանեկան ալբոմը թերթելով, այլև ժամերով ինչ-որ ձայնագրություն էր լսում: Նա նույնիսկ դռան ետևից փորձել էր հասկանալ, թե ինչ էր ունկնդրում: Պարզվեց, որ նրա և վաղամեռիկ հարսի սիրո խոստովանություններն ամփոփող ձայնասկավառակ էր: Եվ երբեք չէր միջամտել՝ հորդորելու կամ նախատելու նրան: Սակայն այս ամենն ինքնին նշանակում էր, որ որդին ապրում էր անցյալով ու միտք չունեի հայացք ձգելու դեպի ներկան, ուր ապրում է: Այդ նպատակով հարմար գտավ իրենց տունը հրավիրել իրեն մտերիմ մի քահանայի, որպեսզի առանձնագրույց ունենար որդու հետ: Անշուշտ, այդ օրը Հրաչը փոքր-ինչ անակնկալի եկավ՝ տեր Հարությունին իրենց տանը տեսնելով: Բայց մի կողմից էլ ուրախ էր, որ Աստծո ծառայի հետ անկեղծ զրույց կունենա և գուցե լուսաբանվեին սիրտն անվերջ կեղեքող հարցերը:

-Ձեր օրհնությունը, տեր հայր,- հեզաբարո տոնով ասաց Հրաչը:

-Աստծո օրհնությունը թող միշտ քեզ վրա լինի, որդիս: Գիտեմ, որ մեծ կորուստ ես ունեցել և, բնականաբար, տառապում ես: Հավանաբար մտածում ես, որ այլևս հոգեկան սատարում չես ունենա կյանքում:

-Ճիշտ այդպես, տեր հայր,- կամաց մրմնջաց Հրաչը:

-Հասկանում եմ քեզ, զավակս: Անկասկած, նեղացած դիմել ես նաև Աստծուն, թե ինչու նա անարդար գտնվեց, ինչու քո սիրած կնոջը խլեց քեզնից: Բայց, հասկացիր, Տերը տանում է մարդուն այն ժամանակ, երբ տեսնում է, որ նա պատրաստ է ընդունել հավերժական կյանքը: Այնինչ դու անգիտակցաբար շարունակում ես տառապել:

Հրաչը ոչինչ չպատասխանեց: Հոգու խորքում նա ամենևին համաձայն չէր քահանայի այն մտքին, թե կինը պատրաստ էր հավերժական կյանքին:

-Ես տեսնում եմ, որ դու ապրում ես հուշերով: Բայց մենք երբ կառչում ենք մահացած մարդուց, ուզում ենք լինել նրա հետ: Մինչդեռ մենք պետք է ապրենք, մենք ունենք բազմապիսի խնդիրներ ու ծրագրեր: Նա, ով ընդունում է Աստծուն, ավելի հեշտ է այդ ամենը հասկանում:

-Ուրեմն տեր Հարություն, կարծում եք, որ ես որպես հավատացյալ մարդ, մահը պետք է հանգի՞ստ ընդունեմ:

-Անտարակույս, որդիս: Ինչ էլ պատահի կյանքում, մենք չպետք է կորցնենք մեր հավասարակշռությունը: Մենք ամեն ինչին պետք է վերաբերվենք հավասարաչափ՝ և՛ վշտին, և՛ ուրախությանը: Գուցե դու ավելի շատ տառապում ես այն պատճառով, որ մեղքի զգացում ունես կյանքից անժամանակ հեռացած կնոջդ հանդեպ: Հնարավոր է դավաճանությունդ ես քողարկել:

-Երբեք: Ավելի շատ մեղավոր եմ զգում, որ չհասցրի իրականացնել նրա երազանքները:

-Մարդը երբ էլ հեռանա այս աշխարհից, միևնույն է, անկատար ծրագրեր ու գործեր է թողնում: Իսկ թե մեր երազանքներից ու ծրագրերից քանիսը մեր կենդանության օրոք կիրագործվեն, միայն Աստծուն է հայտնի: Այնպես որ, պետք է հաշտվես կորստիդ հետ: Անվերջ վշտանալ, ընկճվել, չի կարելի: Դա ընդամենը փոքրոգություն է: Հավատն է մարդու համար ուժեղ ու հուսադրող դեղամիջոցը:

-Բայց ես հաճախ Շուշանին տեսնում եմ երազներիս մեջ, շփվում եմ նրա հետ և ուզում եմ, որ ապրեմ երազներով ու չարթնանամ քնից, -Հրաչի դեմքով հուսահատության ալիք անցավ:

-Չէ՛, այդպես չեղավ: Քո խոստովանությամբ հաղորդում ես, որ եսասեր ես, հպարտ, անհավատ: Այդ ձգտումով ասես ուզում ես անպայման ետ վերադարձնել քո սիրած էակին:

-Ո՛չ: Ուզում եմ միայն միշտ շփվել նրա հետ, տեսնել նրա դեմքը, լսել ձայնը...

-Հրա՛չ, ախր պետք է սթափ մտածես, հասկանաս, որ նրա հոգին գտնվում է ուրիշ տիրույթում և այդ պատճառով չի կարելի գրուցել նրա հետ: Այնտեղ ուրիշ հոգեկան օրենքներ կան, այնտեղ չկա ժամանակի հասկացությունը:

-Տեր հայր, բայց կան մարդիկ, ովքեր հավատում են յուրաքանչյուր երազի:

-Ինչպե՞ս կարելի է...Անգամ կյանքում մենք չենք հավատում յուրաքանչյուր մարդու: Ցանկանում ենք փորձել նրան, հասկանալ, թե ինչով է շարժվում: Եվ դա միանգամայն ճիշտ է, որովհետև աշխարհը կատարյալ չէ, և մեղքերով ենք շրջապատված: Այս երկրի վրա կան տարբեր տեսակի խարդախներ, խաբեբաներ և այլք, ում չպետք է վստահել: Իսկ երազների աշխարհը թաքնված աշխարհ է: Անինչ դու փորձում ես երազներին հավատալ՝ չվախենալով խաբվելուց:

Հրաչը երկիմաստ հայացքով նայեց տեր Հարությունին:

-Նշանակում է, որ երազներին առհասարակ չպիտի՞ հավատալ...

-Իհարկե, կան երազներ, որոնց պետք է հավատալ:

-Այսինքն՝ ո՞ր տեսակի երազներն են շատ՝ օգտակա՞ր, թե՞ սուտ:

-Ըստ իս՝ խելամիտ տրամաբանող մարդը երազների մեջ տեսնում է այն ամենը, ինչի մասին մտածում է ցերեկով:

-Բայց մարդիկ, այնուհանդերձ, երազների միջոցով ուզում են իմանալ, թե ինչպես է մեռած մարդու հոգին ապրում և որտեղ է այն գտնվում:

Տեր Հարությունը գլուխը թեթևակի օրորեց: Այդ հարցն իսկապես բոլոր մահկանացուներին է հուզում, նաև անհանգստացնում:

-Շատ լավ է, որ մենք այդ մասին չենք իմանում,- պատասխանեց նա:- Աստված դա թույլ չի տալիս, քանզի ոչ միշտ է ճշմարտությունն օգտավետ: Խորհուրդ կտայի քեզ հաճախ աղոթել եկեղեցում, տանը: Մի՛ թաքնվիր քո զգացմունքներից: Իսկ հոգեկան խաղաղություն գտնելու համար կարող ես նաև եկեղեցում հոգեհագիստ պատվիրել... Կյանքից հեռացածը միշտ կմնա քո կյանքի մի անբաժանելի մասը:

Տեր Հարությունի հեռանալուց հետո Հրաչն իրեն հոգեպես համեմատաբար ավելի հանգիստ զգաց:

Մինչև օգոստոսի վերջը Հրաչը կարծես թե կազդուրվեց, հոգեկան վիճակն էլ համեմատաբար կարգավորվեց, իսկ սեպտեմբերի մեկին որդու ձեռքը բռնած ուղեկցեց նրան դպրոց: Այդ օրը նրանց կողքին էին ծնողները, եղբայրը, մտերիմ մարդկանցից մի քանիսը: Կարոն յոթերորդ երկնքում էր: Նայելով տղայի ուրախությունից խանդավառ դեմքին, Հրաչը դարձյալ ավստասանքի խոր զգացում ապրեց՝ հիշելով Շուշանին: Չէ՞ որ իրենք միասին էին երազում տղային դպրոց տանել: Որդին ընդունվեց այնպիսի տեղ, ուր նաև երկարօրյա պարապմունքներ կային: Այսինքն՝ նա պիտի վերադառնար ժամը հինգին՝ օրվա դասերը պատրաստած: Հրաչը մտատանջվելով ներքին մենությունից, քաջ գիտակցում էր, որ կյանքում միայնակ չէր, քանի որ շրջապատված էր ծնողների հոգատարությամբ ու ջերմությամբ: Մնալով նրանց մոտ՝ նա իր սեփական բնակարանը բարձիթողի վիճակում էր թողել: Այն թերևս մատնված էր դատարկության: Հրաչն ամեն կերպ փորձում էր իրեն ետ պահել ծանր հուշերից:

Բարեբախտաբար, նա հենց այդ օրերին տեսահոլովակ նկարահանելու պատվեր ստացավ: Օպերատոր Հովիկը, որը նաև իր գործընկերն էր, մի պատվեր բերեց երիտասարդ դեռևս անհայտ երգչի կողմից: Հայրենասիրական բնույթի երգի հիման վրա տեսահոլովակ նկարահանելու համար Հրաչը մի փոքր սցենար կազմեց: Իսկ նկարահանումները պիտի արվեին Լեռնային Ղարաբաղում: Իհարկե, նա մի քանի անգամ առիթներ էր ունեցել գտնվել չնաշխարհիկ ու գողտրիկ հայկական այդ երկրամասում: Հիմա էլ, աշնան սկզբներին նկարահանող խմբով մի քանի օրով մեկնեցին Արցախ: Հրաչի ծնողներն ուրախացան, երբ իմացան նրա ճամփորդության մասին: Նրանք մտածում էին, որ իրենց որդին որքան շատ տարված լիներ աշխատանքով, այնքան հեշտ կլիներ նրա համար հաղթահարել հոգեկան ճգնաժամը:

Վերջապես խումբը Հրաչի գլխավորությամբ ժամանեց Արցախ: Սկզբում նրանք նկարահանումներ կատարեցին Շուշիում: Դա պատմական նշանակությամբ մի քաղաք է, որը 19-րդ դարի առաջին կեսերին համարվում էր Անդրկովկասի մշակութային կենտրոններից մեկը: Սակայն 20-րդ դարի սկզբին թշնամու կողմից այն ենթարկվեց բարբարոսության՝ աստիճանաբար կորցնելով իր երբեմնի փառքը, քանի որ քաղաքը հայաթափվելով, յոթանասուն տարի գտնվեց թուրքերի տիրապետության ներքո: Այնտեղ մնացած հայկական

եկեղեցիներն օգտագործվեցին որպես գոմեր: Շուշին իր ազատությունը նվաճեց Արցախյան պատերազմի ժամանակ՝ 1992 թվականի մայիսի 9-ին: Այստեղ կրկին վերակենդանացան ոչ միայն եկեղեցիները, այլև աշխուժացավ կյանքը: Ցավոք, տասնյակ տարիներ են պետք, որպեսզի քաղաքը վերակառուցվի:

Այնուհետև նրանք ճանապարհվեցին դեպի Ստեփանակերտ, որտեղ նրանց դիմավորեց Հրաչի վաղեմի ընկերներից մեկը՝ Դավիթը, որը որպես սցենարիստ էր աշխատում տեղի հեռուստատեսությունում: Ճաշից հետո նրանք նկարահանեցին քաղաքի գեղեցիկ այգիներն ու մաքրամաքուր փողոցները: Ընկերը տեղեկացրեց, որ անգամ պատերազմի տարիներին իրենց քաղաք ժամանած օտարերկրացիները զարմանում էին քաղաքի մաքրությամբ: Ավելին. ծմռան ցրտին բնակիչները թշնամու գնդակներից թաքնվելով ապաստարաններում, մրսում էին, բայց ծառերը չէին կացնահարում: Այս ամենը կարծես անհավատալի է թվում, սակայն փաստը մնում է փաստ: Իսկ երբ նկարահանող խումբը տեղավորվեց քաղաքի կենտրոնական մասի բացօթյա այգիներից այգում՝ սուրճ խմելու և հանգստանալու, գրույցն ավելի ընդարձակվեց:

-Գիտե՞ս,- դիմեց նա արցախցի ընկերոջը, - ես զարմանում եմ, որ պատերազմում հաղթանակ ձեռք բերած արցախցին զրկված է ազատ մամուլից, ազատ խոսքի իրավունքից: Տեղի թերթերը միայն գովաբանում են իշխանություններին, իսկ ընդդիմադիր լրագրողներին այնպես են հալածում, որ ստիպված հեռանում են հայրենիքից:

-Ցավոք, այդպես է: Հայաստանում ազատ խոսքի համար մարդկանց չեն հալածում, այնինչ նույնը չի կարելի ասել մեր մասին: Այդպես էր նաև կոմունիստների ժամանակ: Փառաբանում էին նրանց, իսկ այլախոհները դառնում էին քաղաքական բանտարկյալներ:

Հրաչն ավստասանքով նայեց ընկերոջը:

-Եվ ուրիշ երկրների առաջ ներկայանում ենք որպես ժողովրդավարական, դեմոկրատիայի սկզբունքները պաշտպանող երկիր: Մենք խաբում ենք նրանց, սակայն մինչև ե՞րբ... Չեմ զարմանա, եթե ասես, որ տարեցտարի նաև լայն թափ է ստանում արտագաղթը: Կարող է իր չափերով Հայաստանին չհասնի, բայց ի վերջո արցախցին արյուն է թափել, որ այսօր ազատ ապրի իր հայրենի հողի վրա: Իսկ դրա համար անհրաժեշտ են լավ պայմաններ:

-Այո՛, այստեղից մարդիկ հեռանում են այն պարզ պատճառով, որ աշխատանք չկա: Հիմնականում տեղափոխվում են Ռուսաստան:

-Դու ինչու՞ չես լքում հայրենիքդ,- հարցրեց օպերատոր Հովիկը:

-Հայրս զոհվել է Արցախյան կռվում: Մայրս երբեք չի ցանկանա հեռանալ այստեղից: Ավագ եղբայրս ապրում է Դոնի Ռոստովում: Նա է հաճախ մեզ նյութապես օգնում: Թե չէ ես իմ սցենարիստի չնչին աշխատավարձով ընտանիքս ո՞նց պահեմ: Եվ ընդհանրապես իմ երկրացիներից շատերն օգնություն են ստանում դրսից,- թախծեց Դավիթը:

-Քանի՞ տարեկան էր հայրդ, երբ զոհվեց,- հարցրեց Հրաչը:

-Երեսունմեկ: Ես այն ժամանակ ընդամենը տասը տարեկան էի: Հիմա ճիշտ հորս տարիքին եմ, բայց պատերազմի արհավիրքները չեն մոռացել: Անգամ երբ եթերով Արցախյան կռիվների մասին վավերագրական նյութեր են ցուցադրում, ինձ միշտ թվում է, որ ուր որ է, հորս կտեսնեմ նրանց շարքերում: Նրա կարոտն ու բացակայությունը շա՛տ եմ զգում: Սակայն հորս ապրած կյանքն էլ ինձ համար ուսանելի դաս եղավ: Անշուշտ, որպես տղամարդ շուտ կայացա ուրիշների նման: Առհասարակ Արցախում մանուկները ժամերով են հասունանում: Միայն ավստու՜մ եմ, որ այստեղ ապրելու և ընտանիք պահելու հնարավորությունները չնչին են, գրեթե զրոյականին մոտ:

-Այդպիսին է վիճակը նաև Հայաստանում: Սփյուռքի նախարարությունը «Արի տուն» ծրագիր է ուզում իրականացնել, բայց տեղացիներին չի ասում՝ տնից մի՛ հեռացեք: Սակայն չմոռանանք, որ Արցախը հարաբերական խաղաղության մեջ է: Աստված ոչ արասցե, եթե վաղը պատերազմ սկսվի, ովքե՞ր պիտի պաշտպանեն մեր երկիրը: Չէ՞ որ նախկին

ազատամարտիկներից շատերը հիասթափված են, քանի որ բարիքներից օգտվում են նրանք, ովքեր ռազմի դաշտում չեն եղել,- ասաց Հրաչը:

-Արցախում բազմաթիվ ՀԷԿ-եր կան, որտեղից էլ էլեկտրաէներգիա են ստանում, բայց դրանց դիմաց վճարումները թանկ են: Նույնն է նաև հեռախոսակապը: Այստեղ ավելի թանկ է, քան Հայաստանում: Շուկաներում էլ մթերքների գներն ավելի բարձր են մերից: Ջարմանալի է, թե այստեղ իսկապես ինչպե՞ս են մարդիկ ապրում: Բուլդոզերներ, առանց բացառության, անհրաժեշտ է հերոսի կոչում շնորհել և խոնարհվել նրանց համբերության առջև,- կրկին իր վրդովմունքը հայտնեց Հովհիկը:

-Ցավալին այն է, որ երբ թշնամին էր մեզ շահագործում, բողոքում էինք, նամակներ ուղարկում Մոսկվա: Հիմա մերոնք են մեզ շահագործում ու ծպտուն հանել չես կարող, թե չէ հալածանքի կենթարկվես: Այսինքն՝ պատերազմել թշնամու դեմ, բայց յուրայինի թույլ տված անարդարության համար ձեռն չհանել: Ավելի լավ է թեման փոխենք, թե չէ մեր երիտասարդ երգիչը հուսահատված կհեռանա Արցախից,- բարեհամբույր ժպտաց Դավիթը:

-Ասում են, որ տարեցտարի այստեղ զարգանում է զբոսաշրջությունը: Իսկապե՞ս այդպես է, թե՞ չափազանցնում են,- հարցրեց երգիչ Վաչագանը:

-Զբոսաշրջությունն իսկապես զարգանում է: Օտարերկրացիները հիացած են մեր լեռնաշխարհի բնությամբ, տեսարժան վայրերով: Նրանք երբեք էլ չեն իմանա, թե ինչպես է իրականում տառապում արցախցին,- պատասխանեց Դավիթը:

-Իսկ ո՞ր վայրեր են զբոսաշրջիկները հաճախում,- հարցրեց Վաչագանը:

-Նրանց համար երկրամասի գրավչության օբյեկտներ են հանդիսանում Շուշին, Գանձասարը, Ամարասը, Նիկոլ Դումանի տուն-թանգարանը:

Այդ օրը նկարահանող խումբը գիշերեց Ստեփանակերտում: Իսկ հաջորդ օրն առավոտյան նրանք մեկնեցին Գանձասար: Այցելեցին նշանավոր Գանձասար վանքը: Վաչագանին նույնպես նկարեցին այնտեղ: Ինչպես միշտ, այնտեղ մարդաշատ էր: Բազմաթիվ օտարերկրացիներ կային: Երեկոյան նորից նկարահանեցին վանքը, որը գիշերային մթության մեջ նմանվում էր երկնքից կախված վառվող կանթեղի: Ընդհանրապես նկարահանեցին Գանձասարի գեղատեսիլ բնության տեսարանները, Խաչեն գետը, բլուրներից մեկի վրա փռված թաթերով հսկայական առյուծի արձանը: Վերջինս խորհրդանշում է արցախցու ուժը, որը պատրաստ է բզկտել հակառակորդին, եթե նա փորձի մոտենալ իր հայրենի սահմաններին: Երիտասարդ երգիչը արտասովոր ցնծության մեջ էր: Նա առաջին անգամն էր լինում այդ վայրերում: Այնուհետև Դավիթի ուղեկցությամբ նրանք մեքենայով հասան Խաչեն գետի տարածքում գտնվող մի հրաշալի վայր՝ հանգստանալու: Այնտեղից թոնրի լավաշ վերցրին, խորոված, խմիչք և վայելեցին հանգիստը՝ գիշերելով Գանձասարում: Մյուս օրը ճանապարհվեցին դեպի Ամարաս:

Հայտնի է, որ մարդու առողջության համար ճիշտ սննդից բացի ոչ պակաս կարևոր են մարդկային շփումը և հոգեկան սաստարումը: Սովորաբար մարդն իր շրջապատում հինգից ավելի մարդկանց հետ է շփվում: Հատկապես խնդիրը խորանում է տարիքի հետ: Մարդն անցնում է թոշակի և կորցնում է զբաղվածության աղբյուրը: Այդ ընթացքում էլ ընկերների թիվը պակասում է: Արդյունքում մենությունն է և հոգեկան ճգնաժամը:

Ռուբեն Առաքելյանը տպարանում էր, երբ զանգեց եղբայրը: Խնդրեց իրեն այցի գալ: Փորձաշատ տպագրիչը, որ անսարք տպագրական մեքենան էր կարգի գցում, խոստացավ գործից հետո հանդիպել եղբորը:

-Ի՞նչ կուզենայիր բերեի,- հարցրեց Ռուբենը, թեև իր հետ, անկասկած ուտելիքներ պիտի վերցնեիր որևէ խանութից:

-Հաց և ծխախոտ:

-Էլի՞ ծխախոտ: Դու գիտես, որ ծխելը...

Ավագ եղբայրը չթողեց, որ նա շարունակեր խրատներ կարդալ:

-Նաև օղու մի փոքր տափաշիչ, եթե դժվար չէ քեզ համար:

-Ի՞նչ ասեմ: Եթե ցանկություն ունես դեղերի հետ խմիչք օգտագործել, դա քո իրավունքն է: Հաշվիր, որ ցանկությունդ կատարված է: Եղբոր հետ հեռախոսագրույցից հետո նա մտածեց, որ միևնույն է, հիվանդ Գեղամին ոչինչ չի օգնի: Նա անբուժելի հիվանդ էր, և որ այս կյանքի հետ շուտով իր հաշիվները հավիտյան կփակի: Այդ դեպքում ինչու՞ մերժել նրա խնդրանքը: Չէ՞ որ մեծ առումով մարդն իրավունք ունի այս աշխարհում օգտագործել այն ամենը, ինչն իրեն հաճույք է պատճառում:

Եվ, իսկապես, երբ աշխատանքից հետո Ռուբենը հայտնվեց եղբոր մոտ, վերջինս գոհ ժպտալով՝ նայեց նրա տոպրակին: Կրտսեր եղբայրը ուտելիքները դրեց սեղանին, հետո այն մոտեցրեց անկողնուն, որ հարմար լիներ հիվանդի համար: Իր հետ բերել էր նաև միանգամվա օգտագործելիք ավիսներ և բաժակներ:

-Ես էլ քաղցած եմ, քեզ հետ կձաշեմ,- ժպտաց Ռուբենը:- Դու այսօր գոնե ինչ-որ բան կերե՞լ ես:

-Ո՛չ: Իմ սենյակում ոչինչ չկա: Միայն առավոտյան շաքարով թեյ եմ խմել:

-Ախր քո սենյակում կարծես արդեն ցուրտ է: Մի՛ մոռացիր, որ աշունն իր ավարտին է մոտենում:

-Ի՞նչ անեմ, ինձ մոտ տաքացուցիչ չկա: Հարազատներիս երազածն էլ այն է, որ շուտ ռադս քաշեմ:

-Ես քեզ համար մի փոքրիկ էլեկտրական սալիկ եմ բերել: Կտաքացնես սենյակդ: Դրա վրա էլ սուրճ կեփես կամ թեյ: Իսկ հոսանքի դիմաց վարձդ կտամ: Ձերոնց ասա՛, որ չանհանգստանան,- Ռուբենը պայուսակից հանեց էլեկտրական տաքացուցիչը և միացրեց:

-Ապրես, որ հետո բերեցիր: Ձեռքերս էլ երբեմն դրանով կտաքացնեմ:

Ռուբենը թախծեց ու խղճաց եղբորը: Նաև հաստատապես համոզվեց, որ պարտավոր է կատարել նրա ցանկությունները: Իր հետ բերել էր փոքր ավիսների մեջ պատրաստի սալաթներ բանջարեղենից, ապխտած միս, մածուն, միրգ:

-Դե լավ, լցրո՛ւ բաժակները, մի-մի թաս խմենք,- պայծառացավ եղբայրը:

-Անպայման կխմենք,- օղու շիշը տոպրակի մեջ պահելով՝ պատասխանեց նա:- Միայն սկզբում սեղանից օգտվիր: Դատարկ ստամոսքին միանգամից օղի լցնել պետք չէ:

Ավագ եղբայրը երեխայի պես ենթարկվեց: Նա իր առջև դրված ավիսի մեջ որոշ ուտելիքներ դրեց և մեծ ախորժակով սկսեց ծամել:

-Ռուբեն, դու քո նվիրած ձեռքի հեռախոսով ինձ մեծ լավություն արեցիր: Հիմա զանգում եմ սրան-նրան, խոսում եմ մարդկանց հետ, մենակությունս կիսվում է...

-Ուրախ եմ քեզ համար: Խոսիր, ինչքան ուզում ես: Քո հեռախոսահամարին միշտ փող կփոխանցեմ: Եթե համաձայնվեիր իմ տուն տեղափոխվել, ամեն ինչ ուրիշ կերպ կլիներ:

-Պետք չէ: Իմ շրջապատի մարդիկ իմ մասին ի՞նչ կմտածեն: Ես ընտանիք ունեմ, սակայն իմ դագաղը քո՞ տնից պիտի հանեն:

-Չէ՛: Դու անուղղելի ես: Հիվանդ վիճակում էլ քո տնեցիների թասիբն ես պահում:

-Է՛հ, եղբայրս, երբ մարդ ակամայից մտածում է իր անցած ճանապարհի մասին, ապրված կյանքն ակնթարթի պես է թվում:

Ռուբենը ժպտաց ու տոպրակից հանելով օղու տափաշիչը, լցրեց բաժակները՝ չչարաշահելով եղբոր համբերությունը:

-Մեր կենացը, եղբայրս: Այնքան հաճախ եմ հիշում միասին անցկացրած մեր մանկությունն ու պատանեկությունը,- հառաչանքով խոստովանեց ավագ եղբայրը:

-Ամեն բան էլ անցնում է՝ և՛ երիտասարդությունը, և՛ ծերությունը: Մենք ենք պարզապես տարիների հեռվից փիլիսոփաներ դառնում՝ բոլորովին այլ պրիզմայով գնահատելով մեր ապրած տարիները:

-Եթե ես նորից ծնվեի, ուրիշ կերպ կապրեի,- մտախոհ հայացքը դարձրեց կրտսեր եղբորը:

-Այսինքն՝ խոսքը մասնագիտությամբ, թե՞ ապրելակերպի մասին է:

-Ընտանիքը նկատի ունեմ: Ինձ համապատասխան մեկին կընտրեի: Կփորձեի ճիշտ ընտրություն կատարել, որպեսզի ծերության օրերին այսպես անտեր ու միայնակ չլինեի: Ինձ գուցե մտքի խորքում ծու՞ռ աչքով ես նայում, որ այսքան մոտ եմ խմիչքին,- Պեղամը մի ակնթարթ լռեց:

Ռուբենն զգաց, որ եղբայրը կարծես իր մեջ խեղդում էր ցավը, ավստսանքը, անգամ ավելի զգացմունքային էր դարձել, որ հատուկ է այդ տարիքի մարդկանց:

-Պառը կյանքից է, եղբայրս, երբ քեզ չեն հասկանում,- իր խոսքը շարունակեց հիվանդ եղբայրը: -Իսկ երբ մի քիչ ավկոհով եմ օգտագործում, լիցքաթափվում եմ, ավելի թեթև եմ նայում ամեն ինչին:

Ռուբենը լռեց:

-Լռու՞մ ես, որովհետև գիտես, որ ճիշտ եմ խոսում: Ինձ մեկ-մեկ այցելում են ծանոթ մարդիկ, իսկ իմ զավակներ՞ը, որ ինձ հետ են ապրում, ինձնով չեն հետաքրքրվում:

-Մի՛ նեղացիր: Ժամանակին ուրեմն նրանց դաստիարակության հարցում մեծ բացթողումներ են եղել քո կողմից, կնոջդ կողմից...

-Ես ավելի շատ նյութական միջոցներ էի հայթայթում: Կինս էր նրանց դաստիարակությամբ զբաղվում, նաև տնային գործերով: Արդյունքը ինքդ ես տեսնում: Նրանք հիմա զավակներ ունեն, այսինքն՝ նույնպես ծնող են դարձել, սակայն սեփական ծնողի հանդեպ հարգանք չեն տածում:

-Իսկ թռռնիկներ՞դ: Չէ՞ որ հինգ թռռ ունես:

-Նրանք կիսաբաց են անում դուռս, նայում ու թողնում, փախչում:

-Երանի՜ ես էլ հինգ թռռ ունենայի, այնինչ երկու զավակներից ընդամենը մի թռռ ունեմ: Անդրանիկս դեռ սովորում է համալսարանում, իսկ Հրաչն ընդամենը մի որդի ունի: Շուշանի մահից հետո երբ թռռս մեզ մոտ է մնում, ես ու կինս առանց նրան մեր կյանքն այլևս չենք պատկերացնում:

-Պարզ է: Էլ չեմ ասում, որ Հրաչն էլ ձեր խնամքի կարիքն ունի: Առհասարակ տղամարդն առանց կնոջ ոչինչ չարժե: Մեզ համար չափազանց դժվար է մենակ ապրելը: Այդ պատճառով էլ ասում եմ, որ միայնակ տղամարդիկ տասը տարի շուտ են հեռանում կյանքից: Հիմա ոչինչ չեմ ուզում: Միակ ցանկությունս այն կլինեի, որ թույլ չզգայի, դուրս ու ներս անեի, իմ այգին գնայի, ընկերներիս հետ ծառերի տակ նստեի,- ավստսանքով ասաց ավագ եղբայրը՝ կրկին լցնելով օդու բաժակը:

Ռուբենն առանձին աղերսով նայեց եղբորը, որը չափազանց գունատ ու նիհար մատներով շարունակում էր ծխախոտի գլանակը ձեռքին պահել: Նա մտածեց այն մասին, որ եթե մարդն ի վերջո մի օր հեռանում է աշխարհից, ապա գերադասելի է միանգամից հրաժեշտ տալը: Սակայն մեզանից ոչ ոք ինքը չի որոշում: Աստված է տնօրինում մեր ճակատագիրը:

Մինչև ուշ երեկո Ռուբենը եղբոր մոտ մնաց: Ճաշից հետո նրանք միասին նաև տաք թեյ ընպեցին:

Անդրանիկն իր ավագ եղբորից՝ Հրաչից փոքր էր տասներկու տարով: Մի ընտանիքում մեծացած եղբայրներն իրարից տարբերվում էին թե՛ արտաքինով, թե՛ բնավորությամբ: Հրաչն իր խոշոր աչքերով, հաստ ունքերով, ալիքածև մազերով նման էր հորը: Անդրանիկն ավելի շատ մորն էր քաշել՝ իր նուրբ դիմագծերով, մանր ու վառվառն աչքերով, ճերմակ մաշկով, գանգուր մազերով: Նա նաև մուգ ակնոցներ էր կրում և ուներ բամբ ձայն: Ի տարբերություն Հրաչի՝ կրտսեր եղբայրն ավելի հավասարակշռված էր: Խելքը նրա բնավորության հիմնական գիծն էր: Անում էր այն, ինչ համարում էր ճիշտ: Եվ բոլորովին պատահական չէր նրա մասնագիտության ընտրությունը: Ջինվորական ծառայությունից հետո էր ընդունվել Պետհամալսարանի տեղեկավարական տեխնոլոգիաների բաժինը և սովորում էր վերջին կուրսում: Նա համակարգչային մասնագետ կդառնա, որը ներկայումս առաջատար ճյուղերից է համարվում: Արդեն տիրապետում էր համակարգչային մի շարք ծրագրերի և նույնիսկ գումարներ էր վաստակում՝ առանձին պատվերներ կատարելու դիմաց: Ջբաղվում էր կարատե մարզաձևով: Եթե Անդրանիկին կարելի է բնութագրել որպես մարդ-տեխնիկա, ապա Հրաչին՝ մարդ-գեղարվեստական կերպար անվանումն է բնորոշիչ: Ի վերջո մասնագիտական գործունեությունը համապատասխանում էր նրանցից յուրաքանչյուրի անհատականությանն ու բնավորությանը:

Անդրանիկի ընկերուհին էր Աստղիկը, որը նրանց կուրս էր տեղափոխվել բոլորովին վերջերս՝ ուրիշ համալսարանից: Արդեն երկու ամիս շարունակ նրա հետ հանդիպում էր: Աղջկան հաճախ հրավիրում էր սրճարան, որևէ կինոթատրոն կամ կարաոկե ակումբ զվարճանալու: Եվ ամեն անգամ Անդրանիկը փորձում էր առավել հետաքրքիր դարձնել իրենց առօրյան: Այդ օրը նախապես երկու տոմս էր գնել դելֆինարիա այցելելու համար: Աստղիկին այդ մասին հայտնեց դասերի ավարտից հետո, երբ սովորականի պես ուղեկցեց նրան: Նա թեև մի անգամ եղել էր աղջիկների հետ այնտեղ, բայց հաճույքով համաձայնվեց Անդրանիկի առաջարկի հետ, քանի որ իրեն դուր էին գալիս ծովային այդ խելացի կենդանիները:

Սակայն կանգառ հասնելով, նրանց մոտեցավ մի երիտասարդ և բարևելով երկուսին՝ ցանկություն հայտնեց Աստղիկին ինչ-որ բան հաղորդելու:

-Իմ ընկերոջ ներկայությամբ ասա՛ այն, ինչ ուզում ես,- կտրուկ ու չոր տոնով պատասխանեց Աստղիկը:

-Դու նրան ճանաչո՞ւմ ես,- խանդոտ հայացքով Անդրանիկը նայեց ընկերուհուն:

-Այո՛: Նախկինում սովորել ենք միևնույն համալսարանում: Նրա անունը Ջավեն է: Նա իմ ծանոթներից է:

-Եվ ի՞նչ է ուզում ասել քեզ ծանոթ այս երիտասարդը: Կարո՞ղ ենք օգտակար լինել նրան,- Անդրանիկը խոժոռված հայացքով նայեց անծանոթին:

-Ես ուզում եմ ասել Աստղիկին, որ նա ինձ ավելի է համապատասխանում, քան քեզ...

-Ահա՛ թե ինչ: Գուցե բացատրե՞ս մինչև վերջ,- հեզմանքով և ներքին լարվածությամբ հարցրեց Անդրանիկը:

-Նրա հայրն էլ է ոստիկանությունում աշխատում, իմ հայրն էլ: Երկուսս էլ նույն մասնագիտությունն ունենք: Հետո մենք ավելի շուտ ենք ծանոթ եղել միմյանց հետ:

-Ջարմանալի տրամաբանություն ունես,- քնծիծաղեց Անդրանիկը, զգալով, որ նա երբեք իրեն մրցակից լինել չէր կարող:- Այդ պրիմիտիվ խելքով էլ պիտի մասնագե՞տ դառնաս:

-Իզուր ես ինձ վիրավորում: Ավելի լավ է Աստղիկից հարցնենք:

Աստղիկին զայրացրեց նրա չափից ավելի ինքնավստահ լինելը:

-Բայց դու նախ քեզ նայեիր հայելու մեջ, հետո իմ մասին երազեիր,- քիչ էր մնում ասեր, որ նա չափազանց տգեղ արտաքին ուներ և հիշեցնում էր Քվազեմոդոյի կերպարը: Աղջիկը նույնիսկ ներքուստ վիրավորվեց, որ նման երիտասարդը հույսեր էր փայփայում իր հետ ընկերանալու համար:

Անդրանիկը նկատեց, որ Աստղիկի համար բավականին անդուր էր այդ հանդիպումը և վերջապես դրեց նրանց խոսակցությանը:

-Երիտասարդ, ավելի լավ կլինի մեր ճանապարհին այլևս չկանգնես: Մանավանդ արդեն համոզվեցիր, որ Աստղիկն իր ընտրությունը կատարել է,- և բռնելով ընկերուհու թևից՝ նա կանգնեցրեց մոտեցող տաքսին:

-Դեռ կտեսնենք,- համառեց անծանոթը և հեռացավ:

Մեքենայի մեջ աղջիկը թթված տեսք ընդունեց: Նա մտածեց, որ այդ հիմարը նորից իրեն կանհանգստացնի: Անդրանիկը զգաց, որ Աստղիկը նեղսրտեց այդ տհաճ հանդիպումից:

-Տրամադրությունդ նրա պատճառով մի՛ փչացրու:

-Եթե իմ կողքին չլինեիր, ես նրա հետ ավելի կոպիտ կլինեի,- պատասխանեց Աստղիկը:

-Դու լավ էլ կոպտեցիր նրան: Եթե նա ինքնասիրություն ունենա, այդքանն էլ հերիք է, ինչ նրա երեսին շարտեցիր:

-Իսկապե՞ս... Դու ճի՞շտ ես ասում,- ժպտաց Աստղիկը:

-Միանգամայն:

Բավականին մարդաշատ էր դելֆինարիայում, որը գտնվում է Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու տարածքում: Ջբաղեցնելով իրենց տեղերը, նրանք զրուցեցին մինչև շուուի սկսվելը:

-Դու առաջի՞ն անգամն ես այստեղ գալիս,- հարցրեց Աստղիկը:

-Այո՛: Ժամանակ չունեի: Հետո էլ հարմար առիթ է պետք: Իսկ դու՞...

-Ես ոչ միայն այստեղ եմ եղել, այլև տարիներ առաջ հեռու՝ Կլայպեդայում եմ դելֆինների շուուի ականատեսը դարձել: Խոշոր նավահանգիստ համարվող այդ վայրում ծովային թանգարան կա, որը քաղաքի գլխավոր տեսարժան վայրն է և լիտվացիների հպարտությունը: Բոլորին հետաքրքրում է սակայն թանգարանի ակվարիումը, ուր տարբեր տեսակի ձկներ, պինզվիներ, ծովային առյուծներ, դելֆիններ կան, և հանդիսատեսին ներկայացնում են ջրային շուուներ: Մի պահ այն տպավորությունն ես ստանում, թե բոլոր ծովերի, օվկիանոսների կենդանիներն աչքերիդ առաջ լողում են: Այն համարվում է Եվրոպայում ամենամեծ ակվարիումը, որը գերմանացիներն են կառուցել:

-Բայց ինչու՞ գերմանացիները:

-Կլայպեդան գերմանական նախկին Մեմել քաղաքն է, որը մինչև 1923 թվականը Գերմանիային էր պատկանում: Պարզ է, որ նրանց ոճը անդրադարձել է քաղաքի ճարտարապետական կառուցվածքի վրա:

-Հետաքրքիր է: Միայն գիտեմ, որ մարդու և դելֆինների միջև ընդհանրություններն ավելի շատ են, քան մարդկանց և կապիկների միջև,- ուշի-ուշով լսելով ընկերուհուն՝ ասաց Անդրանիկը: Նրանք նույնպես շնչում են թոքերով, և ուղեղի քաշը համարյա նույնն է, ինչ մարդկանց մոտ: Դելֆիններն ընդունակ են իրենց տեսնել անգամ հայելու մեջ: Նրանք միշտ ժպտում են: Ի դեպ բնության մեջ սեքսից հաճույք են ստանում դելֆինները և մարդիկ:

-Նույնիսկ այդպե՞ս,- զարմացած բացականչեց Աստղիկը: -Շատ եմ սիրում նրանց, որովհետև դելֆինները գեղեցիկ են, բարի: Ծովերում և օվկիանոսներում էլ լողում են խմբերով և օգնում են միմյանց: Նրանց

հետ լողալով էլ մարդը հաղթահարում է հոգեկան ճգնաժամը:

Անդրանիկը մի ակնթարթ հիշեց եղբորը: Գուցե նրա վիճակն էլ շուտ անցներ նման մեթոդի կիրառման դեպքում: Սակայն այդ մասին ոչինչ չբարձրաձայնեց, այլ շարունակեց ընկերուհու միտքը:

-Դրա համար էլ աշխարհում գոյություն ունի դելֆինաթերապիա հասկացությունը: Սկզբում Անգլիայի գիտնականներն են նկատել, որ ծովային կենդանիները դրական ազդեցություն են ունենում երեխաների վրա: Ներկայումս Մեքսիկան ԱՄՆ-ից հետո գրավում է երկրորդ տեղը՝ բժշկության մեջ կիրառելով դելֆինաթերապիան: Դրա միջոցով բուժում են հաշմանդամ

երեխաներին: Ղեկֆինների հետ շփումը փոխում է մարդու վերաբերմունքը ոչ միայն իր հանդեպ, այլև ուրիշների, այդ թվում՝ բնության ու աշխարհի նկատմամբ:

Աստղիկն ուշադիր լսելով ընկերոջը, նաև հպարտության զգացում ապրեց: Ուրախ էր, որ Անդրանիկը թեև դեկֆինարիայում չէր եղել, բայց բավականին տեղեկություններ գիտեր ծովային այդ կենդանիների մասին:

Շուտով սկսվեց դեկֆինների հետ ջրային շուռն: Եվ դահլիճում լսվեցին ուրախ բացականչություններ:

Կիրակի օրը Հրաչը դեռ անկողնում էր, երբ որդին կիսաբաց արեց իր սենյակի դուռը: Հայրն արդեն արթնացել էր: Դռան կամաց ճռռոցից նկատելով Կարոյին՝ իր մոտ կանչեց.

-Ի՞նչ կա, տղաս:

-Հայրիկ, ուզում էի տեսնել, արթնացե՞լ ես:

-Արի՛ ներս: Նստի՛ր ինձ մոտ,- ու ձեռքը մեկնելով՝ վերնակի տակից շոյեց որդու գլուխը:

-Կտանե՞ս ինձ գերեզմանատուն: Ուզում եմ ծաղիկներ տանել մայրիկին: Այսօր երազում մայրիկին եմ տեսել:

-Եվ ի՞նչ էիք անում միասին,- նկատելիորեն հուզվեց Հրաչը:

-Օգնում էր ինձ շորերս հագնելու, որպեսզի միասին զբոսանքի գնայինք: Հետո կարծես թե քեզ էինք սպասում: Նա անընդհատ համբուրում էր ինձ, իսկ վերջում արտասվեց և հեռացավ:

-Նա մեզ նույնպես կարոտում է, տղաս,- պատասխանեց հայրը:

-Գիտեմ, հայրիկ, -թախծեց որդին:-Նա ամեն բան տեսնում է հեռվից:

-Ուրեմն մի՛ տխրիր: Թույլ տուր հագնվեմ, լվացվեմ, մի բաժակ սուրճ խմեմ, և մենք միասին կգնանք ծաղիկներ գնելու:

Դռան մոտ երևաց Հրաչի մայրը:

-Կարո՛, դու այստե՞ղ ես: Իսկ ես մտածեցի, հո բակ չես իջել:

-Առանց հարցնելու՞,- Հրաչը հարցական նայեց որդուն:- Նման բան չլսեմ: Դու միշտ տատիկին ու պապիկին զգուշացրու, թե ինչ ես ուզում անել, ուր ես ուզում գնալ:

-Նա խելոք է իրեն պահում: Առայժմ նրա վարքագծից չենք դժգոհում,- ժպտաց տիկին Նունեն:- Արի՛, թռռնիկս, գնանք խոհանոց: Նախաճաշը պատրաստ է,- և նրա ձեռքից բռնելով՝ դուրս եկավ որդու ննջասենյակից:

Կատարելով որդու ցանկությունը՝ Հրաչը քիչ անց մեքենայով նրա հետ ծաղիկներ գնելուց հետո, ճանապարհվեցին դեպի գերեզմանատուն: Երբ այնտեղից դուրս եկան, Հրաչի ընկերը՝ Վիգենը, զանգեց: Պայմանավորվել էին երեք ընկերներով դեպի Գառնի, Գեղարդ գնալ, զբոսնել, իրենց սիրած վայրերից մեկում ճաշել: Հրաչը որդու հետ մոռացել էր նախնական պայմանավորվածության մասին:

-Որդուս հետ եմ: Ես մեքենան կթողնեմ տանը: Դուք մեկ ժամից եկեք իմ ետևից,- ասաց Հրաչը և անջատելով հեռախոսը՝ հարցրեց Կարոյին:- Կուզե՞ս միասին գնանք զբոսնելու:

-Այո՛, հայրիկ: Շատ եմ ուզում:

-Մենք այնտեղ եղել ենք մի քանի անգամ՝ ես, մայրիկը և դու: Երբ գնանք, դու կհիշես այդ վայրերը:

-Գեղարդի եկեղեցի՞ն էլ կմտնենք:

-Անպայման, որդիս: Մոմեր կվառենք և մայրիկի համար էլ կաղոթենք:

Հրաչը միանգամից տխրեց՝ հիշելով, թե Շուշանն ինչքան շատ էր սիրում այդ եկեղեցին: Նաև այնտեղ էր կնքվել: Նրա համար Գեղարդը հրաշագործ ու սուրբ վայրերից էր և ամեն տարի հարմար առիթի դեպքում հայտնվում էին այնտեղ: Մեքենան թողնելով իրենց ավտոտնակում, ծնողներին զգուշացրեց, որ որդու հետ ընկերներով քաղաքից դուրս են գալիս:

-Շուտ կգաք,-հարցրեց հայրը:

-Երեկոյան քաղաքում կլինենք: Իսկ ի՞նչ կա, հայրի՛կ:

-Առանց ձեզ կտխրենք:

Հրաչը բարեհամբույր ժպտաց: Նա հասկանում էր, որ ավելի շատ ծնողները կկարոտեին թռռանը, որի հետ վերջին շրջանում բավականին կապվել էին:

-Երկուսով հյուր գնացեք որևէ տեղ:

-Երևի ճիշտ ես ասում: Այդպես էլ կանենք, որ ժամանակն արագ անցնի: Թե չէ Անդրանիկն էլ ամեն օր ուշ է վերադառնում տուն:

Շուտով Հրաչի երկու ընկերները մեքենայով տեղ հասան, և հայր ու որդի միացան նրանց: Հրաչն ընկերների հետ սկզբում մտան եկեղեցի, հետո ոտքով շրջեցին շրջակա գեղատեսիլ վայրերում, իսկ հետո ճաշելու համար ընտրեցին բացօթյա ծառերի տակ ընկած մի ռեստորանում, ուր նաև ընկուզենի կար, փոքրիկ ձերմակ գույնի շուն: Կարոն ծառի տակ ընկած ընկույզները ջարդեց, շան հետ խաղաց, կերակրեց, իսկ հայրը ընկերների հետ նարդի խաղացին, նաև մի քիչ գինովցան՝ իրենց հանգիստն անցկացնելով բնության գրկում: Նրանք Երևան վերադառնալուն պես նաև մտան Դրամատիկական թատրոնի դիմաց գտնվող այգին և լճի ափին գարեջուր խմեցին:

Երբ ուշ երեկոյան Հրաչը որդու հետ տուն հասան, հայրը սևեռուն հայացքով այնպես նայեց որդուն, կարծես վերջինս վատ արարք էր գործել:

-Հայրի՛կ, ինչու՞ ես մթնած հայացքով նայում ինձ,- նայելով հոր տարօրինակ դեմքին՝ հարցրեց Հրաչը:

-Դուք շատ ուշացաք:

-Այսինքն՝ ես դպրոցակա՞ն եմ և ժամից ժամ պիտի հաշվետու՞ լինեմ քայլերիս համար,- վրդովված խոսեց Հրաչը: -Մինչդեռ ամիսներ շարունակ, երբ փակված էի իմ սենյակում կամ օրերս անց էի կացնում գերեզմանատանը, այն ժամանակ նեղսրտում էիր, որ ես ամփոփվել եմ իմ մեջ ու պետք է շփվեմ մարդկանց հետ:

Ռուբեն Առաքելյանը զգալով իր չոր պահվածքը՝ տեղի տվեց:

-Մի՛ գայրացիր, որդիս: Մորդ հետ անհանգիստ էինք:

-Դու նեղացել էիր, որ Կարոյին էլ հետս տարա: Բայց նա իմ որդին է: Ես պարտավոր եմ նրանով զբաղվել: Քիչ է, որ խեղճ երեխան մորից զրկվեց, ես էլ պատահում է՝ օրերով տանը չեմ լինում նկարահանումների պատճառով: Իմ ազատ ժամանակը գոնե չօգտագործե՞մ նրա կողքին լինելու համար:

-Դու իրավացի ես, տղա՛ս, բայց...

-Բայց ի՞նչ, հայրի՛կ: Դուք ինձ օգնում եք, որ մենակ չլինեմ, հոգում եք իմ մասին, սակայն թույլ տուր ապրեմ իմ ձևով: Արդեն երեսունհինգ տարեկան եմ և եթե հիշում ես, յոթ տարի առանձին էի ապրում, որովհետև ընտանիք ունեի...

-Հետս կռվու՞մ ես, Հրա՛չ:

-Ո՛չ, հայրի՛կ: Միայն չեմ հասկանում քո դժգոհությունը:

-Երանի՛ Կարոն եղբայր կամ քույր ունենար, այդքան չէինք մտահոգվի,- հայրը խորը հառաչեց՝ ափսոսանքի զգացումով:

Թռռը շվարած երկուսին էր նայում: Հրաչը խնդրեց նրան՝ գնալ տատիկի մոտ՝ հյուրասենյակ և հեռուստացույց դիտել: Իսկ ինքը հոր հետ դուրս եկավ պատշգամբ՝ ծխելու:

-Յոթ տարվա մեջ միայն մի զավակ ունեցաք, գոնե մեկն էլ ունենայիք,- սկսած խոսակցությունը շարունակեց հայրը:

-Շուշանն ուզում էր, որ Կարոն դպրոց հաճախեր, հետո մեկն էլ կունենայինք: Մեր բոլոր ծրագրերը խափանվեցին: Ի՞նչ անեմ:

-Կարոյի համար էլ դժվար է: Երբ մեծանա, նա ինքը մենություն կզգա:

-Հայրի՛կ, Կարոն մի եղբայր էլ ունի,- ասաց Հրաչը և լռեց:

Հայրը հանկարծակիի եկավ:

-Ո՞նց թե... Այսքան տարի թաքցրե՞լ ես մեզնից: Դու ուրիշ կի՞ն ունես:

-Ո՛չ, հայրի՛կ, հանգստացի՛ր: Ես Շուշանին յոթ տարվա ընթացքում երբեք չեմ դավաճանել: Դա մինչև իմ ամուսնանալն էր: Գիտես, ամառները սիրում էի հանգստանալ ծովափին՝ Ղրիմում կամ Սոչիում: Մի խոսքով, իմ որդին պատահական կապի արդյունք է: Ես այդ ժուռ կնոջ հետ ընդամենը երկու անգամ եմ հանդիպել և վերջ: Հետո պարզվել է, որ հղիացել է և որոշել է զավակ ունենալ: Նա որևէ պահանջ չդրեց իմ առջև: Դա իր որոշումն էր, քանի որ արդեն տարիքով էր ու ուզում էր մայրանալ:

Հորը մի պահ թվաց, թե հեռուստաալիքով ինչ-որ սերիալի մասին է խոսքը: Բայց որդին կանգնած էր իր կողքին: Նա գինովցած էր: Ահա ինչու մինչև վերջ անկեղծացավ իր հետ: Դա էր ողջ իրականությունը:

-Իսկ դու տեսե՞լ ես նրան: Նա հիմա քանի՞ տարեկան է:

-Մի տարի անց տեսա նրան: Նյութապես աջակցեցի, երեխային նվերներ տարա և վերջ: Այլևս չուզեցի հանդիպել, որպեսզի չկապվեի նրա հետ: Նա հիմա ինը տարեկան է, երեք տարով մեծ է Կարոյից:

-Շուշանը գիտե՞ր այդ մասին:

-Ո՛չ, հայրի՛կ: Թեկուզ եթե իմանար, ոչինչ չէր ասի, քանի որ որդիս արտամուսնական կապի ծնունդ է: Միակ մարդը, որը գիտե գաղտնիքս, դո՛ւ ես: Մայրիկին էլ առայժմ ոչինչ մի՛ ասա:

-Եղբայրները երբեք իրար չե՞ն հանդիպելու: Կուզենայի տեսնել նրան:

-Մտածում եմ այդ ուղղությամբ: Հիմա ժամանակը չէ: Այնպես որ, հայրի՛կ, պիտի սպասես, մինչև նրանք մի քիչ մեծանան:

Հայրը լռեց: Նա ուրախությունից շշմած էր: Ուրեմն՝ ինքը երկու թռռ ունի: Տարաբնույթ մտքերով գերբեռնված՝ Ռուբեն Առաքելյանը փորձեց որևէ լուծում գտնել որդու համար:

-Իսկ գուցե հետագայում միանա՞ս որդուդ մոր հետ, Հրա՛չ: Ընտանիք էլ կունենաս, նաև որդիներդ միասին կլինեն,- զգուշությամբ առաջարկեց հայրը:

-Ո՛չ, հայրի՛կ: Ես այդ կնոջը չեմ սիրում: Առանց սիրո ու կարոտի չեմ կարող որևէ մեկի հետ մի հարկի տակ մնալ: Նա ինձնից տարիքով է տասներկու տարով:

-Ահա՛ թե ինչ: Հասկանալի է: Որոշողը դու՛ ես:

Ներս մտավ մայրը: Նա հայտնեց, որ հարևանը Ռուբենի մոտ է եկել նարդի խաղալու:

Հրաչն ազատ շունչ քաշեց, երբ հայրը հեռացավ:

Առավոտյան Հրաչը Կարոյին դպրոց էր տանում, երբ զանգեց ձեռքի հեռախոսը: Մանեն էր՝ մորաքրոջ աղջիկը: Նրան զարմացրեց զարմուհու առավոտյան հեռախոսազանգը: Սովորաբար Մանեն իր հետ կապվում էր երեկոյան ժամերին:

-Հո չխանգարեցի՞ քեզ, եղբայրս:

-Բոլորովին: Իսկ քեզ հետ այսքան վաղ ժամի ի՞նչ է պատահել,- անհանգիստ հարցրեց Հրաչը:-Գործերդ վատացե՞լ են:

-Ո՛չ: Ի՞նչ գործերի մասին ես խոսում: Ես դարձյալ Երևան եմ ժամանել:

-Ինչպե՞ս թե: Դու երկու ամիս առաջ էիր մեկնել: Հավանաբար, շատ լուրջ պատճառ կա, որ այստեղ ես:

-Այո՛: Մորս պատճառով վերադարձա: Հիմա նա ինձ մոտ է՝ իմ բնակարանում: Երեկոյան անցիր մեզ մոտ, ամեն բան կիմանաս:

Մանեի հետ հեռախոսազրույցից հետո Հրաչը հանկարծակիի եկավ: Ինչու՞ էր մորաքույրը տեղափոխվել Մանեի մոտ: Չէ՞ որ նա ի սկզբանե իր ավագ դստեր մոտ էր բնակվում: Թեև Մանեն Հունաստանից մորը հաճախ էր գումար ուղարկում, բայց դա անում էր ուրիշների

միջոցով: Հրաչը ցավով մտածեց, որ առհասարակ վերջին տարիներին շատ են փոխվել իր շրջապատում հարազատների հարաբերությունները: Ավանդական ամուր ու կայուն ընտանիքները չկային, երբ տան կամ գերդաստանի անդամները միմյանց հետ ավելի համերաշխ էին, զիջող, համբերատար: Ամեն ինչի մեջ ամենուր տան անդամներից յուրաքանչյուրն իր շահն է հետապնդում՝ իր ճանապարհին ավերելով բարոյական արժեքները: Եվ ամենաշատը տուժում են տարեց մարդիկ: Ջավակները նրանց հաճախ թողնում են անտեր, միայնակ՝ բախտի քմահաճույքին: Այնինչ եթե նույն ծնողները բնակարան ունեն, առիթ են գտնում դրանք յուրացնելու, ծախելու՝ հատկացնելով մեկսենյականոց բնակարան կամ էլ մի կերպ տեղավորում են ծերանոցներում:

Անօգնական մնացած ծեր ծնողները դառնում են ծանր բեռ զավակների համար:

Հասնելով դպրոց՝ Հրաչը դիմեց որդուն.

-Տղա՛ս, ուշադիր եղի՛ր դասերի ժամանակ: Իսկ երբ պարապմունքներն ավարտես, սպասի՛ր դպրոցի մոտ: Երևի ես չհասցնեմ գալ: Տատիկին կամ պապիկին կզգուշացնեմ, որ քեզ տուն բերեն:

-Դու շա՞տ կուշանաս, հայրիկ:

-Ո՛չ, որդի՛ս: Երեկոյան միասին շախմատ կխաղանք:

Գործն ավարտելուց հետո՝ Հրաչն այցելեց Մանեին: Նրան մենակ գտավ ճաշասենյակում:

-Ու՞ր է մորաքույրս:

-Նա ննջասենյակում է: Քնած է:

-Այս ժամի՞ն: Իսկ գիշերը ո՞նց է քնելու,- տեղավորվելով բազկաթոռի մեջ՝ հարցրեց Հրաչը:

-Նա իրեն չափազանց թույլ էր զգում: Սաստիկ հյուծված է, հուսալքված:

-Ինչպե՞ս: Քույրդ նրան չէ՞ր խնամում: Այդ ինչպե՞ս եղավ, որ վերադարձար:

Մանեն թախծոտ հայացքը դարձրեց Հրաչին ու խոր արտաշնչեց:

-Հավատու՞մ ես, մի օր երագում հայրիկիս տեսա: Նա ինձ հուշեց, որ մայրիկի մոտ լինեմ: Վաղուց երազներիս մեջ հորս չէի տեսել: Իսկույն զանգեցի Երևան: Ոչ ոք չպատասխանեց: Անհանգստությունս ավելի խորացավ: Անկեղծ սասած, վերջին մի շաբաթը չէի զանգել: Հետո քրոջս հարևանուհուց տեղեկացա, որ մայրս ոչ միայն տանը չէ, այլև քույրս նրան ուղարկել էր Գյումրի:

-Ինչքան գիտեմ, մենք այնտեղ բարեկամներ չունենք,- զարմացավ Հրաչը՝ մի գլանակ վառելով:

-Իրավացի ես: Նա էժան գնով խնամարկու էր վարձել, որ մորս խնամի, իսկ ինքը ամուսնու հետ մեկնել էր Լաչին՝ այնտեղ ապրելու և աշխատելու:

-Մորդ էլ իրենց հետ տանեին կամ էլ այնպիսի մեկին վարձեր, որ նրան տանը խնամեին: Այդ ինչ անմիտ վերաբերմունք է:

-Անմի՞տ...Դու քաղաքավարի ես արտահայտվում: Ես կասեի, որ քրոջս արածը հրեշավոր արարք է: Մայրս նրա համար բեռ էր դարձել, քանի որ կորցրել է հիշողությունը և անընդհատ պետք է նրանով զբաղվեր:

-Դու ինչպե՞ս գտար նրան:

-Պատկերացնու՞մ ես, մորս խնամողը Երևանում էր արդեն մի քանի օր գտնվում: Նրան գտա, հետս մեքենայով Գյումրի մեկնեցինք: Միայն տեսնեիր, թե մայրս ինչ պայմաններում էր գտնվում: Կատարյալ գոմի էր նմանվում նրա կացարանը: Իսկ մայրս կեղտոտ էր, մազերը գզգզված, շորերը մաշված, ինքը նիհար ու քաղցած,- արցունքներ հոսեցին Մանեի աչքերից:- Սիրտս քիչ էր մնում տրաքեր, երբ հիշում եմ նրա պատկերը: Նա ինձ մայեց ու շնջաց. «Գիտեի, որ կգաս իմ ետևից»: Քանի օր էր մայրս քաղցած փակված մնացել այդտեղ, չգիտեմ: Նրան բերեցի իմ տուն ու հիմա պիտի մնամ նրա մոտ ու խնամեմ: Հեռվում ես հանգիստ ապրել չեմ կարող, եթե մայրս իմ խնամքի կարիքն ունի: Աղջիկս աշխատում է: Նա երկուսիս կօգնի:

Այնուհետև Մանեն հուզված տեսքով կանգնեց ու մեղավոր հայացքով դիմեց Հրաչին.

-Եկել ես, բայց քեզ ո՛չ առաջարկում եմ միասին ճաշել, ո՛չ էլ սուրճ խմել:
 -Տնեցիներն ինձ են սպասում: Տանը կճաշեմ, իսկ սուրճից չեմ հրաժարվի:
 Երբ Մանեն գնաց խոհանոց, ննջասենյակի դուռը բացվեց և մորաքույրը մանր քայլերով առաջ եկավ:
 -Մորաքույր, բարև: Ինչպե՞ս ես,- սրտացավորեն հարցրեց Հրաչը, միաժամանակ խղճաց նրան՝ լսելով զարմուհուց մորաքրոջ ողիսականի մասին:
 -Լավ եմ, Հրաչ ջան: Դու ե՞րբ ես եկել:
 -Քիչ առաջ: Կարգին հանգստացա՞ր:
 -Հա՛: Իսկ Մանեն ու՞ր է գնացել:
 -Նա սուրճ է պատրաստում: Հիմա կգա:
 Հրաչը մտածեց, թե ինչու նա աղջկա անունը տվեց: Գուցե կասկածեց, թե նա արդեն մեկնել է: Ո՞վ գիտե: Մորաքրոջ դեմքին խոր ու անթաքույց տագնապ կար, թե չէ չէր հարցնի:
 Ներս եկավ Մանեն՝ սինու վրա դրած սուրճի բաժակները և գաթան:
 -Մայրի՛կ, արդեն արթնացա՞ր: Սու՞րճ սարքեմ քեզ համար:
 -Ո՛չ, աղջիկս, նստի՛ր:
 -Այդ դեպքում գաթա վերցրու՛ և կե՛ր, մինչև Հրաչի հետ սուրճ կխմենք:
 Մայրը ժպտաց ու մի կտոր գաթա վերցնելով սեղանից՝ գողունի նայեց աղջկա աչքերի մեջ և ասաց.
 -Ես ընդամենը մի՛ գաթա կուտեմ, ընդամենը մե՛կ հատ,- մեկնելով ցուցամատը՝ ասաց ծեր կինը:
 Հրաչը և Մանեն շվարած իրար նայեցին: Ուզում էին կռահել, թե ի՛նչ էր դա նշանակում:
 -Ինչքան ուզում ես, այնքան էլ կե՛ր, մայրի՛կ: Ո՞վ է հաշվում, որ այդպես ես ասում:
 -Ասացի, ընդամենը մի՛ հատ կուտեմ: Խոստանու՞մ եմ...
 Հրաչը հասկացավ, որ խեղճ կինը ոչ միայն ճնշված էր ապրել, որ անգամ տանը նրա ուտելու վրա են խոսել, դիտողություն արել, այլապես ներքին վախը չէր շարունակի հետապնդել նրան: Դժվար էր հավատալ, թե ութսուն տարեկան ծեր կինն այդքան անմիտ ու մանկական քայլեր կաներ:
 Հրաչին ծանր մտքերից հանելու նպատակով Մանեն այլևս չխոսեց մոր հետ, այլ հարցուփորձ արեց նրա առողջական վիճակից ու հետագա ծրագրերից: Հրաչը երկար չմնաց նրանց մոտ: Այնինչ ճանապարհին հիշեց ճապոնական մի կինոնկար՝ «Լեգենդ Նարայամի մասին» վերնագրով, որը շատ տպավորիչ էր: Լեգենդի համաձայն՝ հնում զավակներն իրենց ծեր ծնողներին բարձրացնում էին Նարայամի կոչվող այդ սուրբ լեռը, որտեղ նրանք կանովին ընդունում էին մահը քաղցից: Չափազանց դժվար է հավատալ, որ զավակն իր ծնողին հանում է տնից միայն այն պատճառով, որ քիչ ուտելիք ունի, որ նա ավելորդ բեռ է ընտանիքում:
 Հասնելով տուն՝ նա ծնողներին պատմեց մորաքրոջ հետ կապված տխուր միջադեպի և Մանեի վերադարձի մասին: Հրաչի մայրը գլուխն օրորեց, իսկ ամուսինը՝ Ռուբեն Առաքելյանը, հիշեց անկողնուն գամված հիվանդ եղբորը և նույնպես մռայլվեց:
 Փոքրիկ Կարոն ուրախ էր, որ ճաշից հետո հնարավորություն կունենա հոր հետ շախմատ խաղալու:
 -Որդի՛ս, ճաշը տաքացնե՞մ: Մենք արդեն ճաշել ենք առանց քեզ,- ասաց մայրը:
 -Այո: Խիստ քաղցած եմ: Գնամ լվացվելու,- պատասխանեց Հրաչը:
 Հնչեց դռան գանգը: Տնեցիներն ինքնաբերաբար իրար նայեցին: Ոչ ոքի չէին սպասում:
 Հրաչը մտածեց, որ երևի գանգողը ծնողների երես առած հարևանուհին էր, և դեմքը միանգամից կնճռոտեց: Հայրը գնաց բացելու դուռը: Հրաչի ընկերն էր, օպերատոր Վիգենը:
 Հրաչը զարմացավ նրա հանկարծակի այցից: Ընկերոջը ջերմությամբ ներս հրավիրելով, նաև ուրախացավ, որ մենակ չի ճաշի: Մայրը խնդրեց սեղանը զցել փակ պատշգամբի սեղանին: Այնտեղ հնարավորություն կունենան ոչ միայն հանգիստ ճաշելու և ծխելու, այլ նաև զրուցելու:

-Տեսնում եմ, որ գործ ունես ինձ հետ, թե չէ առանց զանգելու այս ժամին չէիր հայտնվի,-
Հրաչը երկինաստ հայացքով նայեց ընկերոջը:

-Այո՛, մենք պատվեր ունենք, վավերագրական ֆիլմ նկարելու Հայաստանում գտնվող հրեական համայնքի մասին,- պատասխանեց նա:

-Հետաքրքիր առաջարկ է: Համայնքապետի հետ արդեն հանդիպե՞լ ես,- ոգևորվեց Հրաչը:

-Բնականաբար: Հավանաբար քսան րոպեանոց ֆիլմ կնկարենք: Նախ կժանոթանանք համայնքի ակտիվիստների հետ, որոնք էլ կպատմեն իրենց գործունեության մասին: Մնացածը մեր խնդիրն է:

Մայրը մատուցեց ճաշը: Հրաչը դիմելով ընկերոջը՝ հարցրեց.

-Մի-մի բաժակ չխմե՞նք մեր հաջողության համար:

-Դեմ չեմ: Եթե ուզում ես:

-Իհարկե, ուզում եմ: Թե՞ մտածում ես, որ հիվանդանալուց հետո այլևս բաժակ չեմ բարձրացնի,- խորհրդավոր ժպիտով Հրաչը պատշգամբի անկյունում դրված պահարանից հանեց խմիչքը և բաժակները:- Ի՞նչ կցանկանայիր ըմպել, գինի՞, թե՞ օղի:

-Երևի գինի,- պատասխանեց Վիգենը:

-Շատ լավ: Նռան ընտիր դառը գինի ունեմ,- հանելով շիշը՝ Հրաչը լցրեց բաժակները:

Ճաշի ընթացքում երկու ընկերները ոչ միայն շարունակեցին աշխույժ զրույց վարել, այլև մտորել հրեաների մասին՝ զուգահեռներ անցկացնելով նրանց և հայերի միջև:

-Այսօր հրեաներն աշխարհի ամենահարուստ և հզոր ազգն են: Նրանք են կառավարում աշխարհը: Էլ չեմ խոսում այն մասին, որ նրանց հաջողվեց ստեղծել սեփական պետություն, որն իր կամքն է փորձում թելադրել տարածաշրջանի երկրներին,- ասաց Հրաչը:

-Իսրայելն էլ Ամերիկայի պես ռազմատենչ քաղաքականություն է վարում,- Վիգենը մտազբաղ հայացքով լրացրեց ընկերոջը:

-Պարզ է, որ բոլոր դարերում էլ հզորներն են իրենց կամքը թելադրել իրենցից թույլ երկրներին:

-Մենք էլ Սփյուռք ունենք, բայց մինչև հիմա չի հաջողվում նրան ո՛չ Ամերիկային, ո՛չ Թուրքիային, ո՛չ էլ Իսրայելին ընդունել տալ ցեղասպանությունը: Այնինչ մոտենում է ցեղասպանության 100-րդ տարելիցը: Ես հույս չունեմ, որ նրանք կճանաչեն Եղեռնը:

-Զգիտեմ: Տխուր փաստն այն է, որ հրեաները թուրքերի ձեռքով կազմակերպեցին ցեղասպանությունը: Բնականաբար, նրանք չեն ցանկանա ընդունել այն,- Հրաչը կրկին վառեց հանգած գլանակը:

-Հետաքրքիրն այն է, որ որպես ազգ հրեաներն այս երկրի վրա ապրող ամենահին ազգն են: Նրանք համարվում են մարդկության նախապապերը: Եթե հավատանք, որ ամեն ինչ ծագել է Ադամից ու Եվայից, նշանակում է՝ մենք էլ հրեաներ ենք,- ժպտաց Վիգենը:- Այսօր Իսրայելում հինգ միլիոն հրեա է ապրում, բայց նրանց թիվն ամբողջ աշխարհում հասնում է քսան միլիոնի: Ըստ իմ իմացած տեղեկությունների, նրանք ավելի համախմբված են մեզնից:

-Մի հարցում մենք նման ենք իրար: Նպատակասլաց ենք, խելամիտ, նաև ցրված աշխատող մեկ: Բայց նրանք հզոր պետություն ունեն, մինչդեռ Հայաստանը... Համեմատելն անգամ չափազանց դժվար է: Ի դեպ, նրանք ընտանեկան լավ ավանդույթներ ունեն: Դրանց շարքում ամենակարևորն այն է, որ ծնողները հավասար են Աստծուն, և մարդիկ մեծանալով պարտավոր են նրանց մասին հոգալ, կերակրել և հազցնել: Վերջերս էլ Ռուսաստանում նման օրենք սահմանեցին, որ զավակներն իրավունք չունեն լքել ծնողներին: Չեմ հասկանում, եթե օրենքը չգործի, նրանց պիտի շարտե՞լ...

Հրաչը հիշեց իր բարեկամներին՝ հիվանդ հորեղբորը և հիվանդ մորաքրոջը, սակայն այդ մասին Հովիկին ոչինչ չպատմեց: Սովորություն չունեի ընտանիքի գաղտնիքները տարածել, ոչ էլ հարցեր տալ դիմացիներին, մանավանդ եթե անձնական կյանքին էր վերաբերում: Այնինչ Հրաչի

մտերիմները, ի տարբերություն իրեն, հաճախ են նրա հետ կիսում իրենց նեղ, անձնական խնդիրները...

Ընկերների գրույցը շարունակվեց մինչև ուշ երեկո:

Ապացուցված է, որ աշխարհում տղամարդիկ ինքնասպանություն են գործում երեք անգամ ավելի շատ, քան կանայք: Մանավանդ այն տարածված է հիսունից յոթանասուն տարեկան տղամարդկանց շրջանում: Սակայն համաձայն վերջին տվյալների՝ ներկա ժամանակաշրջանում ավելացել են ինքնասպանությունները յոթանասունհինգ տարեկանից բարձր տղամարդկանց մոտ: Պարզվել է, որ նման ձգտումը սրանում է ակոհոլի օգտագործումից հետո:

Ռուբեն Առաքելյանը միանգամից ցնցվեց, երբ լսեց ավագ եղբոր ինքնասպանության մասին լուրը: Եղբայրն իրեն նետել էր հինգերորդ հարկի իրենց պատշգամբից: Ինչու՞ էր նա այդ քայլին դիմել: Ո՞վ էր նրան նյարդայնացրել: Դժվար էր իմանալ: Եվ, ընդհանրապես, ոչ ոք չի իմանա ճշմարտությունը: Փաստն այն էր, որ նա միշտ նեղված էր, հարազատների կողմից արհամարհված: Երբ հասավ նրանց տուն, ուստիկաններ էին եկել ու հարցուփորձ էին անում տնեցիներին: Փորձառու տպագրչի սիրտը մղկտաց: Նա ուստիկաններին ոչինչ չասաց այն մասին, թե ինչպես էր եղբայրը մեկուսացված ընտանիքում: Նրանք իրենց գործողություններով ստիպեցին պարզապես հիվանդ տանտիրոջը դիմելու այդ քայլին: Իսկ թե ինչ էր մտածում եղբայրը, ում հետ էր վերջին անգամ գրույց ունեցել, հայտնի չէր: Նա իրեն վերմակի հետ միասին էր զգվել ներքև: Ինչու՞ վերմակով: Արդյո՞ք ակոհոլ էր օգտագործել, թե՞ առհասարակ մի բաժակ էլ չէր խմել: Այդ ամենը կբացահայտվի նրա մարմինը դիակերծելուց հետո:

Ուստիկանների հեռանալուց հետո Ռուբեն Առաքելյանը նույնպես ոտքերը քարշ տալով՝ խառնիխուռն մտքերով եկավ տուն: Նա այլևս հարազատ չուներ: Այժմ իրենց գերդաստանից միայն ինքը մնաց: Վաղուց իրենց կյանքին հրաժեշտ էին տվել ծնողները, քույրը: Մնացել էին երկուսով՝ ինքը և ավագ եղբայրը, որին շատ էր սիրում: Չնայած նրա վարած կյանքին, եղբորը սիրում էր այնպիսին, ինչպիսին որ կար: Ցավով էր մտածում, որ նա իր ընտանիքի անդամների համար այդպես էլ օտար մնաց: Այդ պատճառով էլ շտապ հեռացավ՝ ուրիշ աշխարհում հանգիստ գտնելու: Ռուբենն ավելի ու ավելի մռայլվեց: Ու՞մ հետ պիտի գրուցեր, հարազատի կարոտն առներ: Եղբայրն իր հետ տարավ իր մանկության, պատանեկության, հասուն տարիքի հետ կապված հուշերը, որ միայն իրենց երկուսին էր հաճույք պատճառում: Հոգեպես նա անչափ ճնշված էր, ամայացած, հիասթափված: Այս անգամ էլ իրեն սփոփում էին կինը և որդիները, մանավանդ որ դիակերծումից պարզվեց, որ նա ո՛չ ակոհոլ էր օգտագործել, ո՛չ էլ որևէ դեղ էր ընդունել: Գուցե նաև ոչինչ չէր կերել: Ամենադաժան բանն այն է, որ մարդը քաղցած է հեռանում այս աշխարհից: Գուցե նրան օգնե՞լ են: Ո՞վ գիտե... Գեղամին հողին հանձնելուց հետո էլ կրքերը չհանդարտվեցին: Մինչդեռ հոգեհացի արարողությանը նրա աղջիկները, որդին և կինը դերասանների պես տխուր տեսքով ընդունում էին իրենց ուղղված մարդկանց ցավակցությունները:

Հորեղբոր հետ կապված միջադեպը բավականին ծանր ազդեց Հրաչի վրա: Այդ օրը նա իր ընկերների հետ շատ խմեց: Անկասկած, գերեզմանատուն այցելելով, կրկին տակնուվրա եղավ նրա ներաշխարհը: Հոր աչքից ոչինչ չվրիպեց: Նա խիստ զայրացել էր այն փաստից, երբ իմացել էր, որ եղբոր տնիցիները վարձով սեղան ու մոմակալներ էին վերցրել՝ եղբոր դագաղը դնելու համար: Նրանք անգամ ափսոսացել էին օգտագործել իրենց տան սեղանը: Եվ որպեսզի հանկարծ չկռվեր նրա հարազատների հետ՝ մի բաժակ օղորմաթախ խմելուց հետո կնոջ հետ շուտ տուն վերադարձավ: Այնինչ Հրաչը երեկոյան ուշացավ: Ռուբեն Առաքելյանը զանգեց

որդուն, բայց վերջինս նրա զանգին չպատասխանեց: Այս հանգամանքն էլ ավելի սաստկացրեց հոր սրտում բուն դրած տագնապի զգացումը: Անդրանիկին խնդրեց զանգել նրա ընկերներին՝ որևէ տեղեկություն իմանալու համար: Պարզվեց, որ նրանց հետ չէր: Ու՞ր էր գնացել: Նորից գերեզմանատու՞ն: Հազիվ թե: Հայրը մտածեց, որ վերջերս նրա հոգեկան վիճակը կարգավորվել էր: Նա կրտսեր որդու հետ տաքսի կանչեցին և գնացին Հրաչի սեփական բնակարանը: Ճանապարհին հայրը մտածեց, որ Հրաչն ամենայն հավանականությամբ դարձյալ տարվել էր կնոջ մասին ունեցած հուշերով: Եվ չսխալվեց: Բարեբախտաբար, սենյակը ներսից փակ չէր: Մտան ներս: Հրաչը նստած էր ճաշասենյակում՝ սեղանի մոտ՝ գլուխը հենած ընտանեկան լուսանկարչական ալբոմին, որտեղ կնոջ լուսանկարն էր և նրան պատկանող գործած շարժը: Անկասկած, վերջինիս մեջ դեռ պահպանվել էր Շուշանի մարմնի բույրը: Հայրը սաստիկ ազդվեց այդ սրտաճմլիկ տեսարանից: Ավագ որդին շարունակում է տառապել, այնինչ իրեն թվում էր, որ ամեն բան աստիճանաբար ետևում էր մնացել: Տեսնելով, որ նա չափազանց շատ էր ոգելից խմիչք օգտագործել, փորձեց ուշքի բերել, սակայն որդին ոչ մի կերպ չէր շարժվում: Անդրանիկը անհապաղ շտապ օգնություն կանչեց: Հիվանդանոցում արագ լվացվեց նրա ստամոքսը: Հրաչն ուշքի չէր գալիս: Անշուշտ, շնչում էր, բայց դեռ գիտակցության չէր եկել: Բժիշկները պարզեցին, որ նա բացի ալկոհոլից նաև հակադեպրեսային հաբեր էր օգտագործել: Մտածելով, որ նա ինքնասպանության փորձ էր արել, նաև ոստիկաններին կանչեցին: Ռուբեն Առաքելյանը կատարյալ շոկի մեջ էր:

-Չի՛ կարող պատահել: Նա նման բան չէր անի,- համառորեն պնդում էր նա ոստիկանների հետ:

-Բայց ձեր որդին խելացի տղամարդ է: Մի՞թե չէր հասկանում, որ նա ալկոհոլի հետ հաբեր ընդունելով՝ իրեն կամովին դեպի մահ է տանում:

-Կարծում եմ՝ ոչ: Եթե անգամ նա հաբեր է օգտագործել, ապա չի գիտակցել հետևանքների մասին:

-Իսկ գուցե՞ նա օգտագործել է առիթը՝ հորեղբոր մահվան հետ կապված, իր նպատակին հասնելու համար,- հարցրեց ոստիկաններից ավելի ավագը:

-Ի՞նչ նպատակ, հարգարժան կապիտան,- գայրացավ Ռուբեն Առաքելյանը: -Նրա կինը մահացել է ամիսներ առաջ: Նրան հաջողվել է հաղթահարել հոգեկան ճգնաժամը: Որդիս աշխատանքի էր գնում: Մի խոսքով, վերադարձել էր իր սովորական կյանքի ռիթմին:

-Թո՛ղ ձեր ասածը լինի: Մենք պարտավոր ենք ամեն բան ճշտել:

Բժիշկներին հաջողվեց ի վերջո Հրաչին ուշքի բերել: Նախախնամության թելադրանքով հարազատները ժամանակին էին օգնության հասել: Մինչդեռ եթե մի քիչ էլ ուշանային, ամեն բան ողբերգական ավարտ կունենար: Հրաչը բացելով աչքերը, սկզբում չէր գիտակցում, թե իր հետ ինչ էր կատարվել և որտեղ է գտնվում: Իմանալով ամեն բան, զգաց, որ խղճուկ վիճակի մեջ էր հայտնվել: Երբ բոլորը հեռացան, և հայր ու որդի մենակ մնացին, Ռուբենը, այնուամենայնիվ, ուզեց պարզել կատարվածի իսկությունը:

-Որդիս, դու ինձ ձիշտն ասա: Արդյո՞ք ուզում էիր վերջ տալ կյանքիդ: Քո արածն ինքնասպանության փո՞րձ էր, թե՞ պատահականություն:

-Իհարկե, պատահականություն, հայրիկ:

-Այնպես եմ ուզում հավատալ խոսքերիդ: Մի՞թե չգիտեիր, որ ալկոհոլի հետ հակադեպրեսային դեղեր օգտագործելով, կթունավորես քեզ:

-Գիտեի: Բայց այդ պահին չեմ գիտակցել: Ես շատ հուզված էի: Շուշանին հիշեցի: Եղբորդ մահը տակնուվրա արեց հոգիս:

Հայրը մի ակնթարթ լռեց: Նա երկիմաստ հայացքով նայեց որդուն և գլուխն այս ու այն կողմ տարուբերեց:

-Աստված իմ, ես չեմ դիմանա, եթե քեզ հետ վատ բան պատահի: Որպես ավագ որդի դու պետք է ինձ սատարես:

-Հայրի՛կ ջան, ես միշտ քո կողքին կլինեմ: Իսկ ու՞ր է մայրիկը:

-Նա ոչինչ չգիտե: Կարո՞յի հետ տանն է: Դու այսօր այստեղ կմնաս: Վաղն էլ կպառկես, հետո քեզ հիվանդանոցից դուրս կգրեն: Այնպես ինձ վախեցրիր, որ սրտի կաթիլներն էլ չօգնեցին: Հագիվ խաղաղվել եմ:

Ինչքան էլ Հրաչը համոզեց հարազատներին և ուստիկաններին, որ իր անգիտակցության մեջ հայտնվելը կապված չէր ինքնասպանություն կատարելու փորձի հետ, այնուամենայնիվ, չվերացավ հիվանդանոցի բժիշկների մոտ թերահավատությունը նրա վարքագծի հանդեպ: Ավելին. անհրաժեշտություն ծագեց Հրաչին հանդիպելու հոգեթերապևտի հետ: Հրաչը նեքուստ ճնշվեց: Իրականում չէր հիշում, թե ինչու այդպես ստացվեց: Նա մտածեց, որ պատճառը թերևս չափից ավելի ակտիվի օգտագործումն էր, որը մթագնել էր ուղեղը: Միայն հիշում էր, որ հորեղբոր հոգեհացի արարողությունից հետո, ընկերներին՝ Հովիկին ու Վիգենին հրաժեշտ տալուց հետո մենակ եկավ իր բնակարանը, դարձյալ խմեց, լսեց կնոջ նվիրած ձայնակավառակը, ընտանեկան ալբոմը թերթեց, նրա սիրած վզի շարՖը վերցրեց և վերջ: Այնուհետև աչքերը բացեց հիվանդանոցում՝ գամված մահճակալին: Եվ երբ նրա մոտ ներս եկավ հոգեթերապևտը, նույնիսկ չգիտեր, թե ինչպես ճիշտ պատասխաններ տար նրան:

-Դուք ձեզ լա՞վ եք զգում: Բողոքներ չունե՞ք,- հարցրեց տարեց բժիշկը, որը մոտ վաթսուն-վաթսունհինգ տարեկան տղամարդ էր՝ ձերմակ մազերով և խոշոր, արտահայտիչ աչքերով:

-Ո՛չ, կարծես սկսում եմ լավ զգալ, բժի՛շկ:

-Ակտիվից հետո հակադեպրեսային հաբ եք օգտագործել: Եթե չափաբաժինը մեծ լիներ, հնարավոր էր, որ...,-և բժիշկը գլուխը տխուր օրորեց:

-Գիտեմ, հնարավոր էր, որ ձեզ հետ այլևս հնարավորություն չունենայի շփվելու:

-Ճիշտ այդպես: Բայց, փառք Աստծո, վտանգն անցած է: Հիմա կարևորը ձեր ֆիզիկական ու հոգեկան առողջ վիճակի պահպանումն է: Ինձ ասացին, որ վերջին շրջանում դուք մեծ կորուստ եք ունեցել: Կորցրել եք ձեր կնոջը: Նա հիվանդություններ է ունեցել, թե՞ ավտոպթարի՞ց...

-Ո՛չ, նրան սպանել են: Սպանել է նրա համադասարանցին, այն էլ դաժանությամբ:

Հրաչի հոգին կրկին տակնուվրա եղավ: Բայց գուցե բժշկի հետ կիսվելը կթեթևացնեին նրա ներսում բուն դրած թախիծն ու կասկածները:

-Ցավոք, դաժանությունը միշտ էլ գոյություն է ունեցել: Եվ այդ զգացումը մեզանից յուրաքանչյուրի մեջ կա: Ուրիշ հարց է, որ մենք այն ճնշում ենք մեր մեջ: Սակայն կան մարդիկ, ովքեր չեն ուզում դա անել: Մարդու կյանքը մեր օրերում անարժեք է դարձել: Դաժանության ենք հանդիպում ամենուր: Շատերը կարծես թե հարմարվել են: Նույնիսկ երեխաներն են սովորել դաժանությանը: Մի անգամ ինքս ականտեսը եղա մի ցնցող դեպքի: Երեխաներից մեկը կտրել էր կատվի թաթերը և ուրախանում էր այդ արյունոտ տեսարանով:

Հրաչը ոչինչ չպատասխանեց: Որպես ռեժիսոր նրան նույնպես հայտնի էին դաժանության շատ դեպքեր: Նա մտածեց, որ պատճառները գուցե ավելի խորն են, քան կարող ենք պատկերացնել: Թեև որոշ գիտնականների ու հոգեբանների կարծիքով դաժանության ու ագրեսիվության էական պատճառներից մեկը համակարգիչների միջոցով տարածվող դաժան խաղերն են, սպանությունները: Մարդկային հարաբերություններն էլ կարծես յուրօրինակ խաղերի են վերածվել: Չկա փոխգիշում ընտանիքում՝ հարազատների միջև, դրսում և ամենուր: Յուրաքանչյուրն ուզում է իր «ես»-ը հաստատել՝ անկախ այն բանից, թե ինչքանով է ճշմարիտ ու արդարացի իր արարքը: Վատն այն է, որ դիմացինի կողմից հակառակվելու պարագայում գլուխ է բարձրացնում ինքը՝ դաժանությունը: Որդին կարող է սպանել մորը միայն այն բանի համար, որ նա հաճախ է դիտողություն արել՝ անջատելու համակարգիչը: Ստացվում է՝ յուրաքանչյուր չնչին արարքի համար մարդուն հնարավոր է պատժել՝ սպանելով նրան:

-Ե՞րբ է մահացել ձեր կինը: Ինչքա՞ն ժամանակ է անցել,- բժիշկն իր հարցերն ուղղեց հիվանդին:

-Շուտով վեց ամիսը կլրանա: Բայց ես ամեն օր հիշում եմ նրան: Չեմ կարողանում մտքիցս հանել,- մինչև հոգու խորքը թախծեց Հրաչը:

-Բնական է, որ այդպես էլ պիտի լինի: Նրան սիրել ես, ապրել ես կողք-կողքի տարիներ ի վեր: Իսկ գուցե քո մեջ կա մի բան, որ հանգիստ չի տալիս քեզ:

-Այո՛, նման զգացում ունեմ թերևս... Երբ վերջին անգամ միասին էինք, նշում էինք մեր համատեղ կյանքի յոթնամյակը, անկեղծորեն ասացի, որ եթե նրա հետ երբևէ վատ բան պատահի, ինքնասպան կլինեմ: Խոստումս չկատարեցի...

-Հետո՞...Քո քայլով նրան ե՞տ կբերեիր: Գուցե հենց այդ մասին մտածելով ես հաբերը խմել, ո՞վ գիտե...,- բժիշկը թերահավատորեն նայեց հիվանդին:

-Հնարավոր է,- պատասխանեց Հրաչը:- Երևի այդպես էլ մտածել եմ և գործել: Սակայն նորից եմ կրկնում, որ ոչինչ չեմ հիշում:

-Ինչքան գիտեմ, դու աշխատում ես: Ինչպե՞ս ես քեզ պահում աշխատանքի վայրում՝ քո կոլեգաների հետ շփվելիս:

-Չգտում եմ ամեն կերպ պահել հավասարակշռությունս՝ թե՛ տանը, թե՛ աշխատանքի վայրում: Եթե տխրում ես, կարծես թե խախտում ես ընդհանուր մթնոլորտը, չես տխրում, կարող եմ քեզ չհասկանալ: Փորձում եմ կախված չլինել շրջապատից:

-Իմ կարծիքով, եթե մարդիկ տեղյակ են քո հոգեկան ճգնաժամի մեջ գտնվելը, նրանք հնարավորություն կտան ինքդ քեզ հետ լինելու: Չէ՞ որ մենք հաճախ դիմակներ ենք կրում՝ ցանկանալով համապատասխանել նրանց: Եթե դուք ուզում եք լացել, լացե՛ք: Կարևոր է, որ շրջապատի մարդիկ բարեկամաբար լռեն: Սակայն հիշի՛ր, չպետք է ապրել անցյալով: Քո որդին էլ ինչքան գիտեմ, այս տարվանից հաճախում է դպրոց: Նա մոր խնամքի կարիքն ունի: Հնարավոր է, որ հետագայում ամուսնանաս, նոր ընտանիք կազմես: Երբեք չփորձես որևէ մեկին համեմատել կնոջդ հետ: Այդպես ամեն բան ավելի կխճճես: Իսկ հոգեպես խաղաղվելու համար շատ է օգնում աղոթքը: Չե՞ս փորձել:

-Իհարկե, աղոթում եմ մենակ՝ իմ սենյակում, եթե եկեղեցի չեմ մտնում:

-Շատ լավ: Ուրեմն իմացի՛ր, որ դու ուժեր ունես և կկարողանաս հաղթահարել վիշտդ: Հատուկ դեղատոմսեր չկան, որ քեզ տամ: Յուրաքանչյուրը յուրովի է հաղթահարում այդ իրավիճակը:

-Այնուամենայնիվ, կա՞ն խորհուրդներ, որոնք օգնում են մարդուն:

-Մի՛ լսեք նրանց, ովքեր խորհուրդ են տալիս՝ «Պինդ եղի՛ր, տղամարդ եղի՛ր»: Եթե ուզում եք տխրել, տխրե՛ք: Եթե կան մարդիկ, ում հետ կարող եք խոսել, զրուցել, ապա անպայման հաղորդակցվե՛ք: Մի՛ ամաչեք թույլ մարդ երևալ: Վիշտը բոլորին ինչ-որ ժամանակ անօգնական երեխա է դարձնում: Խոսե՛ք Աստծո հետ՝ հեռացած մարդու մասին: Բայց կյանքից հեռացած մարդու հետ մի՛ խոսեք: Ֆիզիկապես նա արդեն չկա: Կարող եք օրագիր պահել: Գրե՛ք ձեր զգացմունքների, մտքերի, ցավերի մասին: Կամ նամակ գրեք նրան ու կհանգստանաք:

-Բայց ավելի շատ վախի զգացողություն կա իմ ներսում: Ի՞նչ անել այդ դեպքում:

-Դուք վախենում եք մենությունից, անհայտությունից: Չեք պատկերացնում՝ ինչպես շարունակել ապրել նորովի: Մի՛ թողեք, որ շրջապատի մարդիկ ձեզ վարքագծի իրենց մոդելն առաջակեն: Միևնույն ժամանակ մի՛ հրաժարվեք նրանց օգնությունից: Վստահե՛ք հարազատներին, միաժամանակ լսե՛ք ինքնեղծ ձեզ: Համբերատար եղե՛ք: Ոչ ոք չի իմանում, թե վիշտն ինչքան կտևի: Այն մերթ սաստկանում է, մերթ՝ նահանջում: Մանավանդ դժվար է տոններին կամ ընտանեկան հանդեսներին: Մի՛ թաքնվեք զգացմունքներից: Կյանքից հեռացածը ձեր կյանքի մի մասն է: Այդ պատճառով պետք է ժամանակին սնվել ու քնել: Եվ պետք չէ հանգստություն գտնել խմիչքի մեջ: Մենք պետք է սովորենք հասկանալ, որ սերն արտահայտվում է նաև վշտի միջոցով: Ուստի վշտի մեջ ձեզ բնական պահե՛ք:

Բժիշկը հեռացավ՝ թողնելով Հրաչին իր մտքերի հետ: Անկասկած, իր հարցերի շատ պատասխաններ նա ստացավ փորձառու մասնագետի խորհուրդներից: Բժիշկն իր հետ

այնպես էր խոսում, ասես անցել էր տառապանքների դժոխքի միջով: Արդյո՞ք այդպես էր, թե՞ մասնագիտական հմտությունից էր այդ ամենը գալիս... Ինչ էլ լինի, բժիշկի գրույցն իրեն օգնեց վերանայելու անվերջ սիրտ մաշող որոշ մտքեր...

Մի քանի օր անց Հրաչին հիվանդանոցից դուրս գրեցին՝ առողջական վիճակը բարելավելուց հետո: Նա այդպես էլ չհասկացավ, թե ինչ կատարվեց իր հետ: Մնալով ծնողների հետ մի հարկի տակ՝ իրեն իրականում ետ էր պահում անցյալի հուշերից: Նույնիսկ հայրը մի առիթով անգամ ակնարկել էր, որ պետք է ժամանակի ընթացքում վաճառել բնակարանը և նորը գնել: Ապրելով առանց սիրո առաքաստի՝ նա զգում էր, որ պարտավոր էր ինչ-որ կերպ իմաստ որոնել կյանքում: Բարեբախտաբար, աշխատում էր սիրած մասնագիտությամբ: Սիրում էր լինել տարբեր վայրերում, շփվել զանազան մասնագիտությունների, խառնվածքների մարդկանց հետ, նկարահանումներ անել, սցենարներ կազմել: Եվ ինչքան էլ ժամանակակից մարդը պատմություններ հյուսի տրամաբանության ու գիտակցության շուրջ, միևնույն է, զգացմունքներով ենք առաջնորդվում ու կյանքի քաղցրությունը դրանց միջոցով ենք ընկալում: Որքան էլ եկեղեցու սպասավորներն ու հոգեբանները պնդեն, որ երազներով չպիտի առաջնորդվել, որ դրանց մեծ մասը սուտ է, ինքը չի հավատա: Գիտությունը դեռ մինչև վերջ չի վերծանել դրանց իմաստը: Նրան միայն հաջողվել է հայտնաբերել տվյալ երևույթի մեխանիզմը, իսկ բովանդակության մասին միայն գուշակություններ է անում: Սակայն փաստ է, որ մարդու երազները նաև հուշարարի դեր են կատարում: Վերջերս էլ Շուշանը դարձյալ նրան երազում հայտնվեց: Իբրև Հրաչն ինչ-որ ճամպուրակ էր կապում՝ պատրաստվելով ճամփորդության, իսկ սիրած կինը տխուր մոտենալով իրեն՝ շնջաց, որ Կարոյին միշտ ուշադրության կենտրոնում պահի: Հրաչը կեսգիշերին արթնացել էր, հուզմունքից ծխել, մի բաժակ ջուր խմել և ափսոսացել, որ երազը կիսատ մնաց: Մի՞թե դա չէր նշանակում, որ նրա հոգին ապրում է իրենց կողքին: Իվ հետո Հրաչն ինչ-որ տեղ կարդացել էր, որ եթե մարդն իր բնական մահով չի մահանում, այլ՝ դժբախտ պատահարից, ապա նա որոշ ժամանակ հաճախ հայտնվում է այնտեղ, որտեղ ապրել ու աշխատել է:

Հրաչի համար չափազանց թանկ է որդին, թեկուզ նրա հետ առանձին ժամանակ էր հատկացնում հատկապես շաբաթվա վերջին օրերին: Մնացած օրերին զբաղված էր իր գործերով: Կարոն հասկանում էր այդ և ավելորդ անգամ չէր տրտնջում: Եվ քանի որ այդ օրն աշնանային եղանակը հաճելի էր ու տաք, Հրաչը որոշեց որդու հետ զբոսանք կազմակերպել դեպի կենդանաբանական այգի: Կարոն շատ էր սիրում կենդանիներին, մանավանդ շներին: Բնակարանային պայմաններում կենդանի խնամելն այնքան էլ հարմար չէր, բայց եթե սեփական տուն ունենային, կիրականացնի որդու ցանկությունը:

-Հայրիկ, ի՞նչ գիտեիր, որ ես ուզում էի գնալ կենդանաբանական այգի,- ճանապարհին հորը ժպտաց փոքրիկ Կարոն:

- Ես մի քիչ կռահում եմ մտքերդ:
- Երբ մեծանամ, ե՞ս էլ քեզ պես կգուշակեմ:
- Իհարկե: Եթե իմ որդին ես, ուրեմն կնմանվես ինձ:
- Մայրիկը երբ զայրանում էր իմ դեմ, ասում էր՝ հորդ կտորս ես:
- Նա իրավացի էր:

Հրաչը փորձեց կտրուկ պատասխաններ տալ տղային, սակայն սրտի խորքում նրա մասին հիշելիս վերքերը կարծես թարմանում էին: Ե՞րբ պիտի սպինային: Հավանաբար ժամանակի խնդիր է:

Կենդանաբանական այգին այնքան էլ մարդաշատ չէր: Չնայած դրան, ճաղերի ետևում՝ վանդակների ներսում կենդանիներն աշխույժ դիմավորում էին իրենց այցելուներին: Անցնելով

գիշատիչ գազանների մոտով, Հրաչը մի պահ մտքերի մեջ ընկավ: Նա մտքում զուգահեռներ անցկացրեց մարդու և կենդանու միջև. «Ինչու՞ ենք հաճախ մարդուն և կենդանուն հակադրում միմյանց: Ինչու՞ է մեզ թվում, թե մարդը լավն է, իսկ կենդանին վատն է: Չէ՞ որ նրանց միջև ոչ մեծ տարբերություն կա: Վերջերս էլ անվերջ պրոպագանդում են, որ գայլերին պետք է ոչնչացնել, քանի որ հարձակվում են ոչխարների վրա: Մեղավորն էլի մարդն է: Նա ոչնչացնում է անտառները, կենդանիները զրկվում են կերից և քաղցի պատճառով հարձակվում են գյուղերի վրա: Այնինչ նախամարդը ապրել է բնության հետ ներդաշնության մեջ և հասկացել է, որ նա բնության մի մասնիկն է: Չի էլ մտածել, որ ինքը կենդանիների տիրակալն է ու եղել է երջանիկ: Անկասկած,- շարունակեց մտածել Հրաչը,- հետո է մարդը դաժանացել՝ քաղաքակրթության ճանապարհին: Եվ գազանը մարդու մեջ մտել է աղճատված տեսքով: Մարդու և կենդանու ներդաշնության փոխարեն ստացվել է մարդ-գազան կամ կիսամարդ-կիսագազան: Մարդը տարբերվում է կենդանուց, որ խոսել գիտե: Սակայն մարդը պիտի լինի ամենից առաջ մարդկային: Կենդանին հարձակվում է, երբ քաղցած է: Իսկ մարդն ամեն առիթով կարող է մարդու համար դառնալ գազան ու ոչնչացնել նրան, ինչպես ստոր մարդասպանը սպանեց Շուշանին: Բոլորովին կարևոր չէ, նա կզոջա իր արարքի համար, թե՞ ոչ: Սարսափելին այն է, որ հանցանքը կատարված է, և մարդասպանն իր պատիժը կրելուց հետո պիտի հայտնվի նորից ազատության մեջ»:

-Հայրիկ, ո՞րն է քո սիրած կենդանին,- որդին իր հարցով հորը հանեց ծանր մտքերից:

-Չին: Նա շատ սիրուն է, խելացի հայացք ունի և հավատարիմ է մարդուն,- պատասխանեց Հրաչը:

-Իսկ առյու՞ծը: Մուլտֆիլմերում միշտ նա գազանների արքան է համարվում: Առյուծը ուժեղ է, նաև ամենագեղեցիկն է կենդանիների մեջ: Ինձ շատ է դուր գալիս:

-Իսկապես լավն է: Պատկերացրու՛, որդիս, առյուծը չի հարձակվի, եթե քաղցած չէ:

Հրաչն ուզեց ասել, որ ամենագիշատիչը մարդն է, որը ոչնչից չի կշտանում, բայց իրեն զսպեց՝ տղայի հոգում ավելորդ ագրեսայի զգացում չառաջացնելու նպատակով:

-Մայրիկը եղնիկներին էր սիրում ու միշտ հյուրասիրում էր նրանց թարմ բուլկիներով,- մորը դարձյալ հիշեց կարոն:

-Գիտեմ: Գնանք բուլկի գնելու: Այսօր դու մայրիկի փոխարեն նրանց կկերակրես:

Որդու ձեռքից բռնած Հրաչը մոտեցավ մթերային փոքրիկ կրպակներից մեկին:

Կենդանաբանական այգուց դուրս գալուց հետո Հրաչը որդու հետ այցելեց Մանեին: Վերջինս շատ ուրախացավ նրանց տեսնելով:

Մանեի մայրը նստած էր բազմոցին և հեռուստացույց էր դիտում:-

-Մորաքույր, ինչպե՞ս ես,- նրա հետ ողջագուրվելուց հետո հարցրեց Հրաչը:

-Լավ եմ: Մայրդ էլ այսօր ինձ մոտ այցելության եկավ:

-Ուրախ եմ, որ հաճելի այցելուներ ունես,- ժպտաց Հրաչը:

-Մանեի հետ մենք հաճախ մենակ ենք լինում:

-Է՛հ, ժամանակը չի հերիքում: Ամեն մեկս մեր գործով ենք տարված: Ծնողներս էլ ամեն օր աշխատում են, նաև Կարոյի հարցում ինձ են օգնում,- մեղավոր հայացքով Հրաչը նայեց մորաքրոջը:

Մանեն այդ ընթացքում խոհանոցից քաղցավենիք ու միրգ բերեց և հյուրասիրեց Կարոյին: Այնուհետև հարցական հայացքն ուղղեց Հրաչին.

-Սուրճ չխմե՞նք:

-Ես կուզենայի ծխել, բայց ո՛չ սենյակում: Խոհանոցում թերևս կխմեմ, եթե դեմ չես:

-Ուրեմն մայրս թող Կարոյի հետ զբաղվեն քաղցրավենիքով, իսկ մենք գնանք խոհանոց,- ասաց Մանեն՝ զարմիկին ուղեկցելով այնտեղ:

Հրաչը տեղավորվեց խոհանոցի անկյունում՝ վառելով ծխախոտը:

-Եղբայրս, կներես ինձ, որ հիվանդանոց չեկա: Հիմա ինչպե՞ս ես, - հարցրեց Մանեն՝ սրճեփղ դնելով գազօջախին:

-Լավ եմ: Ամեն ինչ մնաց ետևում: Փառք Աստծո:

-Մորս հնարավոր չէ մենակ թողնել ո՛չ տանը, ո՛չ դրսում: Եթե բակ է իջնում, կորչում է, մոռանալով շենքի մուտքն ու բնակարանի տեղը: Մի քանի անգամ իմ իմ ծանոթներն են մորս տուն բերել: Այժմ ստիպված եմ խանութ կամ շուկա գնալիս բանալիով փակել դուռը: Նա բոլորովին կորցրել է հիշողությունը:

-Իսկ քու՞յրդ: Նա չի՞ երևացել:

-Նրա մասին ոչինչ մի՛ հարցրու: Ո՛չ եկել է, ո՛չ էլ երբևիցե ուզում եմ հանդիպել նրան: Ծնողն իր չէ, որ հանձնես ուրիշներին: Նրան կարգելեմ, եթե ոտքն իմ տան շեմին հայտնվի:

-Շատ վատ է: Ի՞նչ արած: Իսկ նյութականը ո՞նց ես հասցնում:

-Աղջիկս ամեն ամիս մեզ Հունաստանից գումար է ուղարկում:

Անդրանիկն ինչպե՞ս է: Նա մեզ չի այցելում: Կուզենայի տեսնել նրան, -փոքր-ինչ դժգոհեց Մանեն:

-Լավ է: Վերջին կուրսն այս տարի կավարտի: Դե՛, երիտասարդ է՝ միշտ զբաղված, նաև մասնավոր գործեր է անում համակարգչային ծրագրերով: Դու քեզնից մի քիչ խոսի՛ր: Մինչև ե՞րբ ես մենակ մնալու:

-Ես միշտ աղջկաս հետ կլինեմ:

-Բայց նա քսանհինգ տարեկան է: Մի օր էլ կամուսնանա, իսկ դու՞:

-Այդ մասին չեմ մտածել:

-Հավանաբար ընկեր ունես և թաքցնում ես ինձնից:

-Ո՛չ: Այժմ ամուսնանալ չեմ ուզում: Հնարավոր է, որ հետո մտափոխվեմ: Քեզ համար էլ դժվար է, սակայն գուցե Աստված փորձության է ենթարկում բոլորիս, - փորձեց փիլիսոփայել Մանեն:

-Զգիտեմ: Ինձ համար իրականում ծանր է ապրել առանց Շուշանի: Որդուս հետ հաճախ խոսում ենք նրա մասին, հիշում, այցելում գերեզման: Գիտե՞ս, երբ ջահել տարիքում քեզնից հեռանում է քո ամենասիրելի անձը, հասկանում ես, որ մահն ուժեղ է կյանքից: Եվ վախենում ես...

Մանեի հետ Հրաչը երկար կգրուցեր, եթե որդին ներս չգար խոհանոց: Կարոն վաղուց ձանձրացած էր մնացել իր հոր մորաքրոջ կողքին:

Անդրանիկը երեկոյան հասնում էր իրենց շենքին, երբ ձեռքի հեռախոսը զանգեց: Նա գրպանից հանեց այն և ուզեց պատասխանել զանգին, երբ հանկարծակի նրա մոտ կտրուկ արգելակելով շարժիչը՝ մի մեքենա կանգնեց, որտեղից արագ դուրս եկան երկու երիտասարդներ: Նրանցից մեկը նախքան իրեն մոտենալը սկսեց բարձրաձայն հայիոյանքներ տալ, հետո կոպտորեն բռնեց բաձկոնից: Կողքից անցնողները շվարած նրանց էին նայում: Անդրանիկը, քանի որ զբաղվում էր կարատե մարզաձևով, առաջին հերթին պահպանեց արտաքին և ներքին հանգստությունը: Այսինքն՝ չվախենալ հակառակորդից: Եթե դիմացինը տեսնում է, որ չես վախենում, նա ինքն է սկսում վախենալ: Նույնն է վիճակը, երբ մարդը հանդիպում է գազազած շանը: Միանգամից աշխատում է բնագոր: Անդրանիկը կանգ առավ՝ մտածելով, թե ովքեր են նրանք և ինչ են ուզում իրենից:

-Ու՞մ պատվերով եք ձեր սանձերն արձակել:

-Ուղեղիդ որ գոռ տաս մի քիչ, կհասկանա՛ս:

Այդ պահին մեքենայից հայտնվեց տհաճ դեմքով այն երիտասարդը՝ Ջավենը, որն օրեր առաջ հանդիպել էր իրեն և Աստղիկին:

-Ասենք՝ նրանք իմ պատվերն են կատարում, ուրի՞շ...

-Իսկական տղամարդն ինքն է իր հարցերը լուծում, ոչ թե...

-Դա քո գործը չէ:

-Իհարկե: Դու ոստիկանի որդի ես և քեզ թվում է, թե ամեն ինչ թույլատրելի է քեզ:

-Ոնց որ հասկացար, թե ում հետ գործ ունես: Իմացի՛ր, որ գեղեցիկ աղջիկների հետ հանդիպելը քո գործը չէ:

-Դու ինձ կարգադրում ես՝ ինչպե՞ս ապրել: Բայց դու նախ և առաջ ինքնասիրություն պիտի ունենաս: Աստղիկը քեզ բացատրեց, որ ընկեր ունի և քեզ տեսնել չի ուզում:

-Եթե դու մեջտեղ չընկնեիր, ես կհամոզեի նրան...

-Դրա համար փոխադարձ համակրանքի պիտի արժանանաս:

-Ո՞վ չգիտե, որ աղջիկները սկզբում կամակորություն են անում, հետո համաձայնվում են,- Անդրանիկն նրա լայիշ տեսքը լույսի ներքո ավելի զգվելի թվաց:

-Չէ՛, քեզնից շատ հեռու է զգացմունք բառը: Աղջիկների մասին դու ոչինչ չգիտես:

-Քեզ պրոֆեսորի տեղ մի՛ դիր: Աստղիկը իմը պիտի լինի, ուզես, թե՞ չուզես:

-Մի՞թե դժվար է քեզ համար հասկանալը, որ աղջիկներն են ի վերջո մեզ ընտրում: Բռնությամբ երբեք ոչ մեկի սիրուն չես արժանանա:

-Ժամանակը ցույց կտա: Մինչև գետն անցնելը վարտիքիդ փողկերը ետ մի՛ քաշիր:

-Սպառնու՞մ ես ինձ:

-Արդեն շա՛տ ես խոսում,- ու նա կրկին դեմքի ցինիկ ժեստով հասկացրեց տղաներին՝ կատարել իրենց տրված հանձնարարությունը:

Անդրանիկն այս անգամ վայկենապես որոշում ընդունեց:

-Հիմա ձեզ ցույց կտամ, թե ինչպես են կռվում:

Փողոցային լույսերը վառված էին: Նա շրջվեց մեջքով դեպի լույսը, որպեսզի լույսն ընկնի հակառակորդի դեմքին և դիմեց նրանց.

-Տղաներ, վերջին անգամն եմ ձեզ ասում՝ գնացե՛ք ձեր ճամփով և ձեր ընկերոջն ասե՛ք՝ հանգիստ թողնի Աստղիկին:

Ի պատասխան նրա հնչած խոսքերի՝ նորից հայիոյանքներ լսվեցին և խրատներ: Երիտասարդներից մեկն ավելի քան բարձրահասակ էր, երկրորդը՝ բոյով ցածր էր իրենից: Անդրանիկը նրանցից չվախեցավ: Նախ՝ արդեն փողոցային կռիվների փորձն ուներ: Երկրորդը՝ կարատեի գծով արդեն մրցանակ ուներ, և պարզ էր, որ նրանցից միայնակ զլուխ կհաներ: Երրորդ պատաճառն այն էր, որ երիտասարդները հարբած էին: Դա նույնպես իր առավելությունն էր: Ստածեց միայն, ումից առաջինը սկսել, քանի որ ոչ ոքի չէր էլ ճանաչում և իր համար ի վերջո միևնույնն էր: Սկզբում ցատկեց՝ մարտական ոճի հարվածներ հասցնելով ավելի բարձրահասակին: Հարվածեց աջ կողմից այն հաշվով, որ նա չի հասցնի հակազդել, բայց նա հասցրեց, և այս դեպքում նրա բոյը զգալի դեր խաղաց: Անդրանիկը որպեսզի չընկնի գետնին, մի քանի քայլ ետ-ետ գնաց: Այս անգամ նա ոտքով հարված հասցրեց ձախից՝ շրջելով մարմինը: Հարվածը բավականին դիպուկ ստացվեց: Նա փլվեց գետնին և չչարժվեց: Մի քանի վայրկյաններ անց նա բարձրացավ և նորից հարձակվեց՝ բռունցքով խփեց Անդրանիկի դեմքին ու նրա քթից արյուն հոսեց: Այս անգամ Անդրանիկը աջից հարձակվեց, նա ընկավ: Մյուս երիտասարդը դանակը հանեց գրպանից, որ խփի, ոտքի հարվածով Անդրանիկը թքրեց այն: Բակի կողմից մարդիկ դուրս եկան: Նրանք խուճապար եղած՝ թողեցին ու հեռացան:

Տանն իր հետ կատարվածի մասին Անդրանիկը միայն հայտնեց ավագ եղբորը:

Հրաչը որպես ռեժիսոր հրավիրվեց հարցազրույցի «Ղար 21» հեռուստաալիքից: Նա ուզում էր հրաժարվել հրավերից, բայց հարմար պատճառ չգտավ: Բնությունից լինելով համեստ անձնավորություն՝ խուսափում էր գովազդներից: Թեկուզ որպես կանոն այդ աշխարհի մարդիկ ավելի շատ սիրում են ցուցադրել այն ամենն, ինչ կատարում են, որպեսզի ժողովրդի մեջ ոչ միայն տպավորություն ստեղծեն, այլև հասարակությունը միշտ հիշի նրանց:

Երբ Հրաչը ներկայացավ հարցազրույցի՝ երկու հեռուստահաղորդավարները ջերմությամբ ընդունեցին իրեն: Եվ քանի որ առաջին անգամն էին հանդիպում Հրաչ Առաքելյանին, ուստի խնդրեցին համառոտ պատմել կենսագրությունը:

-Նախ շնորհակալ եմ հրավերի համար: Այնքան էլ հարուստ կենսագրություն չունեմ: Ծնվել եմ Երևանում: Ավարտել եմ Թատերական ինստիտուտի ռեժիսուրայի ֆակուլտետը: Զուգահեռաբար զբաղվել եմ նկարչությամբ: Երգի հանդես էլ սեր ունեմ: Ղարոցում երգել եմ երգչախմբում: Սիրում եմ լուսանկարչություն: Գրում եմ երբեմն էսսեներ: Ղե՛, մնացածի մասին տեղյակ եք,- ժպտաց Հրաչը՝ նայելով երկուսին:

-Գիտենք, որ զբաղվում եք հիմնականում ռեժիսորական աշխատանքով: Նաև գովազդային տեսահոլովակներ եք նկարահանում: Իսկ պատահե՞լ է, որ ինքներդ եք նկարահանվել ֆիլմերում,- հարցրեց հաղորդավարներից մեկը:

-Այո: Մի անգամ նկարահանվել եմ կեսժամանոց ֆիլմում, որտեղ Քրիստոսի դերն էի կատարում:

-Չէի՞ք վախենում, որ Քրիստոսի տանջանքները ձեզ վրա էլ կտարածվեն:

-Չգիտեմ: Շատ հնարավոր է: Թեև Վիգեն Չալոբանյանն էլ իր ֆիլմերից մեկում խաչվում է Քրիստոսի պես: Ինչ խոսք, որ կինոաշխարհում գոյություն ունի նման վախ: Հերոսների ճակատագիրը երբեմն տարածվում է դերասանների վրա:

-Բոլորովին վերջերս մի հաջողված տեսահոլովակ եք նկարահանել երիտասարդ երգիչ Վաչագան Սարգսյանի մասին: Ինչո՞վ է պայմանավորված դրա հաջողությունը: Բայց նախքան մեր հարցին պատասխանելը՝ միասին դիտենք մի հատված այդ տեսահոլովակից:

Նշված տեսահոլովակից մի հատված դիտելուց հետո Հրաչը պատասխանեց նրանց կողմից իրեն տրված հարցին:

-Հաջողությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Նախ և առաջ երգչի կատարումը, երգի բովանդակությունը, նկարահանման համար վայրը, անհրաժեշտ դետալները, մոնտաժումը և այլն:

-Տեսահոլովակի մեջ շատ գեղեցիկ բնապատկերներ կան: Նկարահանումները կատարել եք միայն Արցախում, թե՛...էլ որտե՞ղ եք եղել:

-Այո: Նկարահանումները կատարվել են այդ չքնաղ լեռնաշխարհում: Մենք ցանկացել ենք կադրերում ներառել լեռները, գետերը, եկեղեցիներից՝ հիմնականում Գանձասարն է, Ամարասը, Ղազանչեցոց եկեղեցին:

-Ղուք տարբեր երաժիշտների հետ տեսահոլովակներ եք նկարել: Ինչպե՞ս եք մշտապես նորանոր գաղափարներ գտնում:

Հրաչը բարեհամբույր ժպտաց: Հաղորդավարներն այնպիսի ջանասիրությամբ էին իրեն հարցերն ուղղում, ասես որոշել էին երկուսով իրականում թափանցել իր մասնագիտական գաղտնիքների մեջ:

-Լավ հարց է: Ասեմ, որ ես սիրում եմ հնարքներ անել: Եվ հետո երգի վերնագիրը հուշում է ինձ նկարահանման տեքստը: Անշուշտ, տեսնում եմ, թե ինչպիսին է նրանց իմիջը և ինչպես դրանք ավելի ցայտուն ընդգծել:

-Երգիչները հաճա՞խ են վիճում նկարահանման հրապարակում՝ չհամաձայնվելով ձեզ հետ:

-Իհարկե: Երբեմն ի սկզբանե կարող են չհասկանալ, քանի որ նրանք պատրաստ չեն տեսնել իրենց իմ աչքերով: Գիտե՞ք, նկարչի օգտագործած միջոցներն էլ տարբեր են: Մեկը վրձինն է շատ օգտագործում, մյուսը՝ մատները: Այդպես էլ ռեժիսորների մոտ է: Երաժշտական տեսահոլովակներ նկարահանելիս զգում եմ ինձ ոչ թե վարձու աշխատող, այլ՝ հեղինակ:

-Այսինքն՝ տեսահոլովակը փոքրիկ ֆիլմ է, նկա՞ր...

-Այո՛, նկար: Ես ընկալում եմ յուրաքանչյուրին որպես օբյեկտ և ձգտում եմ նրա շուրջ ստեղծել աշխարհ՝ իմ աչքերով:

-Ձեր ո՞ր տեսահոլովակներն եք ինքներդ հավանում:

-Էդվարդ Միրզոյանի, Տիգրան Մանսուրյանի մասին պատմվող տեսահոլովակները:

-Իսկ ինչպե՞ս էին ընթանում աշխատանքները երիտասարդ երգիչ Վաչագանի հետ:

-Նա խելամիտ ու շնորհալի երաժիշտ է: Սիրում է իր մասնագիտությունը: Նա էլ իր հերթին նկարահանման ընթացքում ինչ-որ բաներ հուշեց: Սակայն Վաչագանը վստահեց մեզ նկարահանել այն, ինչ մենք հարմար գտանք: Հետո մեզ հետ աշխատեց տեսահոլովակը մոնտաժելու ժամանակ:

-Ինքներդ ի՞նչ երաժշտություն եք սիրում ունկնդրել:

Հրաչն այս անգամ թախիծով ժպտաց: Կնոջ մահից հետո միայն տխուր երաժշտություն էր լսում, այն էլ՝ ոչ հաճախ: Բայց նա իրեն թույլ չտվեց մինչև վերջ անկեղծանալ հեռուստահաղորդավարների առջև:

-Նայած տրամադրությանս: Ավելի շատ դասական երաժշտություն եմ սիրում՝ Վերդի, Բեթհովեն, Շոստակովիչ, Վիվալդի և ուրիշներ:

-Ովքե՞ր են ձեր սիրած կինոռեժիսորները:

-Ստիվեն Սպիլբերգ, Մարտին Սկորսեզե, Ֆեդերիկո Ֆելինի:

-Խնդրեմ, թվարկեք երեք բան, որոնք կարևոր են ձեր կյանքում:

-Լինել սիրահարված այն գործին, որն անում ես: Ունենալ սիրած կին, սիրած ընկերներ:

-Կուզենայի՞ք երբևիցե ֆիլմ նկարահանել որևէ հեքիաթի մասին: Հիշու՞մ եք, խորհրդային շրջանում այդպիսի ֆիլմեր շատ էին նկարահանվում:

-Մեծ հաճույքով: Բայց դրա համար նյութական միջոցներ պիտի ունենալ: Եվ, առհասարակ, որպես ռեժիսոր շատ ծրագրեր ունեմ: Ցավոք, կինոն արվեստների մեջ ամենաթանկ ու դժվարին ճյուղն է: Եթե նկարիչը, երաժիշտը կամ գրողը կարող են ստեղծագործել և սուղ միջոցներով բավարարել իրենց ստեղծագործական պահանջը, ապա կինոֆիլմը կախված է մի խումբ համախոհներից/ սցենարիստ, օպերատոր, նկարիչ, երգահան, լուսավորող և այլք/, տեխնիկական միջոցներից: Կինոշուկան չափազանց թանկ հաճույք է ինչպես Հայաստանում, այնպես էլ ողջ աշխարհում:

-Ի՞նչ կարող եք ասել ներկայիս արվեստի մասին, դա լինի կինո, գրականություն, նկարչություն և այլն:

-Ցավոք, հաճախ հեռուստաթերով արվեստի որ ոլորտի մասին էլ խոսվում է, խոսվում է միայն անցյալ ժամանակով: Անշուշտ, պիտի միշտ հիշել մեր մեծերին յուրաքանչյուր ասպարեզում, բայց մոռանում ենք, որ մենք շարունակում ենք ապրել և ստեղծագործել: Մարդիկ նույնպես հոգնել են նույն անունները լսելով: Ներկայումս էլ արժեքավոր գործեր են ստեղծվում, սակայն ամեն բան ժամանակի ընթացքում է իր գնահատականը ստանում: Ուրիշ հարց է, որ հաժախ աղավաղվում են այդ արժեքները... Այսինքն՝ մեծարվում են ոչ արժանիները...

-Որպես կինոաշխարհի նվիրյալ, ինչպե՞ս եք պատկերացնում ձեր գործունեությունն ապագայում:

-Դժբախտաբար, իմ գործունեությունը կինոյում կախված է մեր երկրի վիճակից, մշակույթի հանդեպ պետության վերաբերմունքը փոփոխուց, մեծահարուստների մոտեցումներից: Ցանկալի կլիներ ունենայինք կինոյի երանելի մեկենասներ: Այդ դեպքում կարող ենք ստեղծել

այնպիսի ֆիլմեր, ինչպիսիք ստեղծվում էին նախկինում: Անկասկած, կնկարահանվեին մեծածավալ գեղարվեստական կտավներ, հայ ազգի անկախության, Արցախյան պատերազմում տարած հաղթանակի և վայրիվերումներով հանդերձ՝ այսօրվա եռուն շրջանի մասին, որը նույնպես պատմագեղարվեստական արժեք է ներկայացնում:

-Շնորհակալություն Ձեզ շատ հետաքրքիր գրույցի համար,- վերջում գոհ ժպտացին հաղորդավարները ռեժիսորին:

-Ես նույնպես կրկին շնորհակալ եմ հրավերի համար:

Ուշ երեկոյան Հրաչը մեքենայով տուն էր վերադառնում, երբ ճանապարհին նկատեց կանգառի անկյունում միայնակ կանգնած մի երիտասարդ կնոջ, որը սրբում էր աչքերի արցունքները: Հորդառատ անձրևին զգացվում էր, որ երթուղային տաքսիներն ավելի էին քչացել, իսկ մայթերին միայն հատուկենտ մարդիկ էին՝ անձրևանոցները ձեռքներին: Հրաչը ինքնաբերաբար մի ակնթարթ կանգնեց կանգառին մոտ և իջեցնելով մեքենայի ապակին՝ կանչեց միայնակ կնոջը: Անծանոթն անձրևից թրջված՝ մոտեցավ մեքենային՝ բացելով դուռը:

-Նստե՛ք: Որտե՞ղ եք ապրում: Ես ձեզ տուն կհասցնեմ:

-Վախենում եմ տուն վերադառնալ,- կամաց շշնջաց կինը:

-Այսինքն՝ ձեր ամուսնու՞ց եք վախենում, թե՞...

-Ո՛չ: Ես ամուսին չունեմ: Ինքս ապրում եմ վարձով սեփական տանը: Տանտիրոջս որդին արդեն մի քանի անգամ զգուշացրել է, որ ես տունն ազատեմ: Մտադիր են հացի փուռ սարքել իմ սենյակի տեղը: Իսկ ես դեռ էժան գնով հարմար տուն չեմ գտել:

-Ինքներդ որտեղի՞ց եք: Երևի՝ ո՛չ Երևանից:

-Ես Արմավիրի շրջանի գյուղերից մեկում էի ապրում: Ամուսնալուծված եմ, ունեմ երկու աղջիկ: Այստեղ տեղափոխվել եմ աշխատանքի նպատակով: Աշխատում էի «ՍԱՍ» սուպերմարկետում: Այսօր էլ մի քանի հաստիքներ կրճատեցին: Հիմա գործազուրկ եմ: Անփող տուն վերադառնալ չեմ ուզում: Մի ամիս է, ինչ աշխատավարձ չեն տվել:

-Բայց չէի՞ք կարող այս ամենը բացատրել ձեր տանտիրոջը և նրա տղային:

-Է՛հ: Նրանք սպառնում են իմ իրերը փողոց շարտել, եթե ես դրանք չհանեմ: Մի երկու օր մեր աշխատակիցներից մեկի տանը գիշերեցի, իսկ դրանից առաջ միայն մուրճ ընկնելուն պես էի իմ տուն մտնում, սակայն լույսը չէի վառում, որպեսզի ինձ չնկատեն:

-Այ քեզ անգթություն, -Հրաչը մի պահ լսելով նրա տխուր պատմությունը՝ խղճաց նրան: Լավ, հանգստացե՛ք: Ես ձեզ իմ բնակարանը կտանեմ: Այնտեղ ժամանակավորապես կապրեք, մինչև նոր գործ ու վարձով տուն կգտնեք:

Անծանոթ կինը հանկարծակիի եկավ: Նա իր հույսը դրել էր Աստծո կամեցողությանը և բարի տղամարդու օգնությամբ կարծես ամեն բան բարեհաջող ընթացք ստացավ: Երբ տեղ հասան, կինը դողալով ու շփոթված մտնելով Հրաչի բնակարանը, նկատեց, որ սենյակում գեղեցիկ կնոջ լուսանկարներ էին շարված, և ամենուր իրերը ծածկված էին խիստ փոշով:

-Ղու թրջված ես: Գնա՛ բաղնիք, զգեստափոխվիր: Այնտեղ տաք խալաթ կա, հագի՛ր, մինչև շորերդ կջորանան: Իսկ ես թեյնիկը կդնեմ զազօջախին:

Երբ Հրաչը թեյնիկը ձեռքին խոհանոցից մտավ ճաշասենյակ, անծանոթ կինն արդեն հագել էր խալաթը և մրսելուց կծկվել էր բազմոցի մի անկյունում: Հրաչն էլեկտրական լույսի ներքո նկատեց, որ նա սիրուն դիմագծեր ուներ, սակայն մի տեսակ խրտնած եղնիկի հայացքով էր նայում իրեն:

-Մոտեցի՛ր սեղանին: Ես հիմա բաժակները կբերեմ:

Կինը Հրաչի ձեռքից վերցրեց սեղանի սրբիչը՝ մաքրելով սեղանի փոշին: Հրաչը սինու վրա բերեց բաժակները, շաքարավազը և տան պահարաններում պահված պատահական մուրաբայի տարաներից մեկը::

-Երևի քաղցած եք: Բայց տանն ուտելու ոչինչ չկա: Այստեղ մարդ չի ապրում:

-Ո՛չ: Քաղցած չեմ: Կեսօրին հասցրել եմ աղջիկների հետ երշիկով և պանիրով բուտերբրոդ ուտել:

-Շատ լավ: Ուրեմն թեյենք և կտաքանա՛ք: Իսկ դու անձնագիր ունե՞ս:

-Իհարկե,- կինը մոտենալով ձեռքի պայուսակին՝ այնտեղից հանեց անձնագիրը և մեկնեց տանտիրոջը:

Հրաչը բացեց այն ու նայեց անձանոթ կնոջը:

-Ուրեմն Տաթև է անունդ: Իմ անունը Հրաչ է: Այժմ ապրում եմ իմ ծնողների հետ:

-Այս քո՞ կնոջ լուսանկարներն են...,- հարցրեց Տաթևը՝ հայացքն ընդգրկելով տան իրերին:

-Այո: Նա մահացել է վեց ամիս առաջ՝ դժբախտ պատահարից:

-Ցավակցում եմ: Կներես ինձ նման հարցադրման համար:

-Ոչինչ: Ես հիմա մենակ եմ թողնում քեզ: Դուք այստեղ քեզ հանգիստ կզգաս: Սա էլ իմ հեռախոսահամարն է,- Հրաչն իր այցեքարտը մեկնեց երիտասարդ կնոջը:- Ձանգիր ինձ, երբ կուզենաս ազատել բնակարանը:

-Իսկ չե՞մ կարող այստեղ վարձով բնակվել:

-Ո՛չ: Դու այստեղ անվճար կմնաս այնքան ժամանակ. մինչև կկարգավորես գործերդ: Ցտեսություն:

Հրաչը վերցնելով նրա անձնագիրը և դնելով ծոցագրպանում՝ շտապ հեռացավ:

Շաբաթ օրն առավոտյան Հրաչը որոշեց որդու հետ Էջմիածին մեկնել: Փոքրիկ Կարոն ցնծությունից յոթերորդ երկնքում էր: Հրաչը մորը խնդրեց ավելի տաք շորեր հագցնել թռանը, իսկ ինքը մտավ կրտսեր եղբոր սենյակը: Տեղափոխվելով ծնողների մոտ, նա բռնագրավել էր եղբոր ընդարձակ սենյակը: Անդրանիկն այժմ գտնվում էր պատշգամբի սենյակատիպ անկյունում, որտեղ նրա համակարգիչն էր և անկողինը: Այսինքն՝ այնտեղ և՛ պարապում էր, և՛ քնում: Նա դեռ չէր արթնացել: Հրաչը ոչ միայն եղբորն արթնացրեց, նաև ցանկություն հայտնեց իր հետ միանալու: Անդրանիկը քնաթաթափ նստեց տեղում:

-Կարո՞ղ եմ ընկերուհուս ևս հրավիրել,- հարցական նայեց ավագ եղբորը, որի ցանկությունն իր համար օրենք էր:

-Իհարկե: Հարմար առիթ կլինի տեսնել, թե ում ես հավանում և նրա համար կռիվ տալիս տղաների հետ,- Հրաչը նկատի ուներ օրեր առաջ անձանոթ տղաների հետ ունեցած ծեծկռտուքը, որի հետևանքով դեռ եղբոր աչքի տակ կապտուկներ կային:

Անդրանիկը միանգամից զգաստացավ: Նա վերցնելով կողքին ընկած բջջային հեռախոսը՝ կապվեց ընկերուհու հետ:

Քիչ անց տնեցիները միասին նախաձառեցին, իսկ հետո երեքով դուրս եկան տնից: Ճանապարհի կեսից էլ նրանց միացավ Աստղիկը: Երբ տեղավորվեց մեքենայի մեջ Անդրանիկը նրան ծանոթացրեց եղբոր հետ: Վերջինիս դեմքին պայծառ ժպիտ թրթռաց:

-Լավ էլ գտել եք իրար,- ասաց նա:- Ասեմ, որ նույնիսկ արտաքինով նման եք միմյանց:

-Իսկապե՞ս,- զարմանքով հարցրեց Աստղիկը:

-Դու ավելի շատ նման ես իմ երագանքին,- պատասխանեց Անդրանիկը՝ դեմքով շրջվելով դեպի սիրած աղջիկը:

Հրաչը ժպտաց՝ նայելով կրտսեր եղբորը: Նա մտածեց, որ եղբայրն իր ռոմանտիկ պահվածքով ոչնչով չէր զիջում իրեն և ավելացրեց:

-Եթե իրար սիրում եք, պետք է հաղթահարեք ամեն տեսակի խոչընդոտները:

Անդրանիկը և Աստղիկը ոչինչ չարձագանքեցին: Այնինչ Հրաչն այս անգամ դիմեց աղջկան.

-Աստղիկ ջան, երևի արդեն համոզվեցիր, որ եղբայրս ուժեղ է ու սկզբունքային: Հետո էլ նա կարգին մարզիկ է, ինչն էլ օրեր առաջ ապացուցեց որոշ մարդկանց: Բայց, միևնույն է, եթե իմ օգնության կարիքն ունենաք, պատրաստ եմ միշտ աջակցել ձեզ:

-Գիտեմ, եղբայրս: Ես դեռ մեծ ճանապարհ պիտի անցնեմ հասնելու քեզ,- հպարտությամբ պատասխանեց Անդրանիկը:

Աստղիկը ոչինչ չասաց: Նա հասկացավ, թե Հրաչը պաշտպանելով կրտսեր եղբորը, ինչ նկատի ուներ: Լայիրշ Ջավենը շարունակում էր իրենց խանգարել, բայց դա նրան չի հաջողվի:

Փոքրիկ Կարոն ուզեց իրեն էլ ուշադրության կենտրոնում պահեն: Նա, որ նստած էր մեքենայի նստատեղի երկրորդ շարքում, դիմեց հորը.

-Հայրիկ, չի՞ լինի, ես առջևում նստեմ:

-Էլի՞ նույն հարցն ես տալիս: Չէ՞ որ արդեն ասել եմ, որ մի քիչ էլ պիտի սպասես: Երբ մեծանաս, իմ տեղն էլ կնստես, որդի՛ս, և դու կվարես մեքենան:

-Ճի՞շտ ես ասում, հայրիկ: Ինձ դուր է գալիս մեքենա վարելը, -ուրախացավ տղան:

-Բայց պետք է լինես զգո՛ւն, ուշադիր, հավասարակշռվա՛ծ:

-Կանեմ այնպես, ինչպես կասես, հայրիկ:

Աստղիկին դուր եկավ տղայի ինքնավստահությունը: Նա իր ձեռքի պայուսակից շոկոլադ հանեց և տվեց Կարոյին: Վերջինս շնորհակալություն հայտնելով՝ վերցրեց և իսկույն ևեթ բացեց այն: Անդրանիկը, որ նստած էր եղբոր կողքին, միացրեց ռադիոընդունիչը, և բոլորը տարվեցին երաժշտությամբ:

Էջմիածնում նրանք նախ մտան Մայր տաճար, իսկ հետո Սուրբ Գայանե եկեղեցի: Այնուհետև Հրաչն իր խմբին հրավիրեց սրճարան: Հենց այդ ժամանակ էլ նրան զանգեց ընկերը՝ Սևակը: Պարզվեց, որ վերադարձել էր ԱՄՆ-ից և այժմ գտնվում էր իրենց ամառանոցում՝ Ջորադբյուրում: Նա ցանկություն հայտնեց հանդիպել Հրաչին՝ հրավիրելով նրան իր մոտ: Հասնելով Երևան՝ Հրաչը խնդրեց եղբորը Կարոյին տուն տանել, իսկ ինքը արագ մտնելով խանութ՝ որոշ մթերքներ վերցրեց և ուրախ սւացավ ընկերոջ մոտ:

Սևակի ուրախությանը չափ ու սահման չկար: Նա ի տարբերություն Հրաչի՝ ավելի ցածրահասակ էր, պինդ կազմվածքով, նոսր, հարթ մազերով, որը դեպի ետ էր սանրում: Եվ ամենակարևորը՝ ուներ անսահման բարի ժպիտ, որը չափազանց պայծառ էր ու վարակիչ: Այս անգամ էլ մեկնելուց առաջ յուրաքանչյուրի համար նվերներ էր բերել, որ անձամբ հանձներ նրանց:

-Աչքերիս չեմ հավատում, որ այստեղ մենակ ես,- ընկերոջը պինդ փաթաթվելով՝ ասաց Հրաչը:

-Ինչու՞: Նախ քեզ էի առաջինը զանգել ու համոզված էի, որ շատ շուտ կգաս,- ու Հրաչի ձեռքը բաց չթողնելով՝ կարոտով ու մանրազնին տնտղեց նրան:- Գիտե՞ս, հինգ տարի է, ինչ քեզ չեմ տեսել, և, անկեղծ ասած, տեսքով ավելի ես առնականացել: Քեզ կարճ բեղ ու մորուքն էլ շատ է սագում: Այդ երբվանի՞ց ես իմիջդ փոխել: Բրավո՞...

-Շուշանի մահից հետո քառասուն օր չթրաշվեցի, իսկ երբ դեմքս ուզեցի սափրել, որոշեցի մի քիչ էլ մազափունջ թողնել:

-Ճիշտ էլ վարվել ես: Հպարտ ու հրաշալի տեսք ունեցող արվեստագետ:

-Դե, հերիք է ինձ գովես: Դու քեզնից խոսիր: Քանի՞ օրով ես ժամանել: Ովքե՞ր են այսօր մեզ միանալու:

-Ամանորի նախօրյակին կմեկնեմ: Ընտանիքիս հետ կտոնեմ Նոր տարին և Սուրբ Ծնունդը: Խոստացել եմ նրանց: Գործեր ունեի Երևանում և միանգամից թռա այստեղ: Իսկ մեր կուրսեցիների հետ կապվել եմ: Նրանք էլ շուտով տեղ կհասնեն: Հիմա մի-մի բաժակ կոնյակ և սուրճ կխմենք, մինչև մեր ընկերները կժամանեն:

Սևակը գնաց խոհանոց, Հրաչն էլ նրա ետևից:

-Ես քեզ կօգնեմ: Իմ պայուսակն էլ այստեղ դիր: Թող պակասություն չզգացվի: Որքան շատ եմ կարոտել քեզ, Սևակ: Երևի չես պատկերացնում,- հուզմունքից Հրաչը մի ծխախոտ հանեց գրպանից և վառեց:

-Ես նույնպես նույն զգացողությունն ունեմ: Եվ հիշիր, որ կյանքում չեմ թողնի, որ մազդ երբևէ ծռվի: Դու ինձ համար ավելի շատ եղբայր ես, քան՝ ընկեր:

-Ես հորս միշտ էլ ասում եմ, որ երկու եղբայր ունեմ: Մեկը դու ես, մյուսը՝ իմ եղբայրը՝ Անդրանիկը:

Սևակը գոհ ժպտաց: Իրականում նա Հրաչին ավելի մեծ տեղ էր տալիս իր կյանքում: Պատճառն ի սկզբանե ոչ միայն փոխադարձ հարգանքն էր ու համակրանքը, այլև նրա յուրօրինակ մտածողությունը, տաղանդը, ընկերասիրությունը: Ու էլի ինչ-որ անբացատրելի զգացում՝ կախարհական հմայքը, որի կարիքը մարդն զգում է յուրաքանչյուր տարիքում: Այդ առումով Հրաչը Սևակի համար նման էր գեղեցիկ հեքիաթներում միշտ չար դևերին հաղթող այն ուժեղ ասպետին, որին սիրահարավում են արքայադուստրերը:

-Դու ասա՛ ինձ, Շուշանի գերեզմանաքարը պատրաստեցի՞ք: Ամեն ինչ քո սրտով եղա՞վ,- սրճեփղ դնելով զազօջախին՝ հարցրեց Սևակը:

-Այո: Շնորհակալ եմ: Մի անգամ կգնանք այնտեղ, ինքդ կտեսնես:

-Անպայման: Դու միայն նախապես ինձ կզգուշացնե՛ս:

Երբ սուրճն արդեն պատրաստ էր, նրանք տեղափոխվեցին հյուրասենյակ, նստելով վառվող բուխարիկի դիմաց: Հետո իրենց մոտեցրին եռոտանի փոքրիկ սեղանը՝ տեղադրելով այնտեղ կոնյակը, սուրճը և միրգը:

-Ինչպե՞ս են գործերդ, Հրաչ ջան: Հեռախոսով շատ բան ասել չի ստացվում:

-Ոչինչ: Դժգոհ չեմ: Նկարահանման պատվերներ ունենում ենք: Դե լավ, վերցրու՛ բաժակդ, խմենք մեր հանդիպման կենացը:

-Խմենք, բարեկամս: Միշտ առողջ տեսնենք միմյանց ու որ կարևորն է՝ հնարավորություն ունենանք կարոտներս ժամանակ առ ժամանակ իրարից առնելու,- բարեհամբույր ժպտաց Սևակը և դատարկելով բաժակը՝ ձեռքը մոտեցրեց սուրճին:

-Հիշու՞մ ես, թե այս բուխարիկի մեջ ինչքան խորոված ենք արել և ինչպիսի՞ գեղեցիկ երեկույթներ ենք անցկացրել,- հարցրեց Հրաչը:

-Ինչպե՞ս կարելի է մոռանալ: Հենց այդ հուշերն են ինձ միշտ բերում այստեղ: Այսօր էլ նույն այս բուխարիկում խորոված կանենք, նորից կվերակենդանացնենք մեր հիշողությունը: Քանի մեր ընկերները չեն եկել, դու քո ծրագրերից խոսիր:

-Հատուկ ծրագրեր չունեմ: Ամեն բան նյութական միջոցներից է կախված, թե չէ...

-Ուրեմն լսիր: Դու մտածիր, թե ինչ վավերագրական ֆիլմեր կարելի է անել: Դրանք նաև անպայման պիտի թարգմանվեն անգլերեն լեզվով: Ցանկալի է, որ թեման վերաբերվի ցեղասպանությանը կամ Արցախյան պատերազմի հերոսներին: Ես կֆինանսավորեմ: Դու կարող ես, պարապ մի՛ նստիր: Քեզ հնարավորություն եմ տալիս լուրջ մտածելու ու գործելու: Իսկ ես համոզված եմ, որ լուրջ մտահղացումներ ունես և քեզ մոտ շատ լավ կստացվի:

-Այդ դեպքում, կմտածեմ ինչ անել, նյութեր կհավաքեմ, սցենարներ կկազմեմ: Մի խոսքով, ինքս էլ ուզում եմ քո առաջարկած թեմաներին անդրադառնալ,- անսպասելիորեն ոգևորվեց Հրաչը:

-Ախր այնտեղ՝ Սփյուռքում, հայերն ամեն կերպ ուզում են, որ աշխարհը ճանաչի ցեղասպանությունը, մանավանդ որ շուտով Եղեռնի 100-րդ տարելիցը պիտի նշենք: Պետք է նաև ցույց տանք մեր թշնամիների դաժան ու արյունարբու վարքագիծը Արցախյան պատերազմի հերոսներին օտարներին ներկայացնելով: Մինչև ե՞րբ պիտի աշխարհը խուլ ու համր լինի մեր ցավի հանդեպ:

-Անպայման կանենք այդպիսի ֆիլմեր: Մանավանդ որ կինոնկարներն ավելի ազդեցիկ են մարդկանց համար, քան գրքերն ու բազմապիսի ավբոմները,- Հրաչը մի քանի փայտ ավելացրեց կրակին:

Սևակը նորից լցրեց բաժակները: Հնչեց նրա ձեռքի հեռախոսի զանգը: Ընկերներն արդեն հասնում էին գյուղին:

-Արագացրե՛ք: Հրաչի հետ սպասում ենք,- աշխույժ տոնով պատասխանեց Սևակը և իր բաժակը մոտեցրեց Հրաչին:- Այս բաժակով հարգենք Շուշանի պայծառ հիշատակը: Իսկ քեզ կամք և ողջախոհություն են ցանկանում:

Հրաչն իսկույն ևեթ լրջացավ և գլուխը դրական շարժելով՝ դատարկեց բաժակը:

-Որպեսզի ժամանակ չկորցնենք, գնանք միսը շամփուրներին շարելու: Բուխարիկի մի անկյունում խորովածի համար կրակը շատ լավն է,- ոտքի կանգնեց Սևակը:

Հրաչը հետևեց նրան: Շուտով ընկերները նույնպես ժամանեցին և ընդհանուր աշխուժություն, ծափ ու ծիծաղ տարածվեց ամենուր: Նրանց միացան Վիգենը, Հովիկը, ևս երկու երիտասարդ կանայք՝ իրենց կուրսից: Հրաչը զանգեց ծնողներին և հայտնեց, որ գիշերելու է Սևակի մոտ: Նա համոզված էր, որ ընկերներով շատ կհարբեն, իսկ այդ վիճակով նա մեքենա վարել չէր ուզում և չի կարելի:

Մարդու հետապնդման գաղափարն անմիտ քայլ է: Հավանաբար, նա է տառապում նման գառանցանքով, ով ցանկանում է դիմացինին սարսափի անկյուն հասցնել:

Այն դեպքից հետո, երբ Աստղիկը Անդրանիկի հետ կանգառում հանդիպեց Ջավենին, վերջինս սկսել էր նրան հետապնդել, անհանգստացնել անհիմն հարցերով: Հաճախ զանգում էր նրան, SMS հաղորդագրություններ ուղարկում: Աստղիկն ինչքան ցանկանում էր նրան բացատրել, որ անհնար է Ջավենի հետ հարաբերությունը, բայց, ցավոք, բոլոր տեսակի բացատրությունները կարծես անարդյունք էին: Ջավենը համառորեն զգալով, որ աղջիկն իր ձեռքի հեռախոսը դիտմամբ անջատում էր, սկսեց զանգել նրանց տան հեռախոսահամարին: Եթե այնպես էր պատահում, որ Անդրանիկն Աստղիկին դասերից հետո չէր ուղեկցում, նա ստիպված էր դասերից հետո գնալ գրադարան, ընկերուհու մոտ, որպեսզի խուսափեր Ջավենին իրենց տան մոտ հանդիպելուց: Բայց, միևնույն էր, ոչինչ չէր օգնում: Ջավենը միշտ դարան մտած սպասում էր նրան: Այդ ամենն Աստղիկին խիստ նյարդայնացնում էր:

Այնպես պատահեց, որ մի անգամ երեկոյան Աստղիկի մայրն իրեն վատ զգաց: Ստամոքսի հատվածում ցավեր ուներ և աղջկան խնդրեց դեղատուն գնալ՝ ցավազրկող որևէ դեղ գնելու: Սակայն աղջիկը երկիմաստ հայացքով նայեց մորը.

-Գուցե՞ տաք թեյ պատրաստեն, մայրիկ: Անանուխով թեյը հանգստացնում է:

Հայրը, որ այդ պահին թերթ էր ընթերցում, նայեց աղջկան.

-Ինչ-որ բա՞ն է պատահել: Կարծես վախեցած դեմք ընդունեցիր: Թե՞ ինձ թվաց:

Աստղիկը հասկացավ, որ այլևս ոչինչ պետք չէր թաքցնել հորից, որն աշխատում էր ոստիկանությունում: Նա պատմեց Ջավենի հետ կապված պատմությունը և խոստովանեց, որ խուսափում է նրա հետ հանդիպելուց, քանի որ անվերջ հետապնդում էր իրեն: Նաև չմոռացավ հորը տեղեկացնել Անդրանիկի հետ կապված ծեծկռտուքի փաստը՝ կազմակերպված Ջավենի կողմից:

-Եվ այսքան ժամանակ ոչինչ չե՞ս ասել ինձ: Այդ դեպքում ո՞վ պետք է օգնի քեզ:

- Մտածում էի, որ շուտով այս մղձավանջը կավարտվի:

-Մի՛ անհանգստացիր: Եթե նա փորձի՝ զանգել քեզ, հանգիստ ժամադրվիր նրա հետ: Հետո ես կհմանամ՝ ինչ անել: Իսկ հիմա մորդ համար անանուխով թեյ պատրաստիր: Եթե ցավը չմեղմանա, ինքս կգնամ դեղատուն:

Աստղիկը լուռ հետևեց հոր հրահանգին: Նա մոր համար թեյ պատրաստեց, հետո մտախոհ նստելով բազմոցին՝ միացրեց հեռուստացույցը: Բարեբախտաբար, այդ ընթացքում Ջավենը նորից զանգեց Աստղիկին: Հայրը լարված հայացքով նայեց աղջկան և գլխով դրական ազդանշան տվեց, նաև ձեռքը բռնեց արած՝ ցույց տվեց մատներից մեկը: Աստղիկը գլխի ընկավ, որ մեկ ժամից հետո համաձայնվի հանդիպել Ջավենին իրենց տան մոտակայքում: Հայրն իսկույն ևեթ զանգեց ոստիկանական բաժանմունք և խնդրեց աշխատակիցներից երկու մարդ ուղարկել իրենց տան մոտ:

-Հայրիկ, Ջավենի հայրն էլ աշխատում է Մաշտոցի շրջանի ոստիկանական բաժանմունքում,- հորը դիմեց Աստղիկը:

-Ավելի վատ նրա համար: Թե՞ կարծում է, որ ոստիկանների զավակներն ինչ ուզեն, կարող են անել: Ընդհակառակը, նրանք իրենց ավելի պարկեշտ ու զուսպ պիտի դրսևորեն ցանկացած հարցում:

-Նրան թվում է, թե ինքը Ալեն Դելոնն է, և աղջիկները պիտի հալումաշ լինեն իրեն տեսնելիս:

-Ոչինչ: Այսօր նրա հարցը կլուծվի և այլևս ոչ մի տագնապի զգացում չես ունենա:

-Բայց, հայրիկ, Ջավենը քեզ դեմքով ճանաչում է: Եթե դու էլ ինձ հետ գաս, նա կփախչի,- վախեցած ասաց Աստղիկը:

-Այդքան միամիտ մի՛ եղիր: Ես տանը կմնամ: Իմ աշխատակիցներին խնդրեցի քաղաքացիական հագուստով գալ: Նրանք քեզ գիտեն: Երբ հանդիպես այդ մեծամիտ երիտասարդին, մի քիչ փորձիր զրուցել, կրկին լսել նրա հիմար բացատրությունները: Այդ ընթացքում էլ մեր աշխատակիցները կմոտենան ձեզ, նրան կբռնեն և բաժանմունք կտանեն:

Քիչ անց ամեն բան կատարվեց Աստղիկի հոր հրահանգով: Ջավենին բռնեցին և տարան: Աստղիկը միայն այդ ժամանակ գնաց դեղատուն և մոր համար դեղ գնելով՝ տուն վերադարձավ: Հայրը նույնպես իր մեքենայով գնաց աշխատանքի վայր: Տեսնելով աղջկան օրերով վախի մեջ պահող երիտասարդին՝ նա գլուխը բացասական օրորեց: «Լա՛վ էլ ճաշակ ունես: Գոնե քեզ հարմար մեկին ընտրեիր», - մտքում ասաց նա: Իսկ ոստիկանական բաժանմունքում Ջավենից բացատրություն պահանջեցին: Աստղիկի հայրն ուշի- ուշով հետևում էր նրա անմիտ պատասխաններին:

-Դեռ պարզվում է, որ նա հարբած տղաների է վարձել, որ հարձակվեն աղջկաս ընկերոջ վրա: Բարեբախտաբար, նա սպորտով է զբաղվում և կարողացել էր պաշտպանվել՝ հակահարված տալով երկուսին: Ավելին. նրանցից մեկը դանակով ուզում էր խփել, բայց չստացվեց: Դրան ի՞նչ կասես, երիտասարդ,- խիստ տոնով հարցրեց Աստղիկի հայրը:

-Ես նրանց դանակի մասին ոչինչ չէի ասել,- պատասխանեց Ջավենը:

- Բայց դու մեքենայի կողքին կանգնած հրահանգ էիր տալիս. թե ոնց հաշվեհարդար տեսնեն Անդրանիկի հետ: Ի՞նչ իրավունքով, ո՞վ էր քեզ թույլ տվել: Բռնությամբ էիր ուզում նպատակիդ հասնել: Թե՞ գերազնահատելով քեզ՝ որոշեցիր պնդաձակատություն անել: Այնինչ եթե դու խելամիտ երիտասարդ լինեիր, կհասկանայիր, նախ և առաջ, որ նման մեթոդով ոչնչի չես հասնի: Ասենք, քո դեմքից էլ երևում է, որ զգացմունքից հեռու մարդ ես:

-Եվ մինչև ե՞րբ էիր ուզում հետապնդել և վախեցնել Աստղիկին: Ախր այնքան հիմարն ես, որ չես մտածել, որ նրա հայրը ոստիկան է,- ասաց ոստիկանության աշխատակիցներից մեկը:

-Գիտեի: Դրա համար էլ ուզում էի, որ Աստղիկը համաձայնվեր ինձ հետ:

-Ինչի՞դ համաձայնվեր: Տեսքիցդ ու խոսքերիցդ երևում է, որ քեզ հետ մարդավարի խոսելը և բացատրելն ավելորդ են:

-Ես ուզում եմ կապվել հորս հետ, -հուսահատ տոնով ասաց Ջավենը:

-Անպայման կկապվես: Միայն բացատրություն գրի՛ր և ստորագրի՛ր, որ այլևս աղջկաս չես անհանգստացնի: Այստեղ կմնաս մինչև հայրդ կժամանի: Չենք կասկածում, որ նա էլ քեզ ամոթանք կտա: Իսկ եթե ուստիկանության բաժանմունք կանչենք այն տղաներին, ում վարձել ես ծեծկռտուք հրահրելու նպատակով, որպես խուլիգանական արարք՝ երեքիդ էլ կդատեն:

Ջավենը սիրթնած մկան պես սկզբեց տեղում: Նա մտածեց, որ Անդրանիկը եթե բողոք ներկայացնի, իսկապես իրենց կդատեն օրենքով: Նա վհատված վերցնելով գրիչը՝ ստորագրեց տրված բացատրություն պարունակող թղթի տակ:

Հրաչն արթնացավ ծանր մտորումներով բեռնված: Գիշերը երազում դարձյալ Շուշանն էր հայտնվել: Առաջվա պես նա իր նրբագեղ մարմինն օրորելով՝ կարծես դանդաղ մոտեցավ իրեն և ինչ-որ բան շնջաց ու անհետացավ: Առավոտյան ինչքան էլ փորձեց հիշել նրա խոսքերը, ոչինչ չստացվեց: Գուցե ցանկանում էր իր հայտնությամբ որևէ բան զգուշացնել, որ ինքը հեռու մնա վտանգից: Բայց ի՞նչ վտանգից... Կնոջ կարոտի սարսուռից մարմինը սառը քրտինքով պատեց: Նա նորից դառնությամբ մտածեց, թե ինչու Շուշանը պիտի բռնության զոհ դառնար. «Դաժանությունը կարծես դարձել է կյանքի մշտական ուղեկիցը: Դաժան է աշխարհը, դաժան է բնությունը, որ ժամանակ առ ժամանակ մարդկանց սպառնում է ջրհեղեղներով, ցունամիներով, երկրաշարժերով, հրաբուխներով: Հավանաբար մարդիկ էլ ի ծնե դաժան են», - մտքում հաստատապես եզրակացրեց Հրաչը՝ հիշելով իր հոգեթերապևտի պատմածն այն փոքրիկ տղայի մասին, ով կտրել էր կատվի մատները և ուրախանում էր: Նա շարունակեց մտածել, որ երեխաները, անշուշտ, այդ պահին չեն հասկանում, որ իրենք դաժան են: Այդ հասկացությունը երևան է գալիս ավելի ուշ՝ դաստիարակության հետ: Միայն հոգեպես զարգանալով է մարդն ավելի մարդանում, և սովորում է ղեկավարել իր ցանկությունները, զգացմունքները, փորձում է իրարից զանազանել բարին ու չարը, փորձում է ճնշել իր մեջ դաժանության ձգտումը... Ո՛չ, մարդն ամենից առաջ պետք է ունենա խիղճ և պատիվ: Եթե դրանք չլինեին, դժվար է գուշակել, թե ինչ կլինի մարդկության հետ: Առանց բարոյական այդ նորմերի մարդկային ցեղը վաղուց կկորչեր: Չէ՞ որ խիղճը մարդու ներքին ձայնն է, որ ղեկավարում է մեր մտքերը, արարքները, գործերը», - ինքն իր «ես»-ի հետ շարունակեց կռիվ տալ Հրաչը: Այնուհետև հիշեց վերջերս ծանոթներից մեկի պատմածն այն մասին, թե ինչպես իր բարեկամը, հիասթափվելով ընտանիքից, շրջապատից, որսորդական հրացանը ձեռքին որոշել է ապրել քաղաքակրթությունից, հասարակությունից հեռու՝ բնության ծոցում այնքան, ինչքան Աստված իրեն կյանք կպարգևի: Դժվար է հավատալ, որ մարդը գիտակցաբար ուզում է ապրել Ռոբինզոն Կրուզոյի կյանքով: Ուրեմն՝ նրա շրջապատում բարոյականության ամայություն է: Ինքն այդ առումով դժգոհելու առիթ չունի: Ընկերները մեջքին կանգնած են՝ պատրաստ օգնության ձեռք մեկնելու: Սակայն միևնույն ժամանակ մենություն էր զգում, քանի որ զրկվել էր Շուշանի ներկայությունից, իրենց մտերմիկ երեկոներից... Պակասել է սիրո թթվածինը:

Հրաչին պողպատե կարծրությամբ հուշերից ու մտքերից հանեց Անդրանիկը:

-Եթե արթնացել ես, միասին սուրճ խմենք,- կիսաբաց դռնից գլուխը հանելով՝ առաջարկեց եղբայրը:

-Հաճույքով: Հիմա կհագնվեմ:

Արձագանքելով եղբորը՝ նա ուզեց շտապ հագնվել և բացելով զգեստապահարանը, այնտեղից հանեց Շուշանի նվիրած կապույտ գույնից վերնաշապիկը, որի վրա նա գեղեցիկ ասեղնագործել էր «Հ» և «Շ» տառեր: Դրանք իրենց անունների սկզբնատառերն էին, որ նշանակում էր ցմահ միասին կլինեն: Առանց վարանելու հագավ այն և միանգամից ջերմություն զգաց: Սիրելի՛ կնոջ ջերմությունը:

Երբ մտավ լոգարան, զանգեց ընկերը՝ Սևակը: Նա ցանկություն հայտնեց միասին այցելել Շուշանի գերեզմանին: Պայմանավորվեցին հանդիպել: Եվ առավոտից ձգվող Շուշանի մասին հուշերն ավելի բորբոքվեցին ու տարածվեցին: Ընկերը հավանեց գերեզմանաքարի իր ընտրությունը: Այն ճաշակով էր սարքված:

Այնտեղից դուրս գալով՝ Սևակն այս անգամ խնդրեց Հրաչին իրեն Շենգավիթ թաղամասի ընտանեկան հանրակացարանը տանել: Ուզում էր հանդիպել իր մանկության ընկերներից մեկին, որին էլ նվեր էր բերել Ամերիկայից, ինչպես իր կուրսեցիների ու բարեկամների համար: Երբ տեղ հասան, Սևակն առաջարկեց միասին մտնել նրա մոտ: Բարձրացան երրորդ հարկ և այն է՝ մոտեցան նրա ընկերոջ սենյակին, երբ գորգոռոցներ լսվեցին ներսից: Սևակն զգաց, որ ընկերոջ՝ Մերուժանի ձայնն էր: Նա կռվում էր ինչ-որ մեկի հետ, որն իրավունք չունեի լոգանք ընդունելու իր մոտ, քանի որ զգվում է նրանից, որ ամեն օր անիծում է, որպեսզի վերջինս դժոխքի դուռը հասնի: «Ո՞վ էր այդ մեկը», - երկու ընկերները շվարած հայացքով իրար նայեցին և կանգ առան դռան առջև: Սևակը դուռը ծեծեց բռունցքով, որ աղմուկի միջից լսվեր թակոցը:

-Տեսնու՞մ ես: Երևի քո բոմժ ընկերներն են այստեղ հասել,- ներսից լսվեց Մերուժանի կոպիտ ձայնը:

Սակայն երբ նա դուռը բացեց և տեսավ վաղեմի ընկերոջը՝ միանգամից ձայնի տոնն իջավ ու մի տեսակ անհարմար վիճակով նայեց երկուսին: Սևակի հետ նրանք ողջագուրվեցին: Հրաչը տհաճ զգացողությամբ հետևեց ընկերոջը: Սևակը սենյակում հանդիպեց նրա կրտսեր եղբորը՝ Հայկին:

-Եղբո՞րդ հետ էիր այդպես կռվում: Ձայնդ միջանցքի ծայրից էր լսվում,- ու հարցական հայացքն ուղղեց Մերուժանին:

-Ի՞նչ անեմ: Նա հարբեցող է, ոչնչություն:

Սևակը խորապես հիասթափվեց եղբոր հանդեպ ունեցած նրա վերաբերմունքից: Նա մտածեց, որ անգամ հանցագործ հարազատի նկատմամբ նա այդօրինակ արտահայտվելու իրավունք չունեի: Մերուժանը Սևակից տարիքով էր տասը տարով, իսկ նրա կրտսեր եղբայրն իրենց տարիքին էր: Վերջինս բարեկեղծ ներս եկողներին՝ դառնացած, գլուխը խոնարհելով՝ ուզեց հեռանալ, բայց հետո շրջվելով դռան մոտ՝ դիմեց Մերուժանին:

-Հերի՞ք է ինձ ուրիշների ներկայությամբ ստորացնես: Դու բոլորովին մարդ չես:

Մինչև հոգու խորքը վիրավորված եղբայրն իր ետևից դուռը շրխկոցով փակեց:

-Ուշադրություն մի՛ դարձրեք: Դուք նստե՛ք, հիմա մի-մի բաժակ որևէ բան կխմենք,- արհեստական ժպիտ խաղաց Մերուժանի դեմքին:

-Ո՛չ: Շնորհակալ ենք: Մենք գործեր ունենք,- քաղաքավարությամբ մերժեց Սևակը՝ ընկերոջը մեկնելով մի փաթեթ:

-Սա ի՞նձ համար է: Ինչու՞ ես նեղություն քաշել, -վերցնելով փաթեթը՝ հարցրեց նա:

-Ընկերոջ մասին մտածելը և նրան ի սրտե նվեր տալն ամենևին նեղություն չէ: Բայց դու շատ վատ վարվեցիր եղբորդ հետ: Քեզնից չէի սպասում: Կարծես իմ ճանաչած Մերուժանը չլինես:

-Իրերն իրենց անուններով պիտի կոչել: Նա բոմժ է, - չարությամբ պատասխանեց նա:

-Եղբայրդ իր չէ, այլ՝ մարդ մեզ նման: Հետո էլ դու նրանից մեծ ես տասը տարով: Եթե նեղության մեջ է, անպայման օգնության ձեռք պիտի մեկնես: Ականջներիս չեմ հավատում, որ մերժեցիր նրան քեզ մոտ լոգանք ընդունել,- իր գայրույթը չզսպեց Սևակը:

-Ես նրան ատում եմ: Ուր ուզում է, թո՛ղ թափառի:

-Եվ դու հանգիստ խղճով կարողանում ես քնե՞լ: Մարդիկ օտարներին են օգնության ձեռք մեկնում, իսկ դու հարազատ եղբորդ ոչ միայն բոմժ ես համարում, այլև քշում ես քո մոտից: Եթե ծնողներդ ողջ լինեին, ի՞նչ կմտածեին քո մասին,- շարունակեց բորբոքվել Սևակը:

-Է՛հ,- ձեռքը թափ տվեց Մերուժանը:- Գուցե թեման փոխե՞նք: Թե չէ ներս մտնելուն պես միայն նրանից ենք խոսում:

-Մերուժ, ընկերս: Ախր սիրտս ցավում է ձեզ համար: Չէ՞ որ մենք միասին ենք մի բակում խաղացել, մեծացել: Ես հիմա ասես ուրիշի դուռ եմ ծեծել և ուրիշ մեկի հետ եմ զրուցում: Դու այդքան անսիրտ չէիր: Գոնե ասա՛ ինձ, թե եղբայրդ ինչու՞ է այդ վիճակում հայտնվել:

Ընկերներով նստեցին սենյակում դրված միակ բազմոցին:

-Հինգ տարի առաջ կինը նրան վռնդել է տնից,- եղբոր հանդեպ ունեցած արհամարհանքով պատասխանեց Մերուժանը:

-Ավելի ճիշտ, եղբայրդ բաժանվել է կնոջից՝ նրան թողնելով իր բնակարանը,- ընկերոջն ուղղեց Սևակը:- Երևի զավակներ ունի:

-Այո: Երկու երեխա ունի՝ տղա և աղջիկ: Հիմա նա մնալու տեղ չունի: Եթե չի խմում, թողնում եմ, որ մեր հարկում գիշերի:

-Այսինքն՝ միջանցքու՞մ, թե՞...

-Ես մի փոքր սենյակ էլ ունեմ, որի բանալին ինձ մոտ է: Բայց նա այնտեղ կարող է իր ընկերուհու հետ գալ, կամ էլ իր հետ որևէ բոմժի քարշ տալ: Այդ պատճառով էլ հաճախ բանալին վերցնում եմ նրա ձեռքից:

-Այնպես ես քեզ պահում, կարծես նրա հոգեառն ես: Եղբայրդ հո կալանավայրում չէ՞: Նա իրավու՞նք չունի որևէ մեկի հետ զրուցելու կամ էլ սիրահետելու: Դու հո Լուսնի վրա չես ապրում: Այս ի՞նչ անմարդկային կանոններ ես ստեղծել հարազատիդ համար: Մանավանդ որ ինքդ էլ չես ամուսնացել ու միայնակ ես ապրում:

-Հաճույքով կսպանեի նրան:

-Չէ՛, Մերուժան, մենք պետք է գնանք,- ոտքի կանգնեց Սևակը: -Քեզ հետ զրույցը չի ստացվում: Ափսոսում եմ, որ դու ոչ միայն մինչև հիմա ընտանիք չես կազմել, այլև հալածում ես եղբորդ: Այդ ամենը կողքից դիտողի համար չափազանց ծանր է:

Հրաչը հետևեց նրան՝ կանգնելով դռան մոտ:

Մերուժանը տխուր ու դժգոհ հայացքով նայեց նրանց ու չառարկեց: Ընդհակառակը, ներքուստ խիստ զայրացած էր, որ Ամերիկայից ժամանած ընկերը ոչ թե իրեն էր պաշտպանում, այլ՝ եղբորը:

Ընկերները դրսում հանդիպեցին մուտքի մոտ կանգնած Մերուժանի եղբորը: Վերջինս նրանցից ծխախոտ խնդրեց: Սևակը նրան մեկնելով իր ծխախոտատուփը՝ հարցրեց.

-Հայկ, դու ինձ հիշու՞մ ես:

-Իհարկե: Մենք նույնիսկ հասակակիցներ ենք, թեև դու եղբորս հետ էիր ժամանակին ընկերություն արել:

-Եղբորդ հետ ունեցած այս հարաբերությունն ուղղակի սոսկալի է: Նրա հետ էլ կարգին չշփվեցի ձեր վեճի պատճառով: Մերուժանն ինձնից նեղացավ, որ քեզ պաշտպանեցի: Նա պատմեց, որ քեզ հաճախ դուրս է շարտում իր սենյակից:

-Այդ սենյակը դատարկ է: Այնտեղ հնամաշ մի բազմոց կար: Դա էլ է հանել և ուզում է, որ ես ցեմենտե հատակին պառկեմ: Մարդիկ նույնիսկ իրենց շան հետ այդպես չեն վարվում: Մերուժանը չափազանց դաժան է, անգուր: Ես ամաչում եմ, որ նման եղբայր ունեմ,- գլանակը վառելով՝ ասաց Հայկը:

-Իսկ որտե՞ղ ես գիշերում,- հարցրեց Սևակը:

-Հաճախ մնացել եմ դրսում: Քնել եմ քաղաքային այգու նստարաններից մեկին:

-Բայց հիմա դեկտեմբեր ամիսն է: Այդպես կարող ես ցրտահարվել:

-Ո՛չ: Հիմա ընկերուհու կամ ծանոթներից որևէ մեկի տանն եմ քնում:

-Կուզե՞ս, իմ ամառանոցի բանալիները քեզ տամ: Սակայն ասեմ, որ այն գտնվում է Ջորադբյուրում: Այնտեղ կարող ես մնալ,- սրտանց առաջարկեց Սևակը:

-Հեռու է Երևանից: Ամեն անգամ նյութական միջոցներս չի հերիքի այստեղ հասնելու: Շնորհակալ եմ:

-Իսկ գումար ինչպե՞ս ես հայթայթում:

-Պատահական գործերի դիմաց վարձատրվում են:

Սևակը գրպանից հանեց հարյուր դոլարանոց թղթադրամը և մեկնեց Հայկին:

-Ո՛չ: Պետք չէ: Ձեռքիս դեռ փող կա: Պարզապես ծխախոտս էր վերջացել: Հետո էլ մտածեցի եղբորս հաղիպել, որ լուզանք ընդունեմ: Այն էլ, ինչպես տեսաք, վճարեց ինձ, - խեղճացած տոնով փորձեց հրաժարվել Հայկը:

-Կնեղանամ քեզնից, եթե չվերցնես: Հաշվիր, որ այն իմ կողմից նախաամանորյա նվերն է քեզ,- համառորեն պնդեց Սևակը:- Մենք մի բակում ենք մեծացել, և դու ինձ համար նույնպես հարազատ մարդ ես: Ընկերոջս՝ Հրաչին հարցրու: Կներես, որ նրան միանգամից չճանոթացրի քեզ հետ: Ախր այնպես մենք երկուսով հուզվեցինք, որ... Մի խոսքով, եթե խնդիրներ ունենաս, Հրաչին դիմիր, նա քեզ կօգնի,- և դառնալով Հրաչին՝ հարցական նայեց նրան:

-Անպայման: Վերցրու՛ իմ այցեքարտը: Այստեղ իմ տվյալներն են:

Հայկը հանգիստ վերցրեց թե՛ փողը, թե՛ այցեքարտը, ու դրանք դնելով գրպանը՝ թեթևացած շունչ քաշեց: Նրա համար դժվար էր մտածել, որ օտար մարդիկ պատրաստ են անշահախնդիր օգնել իրեն, այնինչ եղբայրն իրեն ամեն կերպ հալածում է: Այնուհետև Հայկը Սևակին մեկնեց ծխախոտատուփը:

-Ո՛չ, քեզ մոտ պահիր: Ի՞նչ ասեմ, եղիր համբերատար, փորձիր ինքդ մի ելք գտնել, բայց եղբորդ մոտ այլևս մի՛ վերադարձիր, - Սևակը ընկերոջ հետ սեղմելով նրա ձեռքը՝ ուզեց հեռանալ, բայց հետո հանկարծ շրջվելով՝ դիմեց Հայկին.

-Չե՞ս հրաժարվի, եթե քեզ ճաշի հրավիրենք:

-Ո՛չ: Սիրով կմիանամ ձեզ: Մի քիչ էլ հնարավորություն կստեղծվի վայելելու ձեր երկուսի ներկայությունը:

-Ուրեմն գնացինք,- ասաց Սևակը՝ քայլերն ուղղելով դեպի մեքենայի կողմը:

Հրաչն արդեն միացրել էր մեքենայի շարժիչը: Նա դեռ ծայրաստիճան շճմած էր իր տեսածից: Նրա ականջներում շարունակում էին հնչել Սևակի ընկերոջ՝ Մերուժանի խոսքերը. «Ես եղբորս ատում եմ: Կուզենայի սպանել նրան: Թող նա դժոխքի դուռը հասնի»: Իսկական պառավական անեծք՝ քառասունհինգամյա տղամարդու շրթերից հնչած: Մինչև ու՞ր ենք հասել: Ինչու՞ են մեր օրերում հարազատները պարսավում մեկմեկու՝ նույնիսկ հասցնելով մահվան դուռը: Հիշեց հորեղբորը, նրա ընտանիքի անդամներին, մորաքրոջը, Մանեի և նրա քրոջ թշնամական հարաբերությունները: Եթե հարազատներն են միմյանց հետ ոխերիմ թշնամի դարձել, ինչպե՞ս պիտի նրանք պայքարեն օտարների դեմ...»:

Ճանապարհին Հայկի հետ ունեցած զրույցից պարզվեց, որ նա մասնագիտությամբ արվեստաբան է, սակայն այդ թեքումով քիչ է աշխատել: Ավելի վաղ ամուսնանալով՝ նա ստիպված էր ընտանիքը պահելու համար տարբեր աշխատանքներ կատարել: Երկու ընկերները ուրախ էին, որ Հայկն էլ իրենց ոլորտից էր: Չէ՞ որ իրականում արվեստով ու գիտությամբ զբաղվող մարդկանց աշխարհայացքը տարբերվում է սովորական մասնագիտություններ ունեցողներից:

-Ղու քո հեռախոսահամարն էլ ինձ տու՛ր, որ պետք եղած դեպքում զանգեմ քեզ,- ասաց Հրաչը:- Կարծում եմ՝ ձեռքի հեռախոս կունենաս:

-Իհարկե, ունեմ: Հիմա մանկապարտեզի երեխան էլ հեռախոս ունի: Ահա, վերցրու՛,- Հայկը գրպանի բլոկնոտից հանելով թղթի մի կտոր՝ գրեց իր համարը՝ մեկնելով այն Հրաչին:

-Եթե մոնտաժման աշխատանք իմանայիր, ավելի շուտ քեզ կօգնեի: Իսկ լուսավորող կարո՞ղ ես աշխատել:

-Պատահել է՝ թատրոնում մի քանի ամիս որպես լուսավորող եմ աշխատել:

-Այսինքն՝ փորձ ունես: Նկարահանման մի քանի պատվերներ ունենք, բայց դա կլինի Ծննդյան տոներից հետո: Ես քեզ կզանգեմ, որովհետև մեր աշխատակիցներից մեկն ուզում է տեղափոխվել Մոսկվա Ամանորից հետո:

Հրաչի առաջարկից Հայկը հոգեպես փոքր-ինչ խաղաղվեց: Նույնը չէիր ասի Սևակի մասին: Նա մտածում էր Մերուժանի մասին: Իր տեսածին ոչ մի կերպ չէր համակերպվում:

Շուտով նրանք հասան իրենց նախընտրած ռեստորաններից մեկը: Եվ մինչ մատուցողը կբերեր պատվերը, Հրաչը դիմեց ընկերոջը.

-Սևակ, հերիք է քեզ տանջես: Ամբողջ ճանապարհին համարյա չես խոսել: Մի՞թե չգիտես, որ տարիների ընթացքում մարդիկ փոխվում են: Դու մանկության ու պատանեկության հովերով ես նրան ճանաչում: Սակայն ինչպես տեսնում ես, ժամանակի ընթացքում ավելի ցայտուն է ընդգծվում մարդու վարքագիծը:

-Իսկ ինչու՞ մենք չենք փոխվել: Թե՞ կյանքում մեզ համար ամեն բան հեշտ է ստացվել: Չէ՛, եղբայրս, պարզապես սուր իրավիճակներում է մարդը ցույց տալիս իր իսկական դեմքը: Այդ նշանակում է, որ Մերուժանին չեմ ճանաչել: Հասկանում ես, ես այսօր կորցրի նրան,- Սևակն այնուհետև հուզված շարունակեց:- Մարդիկ բարեգործական ընկերություններ են ստեղծում՝ օգնելու անօգնականներին, աղքատներին, գործազուրկներին, մանավանդ որ ամբողջ աշխարհում տնտեսական խոր ճգնաժամ է և ամեն տեղ էլ ժողովրդի սոցիալական վիճակը վատթարացել է: Այնինչ Մերուժանի արածն իմ ուղեղում չի տեղավորվում:

-Ես էլ վերջերս մի անծանոթ երիտասարդ կնոջ իմ բնակարանի բանալիներն անվճար տվեցի՝ ժամանակավորապես այնտեղ բնակվելու, մինչև որ նա իր համար աշխատանք ու հարմար գնով վարձու բնակարան կգտնի, - ընկերոջ հետ անկեղծացավ Հրաչը:

-Չե՞ս վախենում, որ բնակարանդ կթալանի: Չէ՞ որ ի տարբերություն Հայկի, որին գիտեմ, դու բոլորովին անծանոթի ես այն տրամադրել,- զարմացած հարցրեց Սևակը:

-Բայց ես վերցրել եմ նրա անձնագիրը: Կարծում եմ նման բան չի անի,- երկինաստ հայացքով Հրաչը նայեց ընկերոջը: Ի դեպ, նա այսօր ինձ հրավիրել է իր մոտ: Հավանաբար ուզում է բանալին ինձ հանձնել:

-Իսկ նա հմայի՞չ է արտաքինով:

-Ինչու՞ ես հարցնում: Ասենք, թե գրավիչ է:

-Ուրեմն՝ զգուշացի՛ր գայթակղվելուց:

-Հնարավոր չէ: Համենայն դեպս հիմա... Ես Շուշանին չեմ մոռացել: Ինձ ժամանակ է պետք:

-Դու նույնպե՞ս բաժանվել ես կնոջիցդ,- նրանց զրույցին խառնվեց Հայկը:

-Ո՛չ: Նա մահացել է դժբախտ պատահարից,- պատասխանեց Հրաչը:

-Ցավակցում եմ: Կներե՛ս, որ հարցրի:

-Սակայն նա կօգտագործի քո մեներթյունը իրենով հրապուրվելու համար,- իր միտքը շարունակեց Սևակը:

-Չեմ կարծում:

-Թո՛ղ քո ասածը լինի: Գուցե ես կանանց ավելի լավ եմ ճանաչում,- ամբողջ օրվա ընթացքում առաջին անգամ ժպտաց Սևակը:

Մատուցողը քերեց պատվերը:

Եվ նրանք երեքով ախորժակով ճաշեցին, մերթընդմերթ անդրադառնալով իրենց հուզող հարցերին:

Սևակից և Հայկից բաժանվելուց հետո՝ օրվա վերջում Հրաչը գնաց իր բնակարանը: Երբ զանգեց դռան կոճակը, Տաթևն իսկույն ևեթ պայծառ ժպիտով բացեց այն: Նրա մազերը գեղեցիկ հարդարված էին: Հազել էր սև, փայլուն, կարճ շրջազգեստ և բարձրակրունկներով էր:

-Ես հարմա՞ր պահի չեկա,- Հրաչն ապշած նայեց նրա տեսքին: Չէր պատկերացնում, որ նա այդքան չքնաղ է:

-Ի՞նչ ես ասում: Ես քեզ էի սպասում:

-Ի՞նձ: Մի՞շտ ես այդ տեսքով ընդունում հյուրերին:

-Ո՛չ: Ուղղակի քեզ հետ կայանալիք ընթրիքին առանձնակի ջանասիրությամբ եմ նախապատրաստվել: Ներս արի:

-Շնորհակալ եմ: Ես ընկերոջս հետ ճաշել եմ,- ասաց Հրաչը, և նա անմիջապես հիշեց ընկերոջ խոսքերը՝ գայթակղությունից զգուշանալու մասին: Ինչ խոսք, որ Տաթևը փորձում էր հրապուրել իրեն:

Ներս մտնելով հյուրասենյակ՝ նա տեսավ, որ սեղանն արդեն գեղեցիկ զարդարված էր տարբեր տեսակի ուտեստներով, իսկ մեջտեղում կարմիր գինու շիշն էր: Տաթևն ամեն ինչի մասին մանրամասն հոգացել էր:

-Որևէ առիթ կա այսպես ուրախանալու,- նստելով բազմոցին՝ հարցրեց Հրաչը:

-Այո: Ես ընդունվել եմ աշխատանքի դարձյալ խանութներից մեկում:

-Շնորհավորում եմ: Իսկ հարմար բնակարան գտա՞ր:

-Կգտնեմ: Այդ ուղղությամբ նույնպես մտածում եմ: Դե, ինչ, որ խնդրեմ՝ կբացե՞ս շիշը,- Տաթևն այնպիսի մեղմ հայացքով նայեց, որ Հրաչն անհարմար զգաց նրա ցանկությունը մերժելու:

Բացելով գինին՝ Հրաչը լցրեց երկուսի բաժակները և շնորհավորելով նրան՝ մի քիչ խմեց: Նաև նրա աչքն ընկավ տան իրերին: Ամեն բան իրենց տեղում էր, միայն իր կնոջ լուսանկարները չկային: Բնական էր, որ երիտասարդ կինը ժամանակավորապես այդտեղ ապրելով, չէր ուզում անվերջ տեսնել կյանքին հրաժեշտ տված տանտիրուհու դեմքը: Սակայն Հրաչն զգաց, որ այդ բնակարանն իր համար առաջվա հարազատությունը և ջերմությունը չուներ: Այդտեղ հիմա ամեն ինչ օտար էր դարձել: Նույնիսկ ինքն իր հետ էր օտարացել ու մեկուսացել:

-Դու դարձյալ ամեն օր հիշու՞մ ես կնոջդ,- հարցրեց Տաթևը, որը նկատեց, թե ինչպես իր տանտերը նայելով շուրջը՝ հանկարծ մտածմունքների մեջ ընկավ:

-Այո:

-Խնդրում եմ, մի քիչ օգտվիր սեղանից: Ես քաղցած եմ և քեզ էի սպասում:

Հրաչն իր ափսեի մեջ մի փոքր աղցան լցրեց՝ գինի ավելացնելով բաժակների մեջ:

-Կուզենայի քո մասին պատմես: Կյանքում երբեք մոտիկից ռեժիսորի հետ չեմ շփվել: Նրանք ինձ համար թելուզ եղել են ամենահետաքրքիր մարդիկ: Լավ կինոնկարներ սիրում եմ դիտել,- իրեն հատուկ անմիջականությամբ խոստովանեց Տաթևը:

-Իսկ ինչպիսի՞ ֆիլմեր ես նախընտրում նայել: Ասեմ, որ լավագույն ֆիլմերը ցուցադրվում են հիմնականում կինոփառատոների ժամանակ:

-Հիմա եթե հոգնած եմ լինում, ցանկացած ֆիլմ նայում եմ: Իհարկե, բացի սարսափազդու կինոնկարներից: Իսկ նախկինում գերադասում էի արկածային բովանդակությամբ ֆիլմերը, նաև հեքիաթները: Մանավանդ հեքիաթներ դիտելիս ամբողջությամբ կլանվում էի, տեղափոխվում բոլորվին այլ աշխարհ: Չէ՞ որ նրանցում հաղթանակում էր միշտ բարին:

-Սակայն նրանց բարությունը ևս վարձատրվում էր: Հիշու՞մ ես, այդ բարի և ուժեղ հերոսներին կամ թագավորության կեսն էին տալիս, կամ արքայադստերը: Իհարկե, այդ հեքիաթները ԽՍՀՄ տարիներին ոչ միայն նկարահանվում էին ուրախ ժամանցի համար, այլև ուսանելի դասեր էին այն մասին, թե ինչպիսին պիտի լինի մարդը:

Այնուհետև Հրաչը Տաթևին հաճույքով բացատրեց, թե ինչպես են առհասարակ կատարվում նկարահանումները, մի քանի հետաքրքիր միջադեպեր պատմեց նկարահանման հրապարակից, պատմեց ռեժիսորի և դերասանների հետ համատեղ աշխատանքի մասին և այլն: Այդ ընթացքում էլ երկուսով դատարկեցին գինու շիշ կեսը: Սևակից բաժանվելուց հետո Տաթևի ներկայությունը և գինու գավաթի շուրջ կինոաշխարհի մասին հաճելի խոհերը հոգեպես ինչ-որ չափով անդորրություն մտցրին առավտից իր մեջ կուտակված տարաբնույթ մտատանջությունների մեջ: Նա Տաթևին շնորհակալություն հայտնելով ընթրիքի համար, տեղից բարձրացավ՝ ցանկանալով՝ հրաժեշտ տալ: Նայեց ձեռքի ժամացույցին: Արդեն երեկոյան ժամը տասն էր:

-Իսկ սու՞րձը,- հարցրեց Տաթևը:

-Երեկոյան ժամին սովորաբար սուրճ չեմ խմում,- համառորեն հրաժարվեց Հրաչը:
-Հրա՛չ ջան, եթե խնդրեմ, այսօր բացառություն չե՞ս անի: Հոգնել եմ միշտ միայնակ սուրճ ըմպելուց:

Հրաչը տեղի տվեց սիրունատես կնոջ հմայքին:

-Դե՛, լավ, պատրաստիր: Թե չէ շատ եմ ուշացել: Տղաս երևի դեռ չի քնել: Նա ինձ է սպասում:
Սակայն Տաթևի հետ սուրճ ըմպելուց թոպեներ անց Հրաչն զգաց, որ սարսափելի քնել էր ուզում: Նա իր ձեռքին վառվող գլանակով նստեց բազկաթռռի անկյունում: Իսկ արդեն կեսգիշերն անց, երբ արթնացավ, տեսավ, որ Տաթևը գիշերանոցով իր կողքին պառկած քնած է: Հրաչն ուշքի գալով՝ գլուխն անիմաստ թափահարեց, հագնվեց և իր մեքենայով հասավ տուն: Շենքի մուտքի մոտ նրան երևաց Շուշանի տեսիլքը, որը շատ թախծոտ աչքերով իրեն էր նայում:

-Դու՞...Որտեղի՞ց հայտնվեցիր,- վախեցած ու մեղսագործ հայացքով հարցրեց Հրաչը:
-Ես քեզ զգուշացրել էի, բայց դու ինձ չվստահեցիր:
-Ի՞նչ էիր զգուշացրել...Սպասիր:

Շուշանն ինչպես հայտնվել էր, այնպես էլ անհետացավ: Նա իրենից նեղացած հեռացավ: Հրաչն աչքերին չէր հավատում: Կնոջ տեսիլքը... Այդ նա էր, իր Շուշանը՝ հիասքանչ տեսքով, խռովված հոգով, որն իրեն երագում էր հայտնվել և ում մասին առավոտյան շարունակում էր մտածել: Հետո գլուխն առնելով ավերի մեջ՝ մի պահ նստեց շենքի մուտքի մոտ դրված նստարանին: Ուզում էր հասկանալ, թե իրականում ինչ էր կատարվել իր հետ՝ Տաթևի մոտ: Չէ՞ որ գերազանց հիշում էր, որ ինքը սուրճ խմելուց առաջ գինովցած չէր: Իր Շուշանն, անկասկած, չէր սխալվում: Այդ չարաբաստիկ երեկոյի ընթացքում Տաթևը փորձում էր իրեն գայթակղել...

Մի քանի օր անց Տաթևը նորից զանգեց Հրաչին և հրավիրեց իր մոտ: Սակայն այս անգամ հեռու մնալով գայթակղությունից, ռեժիսորն ավելի սառը տոնով լսելով նրան՝ ասաց.

-Եթե կրկին ճաշի ես հրավիրում, չեմ կարող, գործեր ունեմ: Ինչու՞ ես ուզում ինձ տեսնել:
-Հանձնելու քեզ բանալիները: Արդեն վարձով հարմար բնակարան եմ գտել,- պատասխանեց Տաթևը:

-Օրվա վերջում կգամ ու կվերցնեմ,- ասաց Հրաչը և անջատեց հեռախոսը: Նա նույնիսկ չուզեց հարցնել, թե այդ երեկո իր հետ նա ինչ էր արել:

Սրտի խորքում նեղացած էր Տաթևից: Նա դեմ էր կանանց կողմից ընդունված խորամանկ քայլերին: Ամեն դեպքում գերադասում էր, երբ տղամարդն է ամեն կերպ ձգտում հասնել կնոջը, բայց ոչ երբեք հակառակը: Նա իսկապես ուրախացել էր, երբ Տաթևն իր համար աշխատանք էր գտել: Ասենք, թե այդ օրը նրա ցանկությամբ մի քանի բաժակ գինի էր ըմպել: Չէ՞ որ այդ ամենը մարդկային մոտեցում էր նրա հանդեպ: Այսինքն՝ հաճույքով կիսել դիմացինի ուրախությունը: Պարզվում է, որ կյանքն ուրիշ բան է ապացուցում: Այն է՝ ինչքան էլ տղամարդը փորձի զգուշանալ թակարդներից, նրան միշտ չէ հաջողվում շրջանցել դրանք: Գոյություն ունեն հասարակության մեջ ընդունված նուրբ վարվելաձևեր, որոնք ընդամենը բարոյագիտության սահմաններում են:

Երբ պայմանավորված ժամին Հրաչն իր տուն հասավ, Տաթևը բացեց դուռը: Այս անգամ նա շատ սովորական տեսք ուներ: Ո՛չ հատուկ հարդարվել էր, ո՛չ էլ առավել ևս՝ զարդարվել: Ստացվում էր, որ նա այլևս իրեն հրապուրել չէր ուզում:

Երբ մտավ հյուրասենյակ, տեսավ, որ նա մենակ չէր: Այնտեղ էին նաև երկու տղամարդ, որոնցից մեկը տարիքով էր, մյուսը՝ միջին տարիքի: Բարևելով նրանց, Հրաչը մեկնեց ձեռքը՝ անձանոթներից մեկին: Սակայն նրանցից տարիքով տղամարդը պինդ բռնելով Հրաչի օձիքից՝ կտրուկ գայրույթով դեպի իրեն քաշեց և թափահարեց Հրաչին:

-Բաց թող ինձ,- շվարած ասաց տանտերը:- Ո՞վ ես դու և ի՞նչ ես ուզում ինձնից:
 -Ես քեզ բաց չեմ թողնի, մինչև չասես, թե ինչու ես որոշել խաղալ քրոջս պատվի հետ:
 -Դուք թյուրիմացության մեջ եք: Այդպիսի բան չկա: Իզուր ինձ շանտաժ մի՛ արեք:
 -Այսինքն՝ քույրս խաբե՞լ է ինձ,- տղամարդը բաց թողնելով Հրաչի օձիքը՝ նայեց քրոջը:
 -Դուք նրա եղբա՞յրն եք,- զարմացած բացականչեց Հրաչը:
 -Այո՛: Չգիտեի՞ր, որ նա եղբայր ունի, որն ապրում է Երևանում:
 -Ո՛չ: Տաթևն ասել է, որ Երևանում բարեկամներ չունի: Բոլորը գյուղում են: Պարզվում է, որ...
 -Նա քույր էլ ունի, որը դարձյալ մայրաքաղաքում է ապրում,- նրա խոսքն ընդհատեց Տաթևի եղբայրը:
 -Այդ դեպքում ինչու՞ օգնության համար ձեզ չի դիմել,- զարմացավ Հրաչը:
 -Նա միշտ էլ ըմբոստ է եղել և ցանկացել է մենակ ապրել: Ամուսնուն էլ ծառայել չուզեց,- իր բողոքը չզսպեց եղբայրը:
 Հրաչը նայեց Տաթևին և հասկացավ, որ նա բավականին ստախոս և խորամանկ կին է: Այժմ արդեն համոզվեց, որ նախորդ անգամ իրականում նա փորձել է իրեն գայթակղել, հետո, չհասնելով իր նպատակին, քնաբեր է լցրել սուրճի բաժակի մեջ:
 -Դու՞ էլ հարմար պահ գտար զվարճանալ նրա հետ,- Հրաչին դիմեց Տաթևի եղբայրը:
 -Նման բան անգամ մտքովս չէր անցել:
 -Իսկ ի՞նչ կասես այս լուսանկարի մասին,- նա իր գրպանից հանելով մի լուսանկար՝ ցույց տվեց Հրաչին:
 Հրաչի բիբերը լայնացան իր տեսածից: Այնտեղ՝ անկողնում Տաթևի հետ ինքն էր քնած: Ուրեմն, նա այդ փոքր սցենարը նախապես պատրաստել էր, վերջում էլ՝ իրեն քնեցնելով նկարել ձեռքի հեռախոսով:
 -Ես անցած անգամ այստեղ եկա՝ քրոջդ հրավերով: Նա ինձ գինի հյուրասիրեց, հետո էլ՝ սուրճ: Ես նույնիսկ չուզեցի սուրճը խմել, բայց նրա համառության շնորհիվ դիրքերս զիջեցի: Ո՞վ կմտածեր, որ նա իրականում դավ էր նյութում իմ դեմ: Չէ՞ որ սուրճից հետո զգացի, որ քնել եմ ուզում: Այդ նա էր ամեն ինչ կազմակերպել,- Հրաչը մատնացույց արեց Տաթևին:- Այդ օրը դու այնքա՛ն անկեղծ էիր խոսում և այնքան բարի հայացք ունեիր: Ուրեմն, դեարասանություն ես արել: Ու՞մ էր պետք այդ բեմադրությունը: Գուցե եղբորդ ներկայությամբ ինձ բացատրե՞ս: Ի՞նչ նպատակով ես եղբորդ տվել այդ լուսանկարը: Ինձ խայտառակելու՞...
 -Ես նրան չեմ տվել: Նա ինքն է իմ ձեռքի պայուսակից հանել:
 -Այլևս չեմ հավատում քեզ: Ինչ էլ ասես, արժեք չունի: Միայն կարող եմ ամոթանք տալ քեզ արածիդ համար: Հիշի՛ր, թե ինչպես անձրևին քեզ դրսում չթողեցի և առանց ձանաչելու անձդ՝ իմ տուն բերեցի: Վերջում շանտաժո՞վ ես հատուցում երախտագիտությունդ:
 -Դե, ի՞նչ ես բերանդ ջուր առել, պատասխանի՛ր,- Տաթևին դիմեց եղբայրը, միաժամանակ զգալով, որ քույրն այս ամենը դիտմամբ է սարքել:
 -Չգիտեմ: Որպես հուշ ուզում էի այդ նկարն ունենալ ինձ մոտ,- ստեց Տաթևը:
 -Բայց դու երբեք իմ սիրած կինը չես եղել, որ հուշերի մասին մտածես: Ընդհակառակը, քո այդ պահվածքով քեզ ստորացնում ես բոլորիս աչքում,- վրդովված շարունակեց Հրաչը:- Տու՛ր հեռախոսդ ինձ:
 -Ի՞նչ է պատահել,- հարցրեց Տաթևը:
 -Տու՛ր ինձ, հիմա կբացատրեմ,- զայրացած ասաց Հրաչը և վերցնելով նրա հեռախոսը, վայրկենապես գտավ այնտեղ իր լուսանկարն ու իսկույն ևեթ ջնջեց այն: Հետո խնդրեց նրա եղբորը՝ իրեն տալ ձեռքի լուսանկարը: Այն բոլորի աչքի առջև պատառուտեց: Հանկարծ այնպես չստացվի, որ մի օր իրենից վրեժխնդիր լինելու համար այն տեղադրի համացանցում:

-Պարզվում է, որ դու գյուղից քաղաք ես տեղափոխվել, որպեսզի միայնակ տղամարդկա՞նց գայթակղես: Մտածիր, որ դու երեկվա աղջիկը չես,- քրոջը հանդիմանեց եղբայրը:- Դու մայր ես, երկու զավակների մայր: Ուշքի արի՛: Իմացիր, թե ինչ ես անում:

-Իսկ հիմա շորերդ վերցրո՛ւ և ազատի՛ր բնակարանս,- հրամայական տոնով դիմեց Հրաչը Տաթևին՝ գրպանից հանելով ծխախոտի տուփը:

Տաթևի եղբայրն իր հետ եկած ընկերոջ հետ հուսահատ առաջ անցան, և Տաթևն իր հսկայական ճամպուրուկը քարշ տալով՝ գլխահակ հետևեց նրանց: Նրա մտքով չանցավ ո՛չ ներողություն խնդրել կատարվածի համար, ո՛չ էլ շնորհակալություն հայտնել Հրաչին իրեն ժամանակավոր ապաստարան տալու համար:

Երբ նրանք դուռը շրխկոցով փակեցին, Հրաչը նստեց իր սիրած բազկաթոռին ու մինչև վերջ ծխելով ձեռքի գլանակը՝ հեռացավ: Նա ցնցված էր Տաթևի արարքից:

Ամանորի նախօրեին Սևակը մեկնեց Ամերիկա: Իսկ Սուրբ ծննդյան տոներից հետո Հրաչը նկարահանման մի քանի պատվերներ կատարեց: Նա չմոռացավ իր խոստումը՝ օգնել Հայկին: Նրան ներգրավելով իր աշխատանքների մեջ՝ զոհ մնաց Հայկի կարգապահությունից ու պարտաճանաչությունից: Այնուհետև երբ պլանավորեց Արցախյան պատերազմի հերոսների մասին վավերագրական ֆիլմ նկարահանել, Հայկին էլ նկարահանող խմբի հետ տարավ Արցախ: Այնտեղ նրանց դարձյալ դիմավորեց սցենարիստ Դավիթը, որի միջոցով էլ ձեռք բերվեցին վավերագրական- փաստագրական մի շարք նյութեր: Հանդիպեցին նաև ողջ մնացած Արցախյան հերոսների հետ: Մինչև մայիսի վերջը նա հասցրեց ավարտել նկարահանման և անգլերենով թարգմանության բոլոր աշխատանքները: Այդ ամենը, բնականաբար, արվեց ընկերոջ՝ Սևակի նյութական աջակցությամբ և պայմանավորվածության համաձայն՝ այն ուղարկվեց Ամերիկա:

Արդեն հունիսի սկզբներին նշելով Շուշանի մահվան տարելիցը, Հրաչը ցանկություն զգաց փոքր-ինչ հանգստանալու: Իսկ հանգստանալու լավագույն վայրը նրա համար ծովափն էր: Ահա ինչու նա մեկնեց Սոչի: Այդ օրերին նա չէր կարող չմեկնել նաև Ադլեր՝ որդուն տեսնելու: Նրա մորից՝ Օլյայից բաժանվելուց շուրջ ինը տարի էր անցել: Ոչ մի լուր չունեի նրանցից: Ճանապարհին նա նույնիսկ տագնապով մտածեց, որ չլինի, թե տունն էլ են փոխել: Բայց երբ տեղ հասավ, բոլոր տագնապներն անցան: Դուռը նրա առջև բացեց Օլյան: Հրաչը նկատեց, որ տարիների ընթացքում ավելի էր ընգծվել նրա տարիքը: Ճակատի վրա և շրթունքների անկյուններում կնճիռները խորացել էին: Նա իր աչքերին չէր հավատում:

-Կարելի՞ է ներս մտնել,- հարցական դեմքով Հրաչը նայեց ռուս կնոջը:

-Իհարկե: Համեցե՛ք:

-Մենա՞կ ես տանը, թե՞...

-Ո՛չ: Որդիս նույնպես տանն է: Միայն խնդրում եմ, միանգամից ոչինչ մի՛ ասա: Ես ուզում եմ նախապատրաստել նրան,- միջանցքում նրան զգուշացրեց Օլյան:

Հրաչը լուռ հետևեց նրան: Որդին՝ Դանիելը, նստած էր հեռուստացույցի առջև: Անծանոթ հյուրի ներս մտնելուն պես նա տեղից վեր կացավ, քաղաքավարությամբ բարևեց և մնաց կանգնած: Հրաչի մարմնով ջերմ ու հարազատ սարսուռ անցավ: Որդին արտաքինով ավելի շատ էր իրեն նման, քան Կարոն:

-Տղա՛ս, դու գնա՛ խոհանոց: Մենք խոսելիք ունենք:

Դանիելը կատարեց մոր ցանկությունը՝ իր ետևից փակելով դուռը:

-Այդ ո՞ր քամին է քեզ մեր կողմերը բերել,- խաղաղ տոնով հարցրեց Օլյան:

-Ինքս էլ չգիտեմ: Արձակուրդս վերցրի և մի քիչ հանգստանալու համար այս վայրերը եկա: Մտածեցի անպայման հանդիպել ձեզ: Էլի՞ նույն տեղում ես աշխատում՝ երաժշտական դպրոցում:

-Այո: Էլի դաշնամուրային դասեր եմ տալիս: Նաև տանը մասնավոր պարապմունքներ եմ անցկացնում: Իսկ դու, անկասկած, ընտանիք ունես, կին, երեխաներ:

Հրաչն այդ պահին միայն մտածեց, որ թե՛ Օլյան, թե՛ Շուշանը երաժշտական նույն կրթությունն ունեն ու թախիծով նայեց տանտիրուհուն:

-Ընտանիք ունեի: Կինս արդեն մեկ տարի է, ինչ մահացել է դժբախտ պատահարից: Ունեմ որդի, որը յոթ տարեկան է: Այս տարի տեղափոխվեց երկրորդ դասարան:

-Ընդունիր իմ ցավակցությունը: Չեմ կասկածում, որ ծանր ես տարել կնոջդ կորուստը:

-Ծանրն այն խոսքը չէ: Անգամ ինձ թվում էր, որ հոգեկան ճգնաժամն ի վիճակի չեմ հաղթահարելու: Բայց, փառք Աստծո, աստիճանաբար ուշքի եկա,- Հրաչը թեթևակի հուզվեց՝ ձեռքը տանելով դեպի գրպանը:- Իսկ հնարավոր է այստեղ ծխել, թե՞...

Օլյան զգաց, թե ինչքան ցավ ու ավստասանք կար նրա հայացքում, խոսքերում, շարժումներում, երբ Հրաչը հիշեց կնոջը: Եվ սրտի խորքում ավստաց, որ այդպես էլ կյանքում մեծ սիրո չհանդիպեց: Սակայն գոհ էր Հրաչից, որն իրեն որդի պարզեց: Ղանիելն էր իր կյանքի ողջ իմաստն ու նպատակը:

-Ոչինչ, ծխիր: Ես հիմա մոխրամանը կբերեմ,- և շրջվելով դռան մոտ՝ հարցրեց Հրաչին:- Գուցե սուրճ կամ թե՞ բերեմ:

-Սուրճ հաճույքով կխմեմ,- պատասխանեց նա և Օլյայի հեռանալուց հետո մտածմունքի մեջ ընկավ:

Նա հասկացավ, որ այդ ռուս կինն իր համար օտար էր, չափազանց օտար:

Մոխրամանի ետևից գնալով՝ Օլյան փոքր-ինչ ուշացավ՝ իր հետ բերելով տղային:

-Ծանոթացիր նրա հետ, որդիս,- մայրն ուզեց երեխայից թաքցնել ներքին շփոթմունքը:

-Իսկ ո՞վ է նա: Դու նրան վաղուց գիտես,- որդին վախվորած նայեց մորը:

-Նա քո հայրն է: Դու նրա մասին շատ ես հարցրել:

-Հա՞յրս,- հանկարծակիի եկավ տղան՝ ետ-ետ շարժվելով:

-Այո: Հայրդ:

-Իսկ որտե՞ղ էիր այսքան ժամանակ: Ինչու՞ ինձ երբեք չես հիշել,- Ղանիելը զայրացած նայեց Հրաչին:

-Միշտ էլ քեզ հիշել եմ: Միայն թե ես ապրում եմ ձեզնից հեռու՝ Երևանում: Այն Հայաստանի մայրաքաղաքն է: Լսե՞լ ես այդ քաղաքի մասին:

-Չեմ էլ ուզում լսել,- կոպտեց նրան տղան: -Դու հիմա ինչո՞ւ ես եկել այստեղ:

Հրաչը բառեր չէր գտնում որդուն ասելու կամ բացատրելու: Եվ ի՞նչ ասեր: Ճշմարտությունը: Այն մասին, որ նրա մորը չի՞ սիրել, որ վերջինս էլ տարիքի պատճառով ցանկություն հայտնեց մայրանալու: Արգելե՞ր նրա քայլը...

-Ղանիել, հորդ հետ այդ տոնով մի՛ խոսիր: Նա ընտանիք ունի: Հետո էլ դու եղբայր ունես: Մի օր էլ նրան կտեսնես,- մեղմ տոնով ասաց մայրը:

-Ես ոչ մեկին էլ տեսնել չեմ ուզում,- տղան վիրավորված թողնելով երկուսին՝ գնաց խոհանոց:

-Ստացվում է, որ չպիտի՞ գայի:

-Այդպես մի՛ ասա: Այսքան տարիներ հետո առաջին հանդիպումը հավանաբար նման կերպ պիտի լիներ: Համբերատար եղիր: Ես հիմա սուրճը կբերեմ:

-Այլևս չեմ ուզում,- Հրաչը ոտքի կանգնեց և ձեռքի նվերները հանձնելով Օլյային՝ հեռացավ:

Սակայն այդ օրվանից հետո նա հաճախ էր այցելում նրանց: Որդին աստիճանաբար ընտելացավ հորը: Նրա հետ հաճույքով գնում էին սրճարան, ծովափ, խաղահրապարակ, համերգասրահ: Իր գրույցներում Հրաչը փորձեց որդու մեջ ամրապնդել ինքնավստահությունը: Ավելին. խոստացավ այլևս չմոռանալ նրան և կապի մեջ լինել մշտապես: Որդու համար նաև համակարգիչ գնեց: Ղանիելը շատ ուրախացավ: Նա վաղուց էր այդ մասին երազել և չէր ուզում ետ ընկնել հասակակիցներից, մանավանդ որ լավ էր սովորում դպրոցում: Հրաչը տեսնում էր,

թե որդին ինչքան էր զգում իր կարիքը: Չէ՞ որ հոր և որդու հարաբերությունն առաջին հերթին երկու տղամարդու հարաբերություն է:

Այդ օրերին էր, երբ որդու հետ մի անգամ սրճարանում ծանոթացավ ազգությամբ ռուս կնոջ՝ Վալյայի հետ: Նա մասնագիտությամբ սոցիոլոգ էր, բայց սովորել էր հաշվապահություն և գլխավոր հաշվապահ էր աշխատում արտասահմանյան ֆիրմաներից մեկում: Վալյան Հրաչից մեծ էր յոթը տարով: Սակայն նա արտաքինով հմայիչ էր՝ ձերմակ մաշկով, կապույտ աչքերով և նուրբ դիմագծերով: Ինչ-որ ձգողական ու կախարդական բան կար նրա մեջ, որ Հրաչն իրեն ետ չպահեց նրա հետ մտերմանալու մտքից: Առաջին անգամ զգաց, որ Շուշանից հետո իր մեջ ցանկություն էր առաջացել հետաքրքրվել այդ գեղեցիկ սեռով: Սառույցը կարծես սկսել էր կոտրվել: Վալյային ծոնոթացրեց իր որդու հետ և միասին նրա աշխատանքային ընդմիջման ժամերին գնում էին ծովափ կամ որևէ սրճարան: Նույնիսկ Դանիելը հորը չէր խանդում, քանի որ Վալյան տղայի հանդեպ ջերմ էր և ուշադիր:

Օրերից մի օր էլ կինը Հրաչին իր տուն հրավիրեց: Տարիներ առաջ նրա ամուսինը մահացել էր: Նա հարբած վիճակում հայտնվել էր ծովում ու խեղդվել: Վալյան մի որդի ուներ, որը զորացրվելուց հետո ոչ մի տեղ չէր աշխատում: Վերջինս Հրաչին սվիններով ընդունեց իրենց տանը: Չափազանց խանդելով մորը, չէր ուզում, որ նա հետագայում դասավորեր իր անձնական կյանքը: Այսպիսով, նա դեմ էր ցանկացած կապի: Հրաչը չէր կամենում, որ իր պատճառով վատթարանար մոր և որդու միջև եղած հարաբերությունը: Բայց Վալյան համառություն ցուցաբերեց այդ հարցում: Այսինքն՝ որդին պետք է հաշտվեր այս ամենի հետ: Մոր նման քայլը որպես մարտահրավեր դիտվեց որդու համար: Ահա ինչու երբ Հրաչը երկրորդ անգամ այցելեց, նրա որդին պարզապես բռունցքով դիմավորեց նրան: Նա ուժեղ հարված հասցրեց ռեժիսորի դեմքին՝ արյունոտելով վերնաշապիկը: Այս միջադեպից հետո կտրականապես փոխվեց Վալյայի վերաբերմունքը որդու հանդեպ: Մի տան մեջ նրանք այլևս իրար հետ չէին շփվում, չէին խոսում: Նա գործակալներ վարձեց՝ վաճառելու իր երեք սենյականոց բնակարանը: Վալյան մտադիր էր որդուն մեկ սենյականոց տալ, իսկ ինքը ապրեր առանձին, ում հետ ուզենար, չուզենար էլ ամուսնանալ, գոնե առանց վախի զգացումի կարող էր կարգին ընկեր ունենալ: Որդին այս ամենից առերես թշնամացավ մոր հետ: Նա ոչ միայն ալկոհոլ էր օգտագործում, այլև՝ թմրանյութ: Նման վիճակով տուն էր վերադառնում կամ էլ ընկերներին էր իր հետ քարշ տալիս: Լաիրշորեն դատարկում էր սառնարանը մթերքներից և այլևս ոչինչ չէր թողնում այնտեղ մոր համար:

-Ավելի լավ կլինի, որ մենք այլևս չտեսնվենք,- վերջին հանդիպման ժամանակ ասաց Հրաչը:

-Ինչպե՞ս...Ուզում ես, որ ես հանձնվե՞մ:

-Բայց նա քո որդին է:

-Միայն այդքա՞նը:

-Մի՛ մոռացիր, որ ես ապրում եմ Երևանում և, միևնույն է, պետք է հեռանամ,- Հրաչը քնքշորեն բռնեց Վալյայի ձեռքը և համբուրեց:

-Նույնիսկ եթե բնակարանս վաճառեմ և առանձի՞ն ապրեմ: Դու այստեղ էլ կարող ես աշխատել, եթե ցանկանաս,- ռուս կինը բարյացակամորեն գլուխը դրեց Հրաչի կրծքին:

-Կտրուկ որոշումներ անել չեմ կարող,- ռեժիսորը չուզեց միանգամից մերժողական պատասխան տալ նրան: Այդ պատճառով ասաց այն, ինչ նա կցանկանար լսել:

-Ես քեզ ժամանակ կտամ մտածելու: Հնարավոր է, որ դու ուզենաս կյանքդ սկսել բոլորովին նոր էջից:

-Բայց որդիս կմնա ինձնից հեռու... Նա իմ կարիքն ունի:

-Մի որդի էլ այստեղ ունես: Կհարմարվե՞ս:

-Խնդրում եմ, ինձ մի՛ շտապեցրու, - Հրաչն զգաց, որ անիմաստ է նման խոսակցությունը շարունակել: Միևնույն է, նա ներքուստ համոզված էր, որ իր որոշումը չի փոխի: Առավել ևս ոչ մի կնոջ համար նա իր որդուց կյանքում չի բաժանվի:

Այդ հանդիպումից հետո Հրաչը Վալյային չտեսավ: Նա հիվանդացել էր և աշխատանքի չէր գնում: Հրաչը թեև օրվա մեջ մի քանի անգամ զանգում էր նրան, բայց ներքուստ անհանգիստ էր այն պատճառով, որ նրա որդին անտարբեր էր մոր հանդեպ: Բնականաբար, նրա մասին հոգ չէր տանում: Իսկ ինքն այդ օրերին այլևս այնտեղ գնալ չէր ուզում՝ Վալյայի տղայի հետ չընդհարվելու համար: Սակայն Երևան մեկնելուց մեկ օր առաջ նա հրաժեշտ տվեց որդուն՝ Ղանիելին, նրան նվիրելով իր ձեռքի հեռախոսը, իսկ հետո որոշեց անպայման Վալյային հանդիպել: Այդ գիշեր էլ նրան երագում Շուշանն այցի եկավ: Նույնիսկ խնդրեց նրան Վալյային չայցեցել և առաջին անգամ արտասվեց: Արթնանալով՝ Հրաչը խղճաց Շուշանին, մտածելով, որ նա իրեն շարունակում է խանդել «այն աշխարհից»: Չուզեց համաձայնվել այն մտքի հետ, որ սիրած կինն ավելի հաճախ հայտնվում է իրեն այն ժամանակ, երբ իրեն իրականում վտանգ էր սպառնում: Հրաչը փորձեց մոռանալ երագը և, այնուհանդերձ, ուզեց հանդիպել Վալյային: Նրա գործազուրկ որդին այդ օրը ոչ միայն տանն էր, այլև մենակ չէր: Այնտեղ էր ընկերը՝ նրա պես բարձրահասակ, թիկնեղ, հաղթանդամ: Երբ Հրաչը դռան զանգը սեղմեց, Վալյայի որդին բացեց այն և միանգամից սկսվեց ծեծկռտուքը: Նրան օգնության հասավ նույնպես թմրամոլ ընկերը: Հրաչն ավելի շատ պաշտպանվում էր հարձակումներից: Պահ եղավ, երբ նրանցից մեկը փայտի հարված հասցրեց ռեժիսորի գլխին: Հրաչն ուշագնաց ու արյունոտված դեմքով փռվեց հատակին: Վախենալով, որ նա կարող էր մեռնել, ջուր լցրին գլխին: Հրաչը բացեց աչքերը: Նա ընկած էր հատակին և ողջ մարմնով կծկվել էր գնդի պես՝ ֆիզիկական սուր ցավերի պատճառով: Նրանք մի փոքր սրբիչ տվեցին Հրաչին, որ մաքրեր դեմքի արյունը և հեռանար: Եվ գուցե փառք տար Աստծոն, որ ողջ էր մնացել:

Այդ ընթացքում Վալյան չերևաց: Չէ՞ որ նա ինչ-որ ձևով կկանխեր այդ բռնարարը: Հրաչը մի կերպ դուրս գալով այդտեղից, տաքսի կանգնեցրեց՝ հասնելով իր վարձով բնակարանը: Տանտիրուհին տեսնելով նրան, միանգամից օգնության հասավ: Հարևան բուժքրոջը խնդրեց նրա վերքերը մշակել: Իսկ ինքը գնաց որոշ դեղեր բերեց դեղատնից: Ամենից առաջ նրան ցավազրկող տվեց, քանի որ Հրաչի մարմինը տնքում էր անասելի ցավերից:

-Գուցե շտապ օգնությու՞ն կանչենք,- հարցրեց տանտիրուհին:

-Ո՛չ, պետք չէ: Ես վաղը տուն եմ վերադառնալու:

-Բայց եթե քեզ մոտ ներքին արյունահոսությու՞ն սկսվի, այդ դեպքում դու տեղ չես հասնի:

Նա տանտիրուհուն չասաց, որ Վալյայի որդուն ոստիկանության ձեռքը տալ չէր ուզում: Իսկ ինքը՝ Վալյան, շատ ուշ ժամի զանգեց տանտիրուհու հեռախոսահամարին: Չէ՞ որ Հրաչն իր ձեռքի հեռախոսը տվել էր որդուն: Վալյայից իմացավ ճշմարտությունը: Այն է՝ որդին պատշգամբից նկատել էր իրենց շենքին մոտեցող Հրաչին և նախապես բանալիով փակել էր մոր ննջասենյակի դուռը, որպեսզի վերջինս օգնության չհասներ:

Այդ վիճակով էլ Հրաչը հագիվհագ հասավ Երևան: Եղբոր՝ Անդրանիկի ուղեկցությամբ գնացին հիվանդանոց՝ հետազոտության: Պարզվեց, որ նա ուղեղի ցնցում էր ստացել, ջարդվել էին աջ կողոսկորներից մի քանիսը: Մարմնի վրա տեղ-տեղ պատռված և թարախակալած վերքերը մշակվեցին և համապատասխան դեղորայքներ նշանակեցին:

Հրաչը դարձյալ անկողին ընկավ: Դեռ շարունակում էին նվալ երիկամները՝ ստացած ուժեղ հարվածներից: Նա տնեցիներին ասաց, որ իբրև գրպանահատներն էին հարձակվել՝ վերցնելով դրամապանակը: Միայն Անդրանիկին պատմեց ճշմարտությունը: Նրանից չթաքցրեց նաև իր երագներում Շուշանի տեսիլքի մասին:

-Ուրեմն, նա քեզ զգուշացնում էր, որ ինքդ հեռու մնաս անմիտ քայլերից, այդ դեպքում ինչու՞ հաշվի չառար: Մանավանդ որ այդ ժուս կնոջ որդին չափազանց թշնամաբար էր տրամադրվել քո հաղեպ,- զարմացած հարցրեց կրտսեր եղբայրը:

-Ես սխալ էի: Հիմա երբ վերլուծում եմ արարքս, ապշում եմ իմ կատարած հանդուգն քայլից: Ախր նրանք երկուսով կարող էին սպանել ինձ, հետո էլ թաքցնել մարմինս: Այդպես էլ կվերջանար կյանքս, և որդիս բոլորովին որբ կմնար,- հուզվեց Հրաչը:

-Հանգստացիր: Ամեն ինչ ետևում է մնացել: Բայց այդ կինը ինչու՞ չպաշտպանեց քեզ:

-Որդին փակել էր նրան ննջասենյակում իր բանալիով:

-Եվ ի՞նչ ես որոշել անել: Նորի՞ց շարունակել պայքարդ:

-Ամենևին: Այս ամենն ինձ համար լավ դաս եղավ: Պարզապես սրտանց հրապուրվել էի նրանով: Վայան չափազանց կիրթ, հետաքրքիր կին էր՝ նուրբ շարժումներով, հագնվում էր ժամանակակից ոճով: Սակայն նրա հետ շփվելը՝ նշանակում է անվերջ պայքարի մեջ մտնել սադիստ և թմրամոլ որդու հետ:

Անդրանիկն ավագ եղբոր պատմածներից հասկացավ, որ նա իսկապես հավանել էր այդ կնոջը, թե չէ նման անմիտ համարձակության չէր դիմի:

Ներս մտավ մայրը՝ տիկին Նունեն, և հարցական նայեց որդիներին:

-Ինչի՞ կարիք ունեք: Գուցե ճաշե՞ք:

-Ո՛չ, մայրի՛կ: Հաճույքով կթեյենք, -նաև եղբոր փոխարեն պատասխանեց Անդրանիկը:

Մոր հեռանալուց հետո Հրաչը եղբորը դիմեց.

-Քո մասին պատմիր: Մայրիկն ինձ թեթևակի ակնարկեց հարսնացուիդ մասին: Այն, որ Աստղիկին իմ բացակայության ընթացքում բերել ես տուն, ծանոթացրել մերոնց հետ: Ղա արդեն լուրջ քայլ է: Նա արդեն աշխատու՞մ է:

-Այո՛: Երևի սեպտեմբերին նշանվենք, իսկ հետո մինչև Ամանորը կամուսնանանք,- Անդրանիկի դեմքով ոգևորության ու ինքնահաստատման ալիք անցավ:

-Եվ որտե՞ղ եք ուզում ապրել: Արդեն որոշե՞լ եք,- հարցրեց Հրաչը:

-Ո՛չ: Այդ որոշումը քեզնից է կախված:

-Իհարկե, քո սենյակը բռնագրավել եմ,- կատակեց Հրաչը: -Բայց դու մտահոգվելու խնդիր չունես: Ես քեզ կհանձնեմ իմ տան բանալիները: Դուք երկուսով այնտեղ կապրեք: Իսկ ես մենակ չեմ կարող ապրել որդուս հետ: Մեզ խնամող է պետք:

-Շնորհակալ եմ, եղբայրս,- գոհ ժպիտով պատասխանեց Անդրանիկը: - Թեկուզ մերոնց հետ էլ հաճույքով կապրեի:

-Պայմանավորվեցինք:

Մայրը երկուսի համար թեյ բերեց: Ներս մտավ որդին՝ Կարոն:

-Ի՞նչ կա, որդի՛ս:

-Ուզում եմ տեսնել, թե ինչ ես անում, հայրի՛կ: Ես հիմա համակարգիչով խաղեր եմ խաղում: Պապիկն էլ ինձ մոտ նստած է:

-Շատ լավ: Գնա՛, խաղա՛, որդի՛ս, սակայն մեկ ժամից ավել չնստես համակարգչի առաջ: Հիմա նայում եմ ժամացույցիս:

Կարոն գլուխն ուրախ շարժելով՝ հեռացավ: Այդ ընթացքում էլ տան հեռախոսահամարով Ամերիկայից գանգեց համակուրսեցի ընկերը՝ Սևակը: Նա ուրախությամբ հայտնեց, որ Հրաչի ֆիլմը ցույց է տվել որոշ մասնագետների, որոնք էլ հավանել են և ցանկություն հայտնել հանդիպել ռեժիսորի հետ: Ֆիլմի պրեմիերան նախատեսված էր աշնանը: Այնպես որ, Հրաչին հրավիրում էր Ամերիկա մեկնել: Հանկարծակի ցնծությունից Հրաչի սիրտն սկսեց արագ բաբախել: Հպարտ էր, որ իր ֆիլմը գնահատվեց: Ֆիլմ, որ նվիրված էր Արցախյան պատերազմի հայտնի և ոչ հայտնի հերոսներին, բոլոր նրանց, ովքեր նահատակվեցին հայրենիքի համար և ովքեր ողջ են մնացել՝ բարձր պահելով իրենց զինակիցների պատիվը: Իր ֆիլմը բովանդակությամբ նաև արդիական հնչեղություն ունի: Չէ՞ որ ոչ միայն Արցախն է գտնվում հարաբերական լռության մեջ, այլև ի վերջո ողջ աշխարհն է տարբեր տեսակի տարածայնությունների ու իրական բախումների հետևանքով հայտնվել պատերազմի շեմին: Եվ այս հողագնդի վրա ապրող բոլոր ազգերը պետք է համատեղ պայքար ծավալեն պատերազմների դեմ, «ոչ» ասեն ցեղասպանություններին, քանի որ աշխարհն ամբողջությամբ մեծ հասարակություն է:

Հրաչը մի պահ նորից ավստսաց, որ Շուշանն իր հետ չէր: Նա միացրեց Ֆրանց Շուբերտի «Սիրո մեղեդին» երաժշտությունը, ու այդ մեղեդու ներքո նրան մտքերը հեռու տարան: Համոզված էր, որ նա իր հաջողությամբ իրենից ավելի շատ կուրախանար: Եվ թեև ֆիզիկապես կինը չկար, բայց որպես սիրո հրեշտակ շարունակում էր ապրել իր կողքին: Նա անգամ մահվան աշխարհից հոգ էր տանում իր մասին՝ ցանկանալով իրեն հեռու պահել կյանքի վերահաս վտանգներից...